# ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ չորրորդ գործողությունների ծրագրի նախագիծ
# (2018-2020 թվականներ)

Երևան 2018

| 1. Պետական իշխանության մարմինների, ՏԻՄ-երի, պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների աուդիտորական ստուգումների արդյունքների հրապարակում: | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 10.7.2018-30.6.2020 |
| Լիազոր մարմինը | | ՀՀ կառավարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Ֆինանսների նախարարություն |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Արդարադատության նախարարություն, ՊԵԿ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Հանրային միջոցների թափանցիկությամբ զբաղվող ՔՀԿ-ներ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | **Պետական իշխանության մարմինների, ՏԻՄ-երի, պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների աուդիտորական ստուգումների արդյունքները հանրությանն անհայտ են մնում, հանրությունը չի իմանում, թե ինչեր են բացահայտվել պլանային և արտապլանային աուդիտորական ստուգումների արդյունքում: Այդով չի կարողանում ազդել հանրային միջոցների ծախսումների արդյունավետության վրա: Կա նաև կասկած ինչ-ինչ ստուգումների ժամանակ բացահայտված չարաշահումներին կոծկումների մասին** |
| Հիմնական նպատակը | | Հանրությանը բացահայտել հանրային միջոցների ծախսումների մասին բացահայտումները: Դրանով խթանել ավելի արդյունավետ ծախսումները: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | Փոփոխություններ կատարել աուդիտին վերաբերվող |

| | |
|---|---|
| | օրենսդրության մեջ այն հաշվով, որ բեռ դրվի հանրային միջոցներ օգտագործող և աուդիտի ենթարկված կազմակերպությունների վրա, հրապարակել աուդիտների արդյունքները:<br>Ստեղծել վիրտուալ հարթակ այդ եզրակացությունները հրապարակելու համար: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում:<br>Հանրային վստահության բարելավում: |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | ԲԿԳ 4 սկզբունքներից առնվազն 3-ին համահունչ է այդ գործողությանը: Խոսքը թափանցիկության և հաշվետվողականության մասին է, ինչպես նաև նորարարությամբ և տեխնոլոգիաների գործածմամբ հասանելիության և հաշվետվողականության բարձրացմանը: |
| Հավակնություն | 10-ից 9 միավոր |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի  չափանիշներ | Ավարտի օր |
|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի նախագծի մշակում | Հուլիս, 2018<br>Հոկտեմբեր 2018 |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի ընդունում | Նոյեմբեր 2018<br>Մարտ 2019 |
| Վիրտուալ հարթակի ստեղծում | Հուլիս 2018<br>Մարտ 2019 |
| | |

| | | |
|---|---|---|
| **2. Պետական և համայնքային թանգարանների և պատկերասրահների գույքացանկի և թանգարանային առարկաների ցանկերի հրապարակում:** | | |
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 10.7.2018-30.6.2020 |
| Լիազոր մարմինը | | ՀՀ մշակույթի նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | info@mincult.am |
| Հեռախոսահամարը | | 010 529349 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Պետական թանգարաններ և պատկերասրահներ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Մշակութային արժեքներով զբաղվող ՔՀԿ-ներ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | ՀՀ պետական և համայնքային թանգարանների և պատկերասրահների գույքն ու թանգարանային առարկաների ցանկը հիմնականում անհայտ է հանրությանը: Քաղաքացիները ստիպված են այդ ցանկերին ծանոթանալու համար դիմել դատարաններ: Հաշվի առնելով, որ այդ ցանկերը և առարկաները հանրային սեփականություն են, հարկավոր է լիակատար հնարավորթյուն ընձեռել ՀՀ քաղաքացիներին՝ ծանոթանալու այդ ցանկերին և պահել հսկողությն տակ այդ տեղեկությունները: |
| Հիմնական նպատակը | | Հրապարակել պետական և համայնքային թանգարանների և պատկերասրահների գույքացանկն ու թանգարանային առարկաների ցանկերը |
| Պարտավորության հակիրճ | | Ստեղծվում է միասնական վիրտուալ հարթակ, որում բաժիններով |

| | | | |
|---|---|---|---|
| նկարագրությունը | հրապարակվում են պետական և համայնքային թանգարանների և պատկերասրահների գույքացանկն ու թանգարանային առարկաների ցանկերը: Հրապարակման պարտականությունը որպես այդպիսին լրացվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում: | | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում: Հանրային վստահության բարելավում: Հանրային ունեցվածքի չարաշահման ռիսկի նվազեցում: | | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | ԲԿԳ 4 սկզբունքներից առնվազն 3-ին համահունչ է այդ գործողությանը: Խոսքը թափանցիկության և հաշվետվողականության մասին է, ինչպես նաև նորարարությամբ և տեխնոլոգիաների գործածմամբ հասանելիության և հաշվետվողականության բարձրացմանը: | | |
| Հավակնություն | 10-ից 9 միավոր | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | | |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի նախագծի մշակում | | Հուլիս, 2018 | Հոկտեմբեր 2018 |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի ընդունում | | Նոյեմբեր 2018 | Մարտ 2019 |
| Վիրտուալ հարթակի ստեղծում | | Հուլիս 2018 | Մարտ 2019 |
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| **3. Պետական և համայնքային բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների և պետական իշխանության մարմինների և ՏԻՄ-երի ծառայողական հեռախոսների, համացանցային կապի, ճանապարհային, գործուղումների ծախսերի ամսական հրապարակումներ** | | | |
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 10.7.2018-30.6.2020 | |
| Լիազոր մարմինը | | Ֆինանսների նախարարություն/ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | | |
| Պաշտոնը, վարչությունը | | | |
| Էլ. հասցեն | | press@minfin.am | |
| Հեռախոսահամարը | | 011-800-156 | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Արդարադատության նախարարություն, ՊԵԿ | |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Հանրային միջոցների թափանցիկությամբ զբաղվող ՔՀԿ-ներ | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | **Պետական իշխանության մարմինների, ՏԻՄ-երի, պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների կատարած ծախսերի մի փունջը մնում է հանրությունից գաղտնի: Հանրություն հնարավորություն չունի իմանալու այդ մարմինների և կազմակերպությունների** ծառայողական հեռախոսների, համացանցային կապի, ճանապարհային, գործուղումների ծախսերի մանրամասները: **Արդյո՞ք այդ միջոցները ծախսվում կամ չարաշահվում են անձնական կարիքների համար, մտահոգությունը անհանգստացնում է ՔՀԿ-ներին, և վկայություններ կան որ այդ միջոցները տարբեր մակարդակներում անձնական շահի համար են չարաշահվում:** | |

| | |
|---|---|
| | **Հանրությունն իրավունք ունի իմանալ և վերահսկել այդ միջոցների ծախսը:** |
| Հիմնական նպատակը | Հանրությանը բացահայտել **պետական իշխանության մարմինների, ՏԻՄ-երի, պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների կատարած ծախսերը** ծառայողական հեռախոսների, համացանցային կապի, ճանապարհային, գործուղումների ծախսերի մասով: Դրանք հրապարակելով միասնական վիրտուալ հարթակում: Դրանով կնվազեցվեն չարաշահումները և կխթանվի ավելի արդյունավետ օգտագործումը: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Փոփոխություններ կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում և այլ օրենքներում, այն հաշվով, որ բեռ դրվի **պետական իշխանության մարմինների, ՏԻՄ-երի, պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների կատարած** ծառայողական հեռախոսների, համացանցային կապի, ճանապարհային, գործուղումների ծախսերի մանրամասները ամսական պարբերականությամբ հրապարակելու համար: Ստեղծել միասնական վիրտուալ հարթակ այդ հրապարակումների համար: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում: Հանրային վստահության բարելավում: Հնարավոր չարաշահումների նվազեցում և բացառում: |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | ԲԿԳ 4 սկզբունքներից առնվազն 3-ին համահունչ է այդ գործողությանը: Խոսքը թափանցիկության և հաշվետվողականության մասին է, ինչպես նաև նորարարությամբ և տեխնոլոգիաների գործածմամբ հասանելիության և հաշվետվողականության բարձրացմանը: |
| Հավակնություն | 10-ից 8 միավոր |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի նախագծի մշակում | Հուլիս, 2018 | Հոկտեմբեր 2018 |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի ընդունում | Նոյեմբեր 2018 | Մարտ 2019 |
| Վիրտուալ հարթակի ստեղծում | Հուլիս 2018 | Մարտ 2019 |
| | | |

| **4. «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրում ՏԻՄ պաշտոնյաների և ՏԻՄ ավագանու անդամների մի խմբի եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգի ներդրում:** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 10.7.2018-30.6.2020 |
| Լիազոր մարմինը | | Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | Ֆինանսների նախարար |
| Էլ. հասցեն | | armen.khudaverdyan@ethics.am |
| Հեռախոսահամարը | | 010580795 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ կառավարության աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | «Հետք» և ԹԻՀԿ ՀԿ-ներ, իրենց համաձայնությամբ: |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | ՀՀ համայնքային պաշտոնյաների և ավագանու անդամների գույքը և ունեցվածքը, |

| | | |
|---|---|---|
| | բացառությամբ Գյումրի, Երևան և Վանաձոր քաղաքների համայնքների ղեկավարների, անհայտ են հանրությանը: Բազմաթիվ բնկայություններ կան այն բանի, որ համայնքային բյուջեները տնօրինող պաշտոնյաները և ավագանու անդամները շահերի բախումների մեջ են հանրային շահի հետ և/կամ չհիմնավորված կերպով հարստանում են: | |
| Հիմնական նպատակը | Հանրությանը բացահայտել 10.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, տեղակալների, աշխատակազմերի ղեկավարների, բաժինների պետերի և ավագանու բոլոր անդամների գույքը և ունեցվածքը: Դա անել տարեկան պարբերականությամբ, www.ethics.am կամ մեկ այլ հարթակում: | |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Ներդնել 10.000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարների, տեղակալների, աշխատակազմերի ղեկավարների, բաժինների պետերի և ավագանու բոլոր անդամների գույքի և ունեցվածքի տարեկան հայտարարագրման համակարգ: Դրա համար ստեղծել վիրտուալ հարթակ կամ զարգացնել www.ethics.am համակարգը: | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային օրինավորության խթանում | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Տեղեկատվության մատչելիության և հաշվոտվողականության ու հանրային հսկողության խթանում: | |
| Հավակնություն | 10-ից 8 միավոր | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի նախագծի մշակում | Հուլիս, 2018 | Հոկտեմբեր 2018 |
| Օրենսդրության փոփոխությունների փաթեթի ընդունում | Նոյեմբեր 2018 | Մարտ 2019 |
| Վիրտուալ հարթակի ստեղծում կամ www.ethics.am համակարգի զարգացում | Հուլիս 2018 | Մարտ 2019 |

| 5. Պետական բյուջեի մշակման մասնակցայնության ապահովում | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | Սկիզբը 2018թ. Հուլիս – ավարտը՝ 2019թ. ապրիլ |
| Լիազոր մարմինը | | Վարչապետի աշխատակազմ |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Աշխատակազմի ղեկավար նախարար |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | yeghegnadzorcenter@gmail.com |
| Հեռախոսահամարը | | (+374)98 06 56 23 |
| Այլ շահագրգիռ մարմիններ<br><br>**Ներդրում իրականցնողները, Բիզնեսմեններ, Միջազգային կազմակերպություններ** | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Պետական իշխանության մարմիններ, պետական բյուջեից ֆինանսավորվող բոլոր կազմակերպությունները, ՏԻՄ և ՏԻՄ բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Ոլորտային ՀԿ-ներ, նախաձեռնող խմբեր |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Պետական բյուջեի նախագծի մշակումը նվազ հանրային մասնակցություն ունի, քան հարկավոր է արդյունավետ կառավարման համար |
| Հիմնական նպատակը | | Պետական բյուջեն մշակվի հանրային մասնակցությամբ, հանրության տարբեր խմբերի գործուն մասնակցությամբ |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | Օրենսդրությամբ սահմանել, որ պետական բյուջեի նախագիծը պետք դրվի հանրային քննարկման բոլոր մարզկենտրոնում և Երևանում առնվազն 2-ական անգամ: Տարեկան ընդամենը 22 հանրային քննարկում պիտի ամրագրվի օրենսդրությամբ: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Հանրային մասնակցայնություն |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | | Համապատասխանում է ԲԿԳ արժեքներին, քանի որ ներառում է |

| | | | |
|---|---|---|---|
| | հանրային մասնակցայնության բաղադրիչը | | |
| Հավակնություն | Բարձր. 10-ից 8 միավոր | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | | |
| Օրենքի նախագծի մշակում ընդունում | | 2018թ. հուլիս | 2018թ. սեպտեմբեր |

| 6. Հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծում | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br>2018 թվական հունիս– 2019 թվական հունվար | | Նոր հանձնառություն |
| Լիազոր մարմինը | | ՀՀ արդարադատության նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Աննա Հարությունյան |
| Պաշտոնը, վարչությունը | | ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Էլեկտրոնային արդարադատության և ինովացիոն ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ |
| Էլ. հասցեն | | harutyunyanannag@gmail.com |
| Հեռախոսահամարը | | + 374 10 59 41 59 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ կառավարության աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Ներդաշնակ զարգացում ՀԿ (համաձայնությամբ), Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում յուրաքանչյուր անձ |

| | |
|---|---|
| | իրավունք ունի հանրային նշանակություն ունեցող հարցերով ներկայացնել գրություն, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության թերությունների մասին հաղորդում կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության բարելավման, տնտեսական, քաղաքական, սոցիալական և հասարակական կյանքի այլ ոլորտների վերաբերող հարցերի կարգավորման կամ գործող իրավակարգավորումների կատարելագործման վերաբերյալ առաջարկություն: Միաժամանակ վերը նշված օրենքով որպես հանրագրերի ներկայացման եղանակ առանձնացվում է ինչպես գրավոր ձևը, այնպես էլ էլեկտրոնային եղանակը: Ըստ այդմ, սահմանադրորեն ամրագրված այս իրավունքի իրացումը առավել արդյունավետ և երաշխավորված կլինի հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծման արդյունքում: |
| Հիմնական նպատակը | Հանրագրեր ներկայացնելու արդյունավետ գործընթացի ապահովում, հանրագրերի քննարկման բաց, հաշվետու և թափանցիկ գործընթացի ապահովում, պետական մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում, պետական կառավարման բարելավում, պետություն-մասնավոր հատված համագործակցության խթանում |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Կստեղծվի հանրագրեր ներկայացնելու էլեկտրոնային միասնական հարթակ |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային վստահության բարելավում, հանրային օրինավորության խթանում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Հարթակի ստեղծումը կհանգեցնի պետական մարմինների գործունեության թափանցիկությանը, հաշվետվողականությանը, մասնակցային ժողովրդավարության և նորարարության խթանմանը |
| Հավակնություն | Հարթակի ստեղծումը կապահովի կապահովիի պետական մարմինների |

| | | | |
|---|---|---|---|
| | գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | | |
| Տեխնիկական առաջադրանքի մշակում | | 2018 թ. հունիս | 2018 թ. օգոստոս |
| Հարթակի փորձարկում | | 2018 թ. սեպտեմբեր | 2018 թ. նոյեմբեր |
| Հարթակի ներդրում և գործարկում | | 2018 թ. դեկտեմբեր | 2019 թ. հունվար |

<table>
<tr><th colspan="3">7. Հանրային իրազեկման արշավի բազմակողմանի և համապարփակ ծրագիր մշակելու վերաբերյալ</th></tr>
<tr><td colspan="2">Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները</td><td>2018-2020 թվականներ</td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմինը</td><td>ՀՀ արդարադատության նախարարություն</td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմնի պատասխանատու անձը</td><td>Մարիամ Գալստյան</td></tr>
<tr><td colspan="2">Պաշտոնը, վարչությունը</td><td>Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ</td></tr>
<tr><td colspan="2">Էլ. հասցեն</td><td>Mariam.galstyan@justice.am</td></tr>
<tr><td colspan="2">Հեռախոսահամարը</td><td>010594022</td></tr>
<tr><td rowspan="2">Այլ շահագրգիռ մարմիններ</td><td>Այլ շահագրգիռ պետական մարմիններ</td><td>ՀՀ կառավարության աշխատակազմ</td></tr>
<tr><td>Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված</td><td>Լրատվավերլուծական խումբ ՍՊԸ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն ՀԿ</td></tr>
<tr><td colspan="2">Կարգավորման ենթակա խնդիրը</td><td>Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանում իրականացվում են բազմաթիվ քայլեր, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ, նորարար լուծումներ: Այնուամենայնիվ, հանրությունը քաջատեղյակ չէ այդ քայլերի վերաբերյալ: Քաղաքացիները թերի են տեղեկացված տարբեր ոլորտներում իրենց իրավունքների, պարտականությունների, պետության կողմից ստեղծված նորարար գործիքների և դրանց օգտագործման եղանակների վերաբերյալ: Այս հանգամանքը խաթարում է քաղաքացիների՝ իրենց իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունը և ինքնին դանդաղեցնում է կոռուպցիայի դեմ պայքարում շոշափելի արդյունքների նվաճումը:<br>Ուստի, անհրաժեշտ է մշակել հանրային իրազեկման արշավի բազմակողմանի և համապարփակ ծրագիր՝ ուղղված հանրության իրազեկմանը հակակոռուպցիոն գործիքների վերաբերյալ: Արդյունքում, քաղաքացիները քաջատեղյակ կլինեն իրենց իրավունքների, պարտականությունների վերաբերյալ, կկարողանան օգտագործել էլեկտրոնային կառավարման գործիքներ, մշտադիտարկել</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | կառավարության և տարբեր պետական մարմինների աշխատանքի ընթացքը: |
| Հիմնական նպատակը | Հանրային իրազեկում, հանրության տեղեկացվածության և իրավագիտակցության մակարդակի աճ: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Կմշակվի հանրային իրազեկման արշավի բազմակողմանի և համապարփակ ծրագիր՝ ուղղված հանրության իրազեկմանը հակակոռուպցիոն գործիքների վերաբերյալ: Ծրագիրը կներառի հանրային կառավարման բոլոր ոլորտներում հակակոռուպցիոն գործիքների մասին տեղեկատվություն: ՀՀ վարչապետի հանձնարարականի տեսքով Ծրագիրը կուղարկվի բոլոր հանրապետական գործադիր մարմիններին՝ իրենց իրավասությանը վերաբերող կետերն իրականացնելու համար: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Պետական ռեսուրսների արդյունավետ կառավարման և հանրային օրինավորության մարտահրավերներ |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Միջոցառման իրականացումը կապահովի պետական մարմինների գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը, հանրային բարձր մասնակցությունը, նորարար գործիքների օգտագործման բարձր աստիճանը: |
| Հավակնություն | Հանրային իրազեկման արշավը հավակնում է դառնալ պետության կողմից հանրության տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հիմնական միջոցառումներից մեկը: Դրա արդյունքում տարբեր խողովակներով հանրության բոլոր շերտերին կհասցվի տեղեկատվություն՝ նպաստելով նրանց առավել պահանջատեր և տեղեկացված դառնելուն: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում | Մայիսի 1, 2018 | Սեպտեմբերի 30, 2018 |

| | | |
|---|---|---|
| Հանրային իրազեկման արշավի ծրագրի իրականացում | Հոկտեմբերի 1, 2018 | Դեկտեմբերի 30, 2020 (շարունական) |

| **8. «Թափանցիկ ստուգում» ստուգումների էլեկտրոնային հավելվածի ստեղծում և ներդնում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | Նոր հանձնառություն |
| Լիազոր մարմինը | | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին (այսուհետ՝ տեսչական մարմին) |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Արմեն Հակոբյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ |
| Էլ. հասցեն | | armen.hakobyan@mnp.am |
| Հեռախոսահամարը | | + 374 11 818 587 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ կառավարության աշխատակազմ, այլ տեսչական մարմիններ և տեսչական մարմինների վերահսկման ոլորտի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմիններ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Հասարակական կազմակերպություններ, տնտեսավարող սուբյեկտներ |

| | |
|---|---|
| Կարգավորման ենթակա խնդիրը | Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տեսչական բարեփոխումների հայեցակարգի շրջանակներում տեսչական մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համաձայն, իսկ ստուգումներն իրականացնում են բացառապես «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի միջոցով, ըստ որի ստուգում իրականացնող մարմինը ստուգումները նպատակաուղղում է դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են: Տեսչական մարմնի նպատակն է շրջակա միջավայրի պահպանումը և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումը: Տեսչական մարմինն իր վերահսկողության ոլորտներում իր նպատակներն ու խնդիրներն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է վերահսկողական գործառույթներ, որոնց իրագործման առնչությամբ առկա են խնդիրներ՝ կապված որակի ապահովման, թափանցիկության, անկողմնակալության և հաշվետվողականության հետ, իսկ դրանց նվազեցման համար անհրաժեշտ է առավելագույնս պարզեցման, հստակեցման և հասանելիության սկզբունքով ներդնել էլեկտրոնային ստուգումների համակարգ: |
| Հիմնական նպատակը | Ստեղծել էլեկտրոնային «Թափանցիկ ստուգում» հավելված, որը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությունում ձևավորելու ստուգումների իրականացման քաղաքակիրթ նոր մշակույթ և մոտեցում, ինչն էլ կնպաստի՝<br>1) կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը՝ հիմնված թափանցիկ տեսչական գործընթացի սկզբունքի վրա,<br>2) տեսուչ-տնտեսավարող փոխհարաբերությունների էական բարելավմանը՝ հիմնված անկողմնակալության սկզբունքի վրա, |

| | |
|---|---|
| | 3) տնտեսավարող սուբյեկտների համար բնապահպանական վերահսկման ոլորտը կարգավորող իրավական ակտերի և ընթացակարգերի մատչելիությանը և հասանելիությանը՝ հիմնված հրապարակայնության սկզբունքի վրա,<br>4) ստուգումների համակարգի էլեկտրոնային բազայի ձևավորմանը, հիմնված հետևողականության և ամբողջականության սկզբունքի վրա,<br>5) բողոքարկման արդյունավետ և իրատեսական մեխանիզմների ներդրմանը: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների գործընթացի թափանցիկության, արժանահավատության և մատչելիության մակարդակի բարելավում՝ հավանական կոռուպցիոն ռիսկերի բացառման սկզբունքի հիման վրա: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային վստահության բարելավում<br>Հանրային ռեսուրսների (մարդկային, նյութական և ֆինանսական) արդյունավետ կառավարում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | «Թափանցիկ ստուգում» սկզբունքի կիրառմամբ՝ առցանց ձևաչափով պետական վերահսկողության իրականացումը նպաստում է նորարարության և տեխնոլոգիաների գործածմամբ վարչարարության և հաշվետվողականության բարձրացմանն ու շարունակական կատարելագործմանը: |
| Հավակնություն | Ստուգումների իրականացման առավել թափանցիկ և արդյունավետ մեխանիզմների ներդնում, ռիսկերի կառավարում, վարչարարության նվազեցում, բնապահպանական վերահսկողական հիմնախնդիրների լուծման գործընթացում հասարակայնության մասնակցության ապահովում:<br>Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթի լիարժեք ծածկույթն ապահովելու նպատակով կներդրվի նաև էլեկտրոնային վարչական վարույթի բաղադրիչը: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| 1. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության իրականացում: | 2018թ.<br>հուլիս | 2018թ.<br>սեպտեմբեր |
| 2. Տեխնիկական առաջադրանքի մշակում և գնումների գործընթացի անցկացում: | 2018թ.<br>սեպտեմբեր | 2019թ.<br>ապրիլ |
| 3. «Թափանցիկ ստուգում» հավելվածի ստեղծում և գործարկում: | 2019թ.<br>մայիս | 2020թ.<br>հունվար |
| 4. Տեսուչների ուսուցման կազմակերպում և իրականացում: | 2020թ.<br>փետրվար | 2020թ.<br>մայիս |

| **9. Ջրային ռեսուրսների պետական կադաստր. Ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | Հունվար 2018թ.-Հունիս2020թ. |
| Լիազոր մարմինը | | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Հրանտ Զաքարյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ջրային ռեսուրսների կադաստրի վարման մոնիտորինգի և բաժնի պետ |
| Էլ. հասցեն | | hrant.zakaryan@mnp.am |
| Հեռախոսահամարը | | +37411 818 543 |
| Այլ շահագրգիռ | Այլ շահագրգիռ | ՀՀ կառավարության աշխատակազմ, համապատասխան պետական |

| | | |
|---|---|---|
| մարմիններ | պետական մարմիններ | կառավարման մարմիններ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Հասարակական կազմակերպություններ, տնտեսավարող սուբյեկտներ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | -Ջրային ռեսուրսների պետական կադաստրի թարմացում,<br>-շահագրգիռ կազմակերպություններում առկա տվյալների բազաների և ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության տվյալների շտեմարանի միջև կապի ստեղծում: |
| Հիմնական նպատակը | | -Բարելավել ջրային ոլորտի կառավարման կարգավորման արդյունավետությունը՝ ապահովելով ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը բնապահպանական և տնտեսական առումներով,<br>-բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը և մասնակցությունը ջրային բնագավառում որոշումների կայացման խնդրում: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը վարում է ջրային ռեսուրսների պետական կադաստրը, ինչն իրենից ներկայացնում է տեղեկատվական համակարգ: Ներկա դրությամբ, աշխատանքներ են տարվում ջրային ռեսուրսների պետական կադաստրի թարմացման ուղղությամբ, և թարմացումից հետո ջրային ռեսուրսների պետական կադաստրի ամբողջական տվյալները, բացառությամբ ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների տեղադրվելու են համապատասխան ինտերնետային կայքում, որից կարող են անվճար օգտվել բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձինք: Միաժամանակ, համապատասխան ծրագրի ապահովման դեպքում ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործառույթը ևս հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային եղանակով: |

| | | | |
|---|---|---|---|
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ծառայությունների բարելավում, հանրային օրինավորության խթանում: | | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն և ներդրումը տեղեկատվության հասանելիության տեսանկյունից կարևոր խթան կհանդիսանա ոլորտի թափանցիկության և հանրային ծառայությունների մատուցման բարելավման տեսանկյունից: | | |
| Հավակնություն | Ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման առավել թափանցիկ և արդյունավետ մեխանիզմների ներդրնում, ռիսկերի կառավարում, վարչարարության նվազեցում, ջրային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրների լուծման գործընթացում հասարակայնության մասնակցության ապահովում: | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| Ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատավական բազայի թարմացման տեխնիկական առաջադրանքի վերանայում | | Հունվար 2018թ. | Մարտ 2018թ. |
| Ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատվական բազայի համապատաս-խանեցում ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 2-ի N 68-Ն որոշմամբ սահմանված պահանջներին | | Մարտ 2018թ. | Հունիս 2018թ |
| Ջրային ռեսուրսների պետական կադաստրի աղյուսակային և տարածական բաղադրիչների միջև կապերի ստեղծում | | Հունիս 2018թ | Սեպտեմբեր2018թ. |
| Ջրային ռեսուրսների միասնական տեղեկատվական շտեմարանի ձևավորում | | Սեպտեմբեր2018թ | Դեկտեմբեր2018թ. |
| Ջրային ռեսուրսների պետական կադաստրի նոր տեղեկատվական բազայի գործարկում | | | Շարունակելի |

| 10. **Հայաստանի արտաքին վարկային միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ ապաագրեգացված տվյալների ինտերակտիվ հարթակի ստեղծում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | |
| Լիազոր մարմինը | | Ֆինանսների նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| էլ. հասցեն | | lusine.tovmasyan@gov.am |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Պետական կառավարման մարմիններ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | ՏՏ կազմակերպություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի ծավալը կազմել է 4,021.0 մլն ԱՄՆ դոլար: Միաժամանակ, վարկային միջոցների ծախսի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն բաց տվյալների սկզբունքին համապատասխան հասանելի չէ հանրությանը կամ հասանելի է մասնակիորեն և սփռված տարբեր մարմինների կայքերում: |
| Հիմնական նպատակը | | Գործընկեր երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված նպատակային վարկային միջոցներով իրականացվող ծրագրերի, ծրագրային ուղղությունների, ծրագրերի շրջանակներում իրականացված միջոցառումների, ինչպես նաև վարկերի տրամադրման ժամկետների, տոկոսադրույքների, վարկերի մայր գումարների և տոկոսավճարների վճարման վերաբերյալ ամբողջական և ապաագրեգացված (disaggregated) |

| | | |
|---|---|---|
| | տեղեկատվության հրապարակում: | |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Ինտերակտիվ հարթակի ստեղծում, որտեղ առավելագույն կարճ ժամանակահատվածում (ամսական) համապատասխան մարմինները կտեղադրեն տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում արտաքին վարկային միջոցներով իրականացվող ծրագրերի, տրամադրված տրանշերի, ծրագրային միջոցառումների իրականացման փաստացի ծախսերի, դրանցում պետական մասնակցության չափի, միջոցառումների համառոտ նկարագրության, չափելի արդյունքային ցուցանիշների վերաբերյալ իրականացվող յուրաքանչյուր ծրագրի կտրվածքով:<br>Հարթակում կտեղադրվեն տվյալներ նաև ըստ վարկատուների վարկերի չափերի, տրամադրման ժամկետների, տոկոսադրույքների, վարկերի մայր գումարների և տոկոսավճարների վճարման, բյուջետային աջակցության վարկերի, մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ, կտեղադրվեն վարկային համաձայնագրերի և այլ համապատասխան իրավական ակտերի հղումները:<br>Տվյալները պետք է հրապարակվեն բաց տվյալների սկզբունքին համապատասխան: | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Թափանցիկություն,<br>Հանրային մասնակցություն | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Կմեծանա ներգրավված վարկային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և մատչելիությունը, կապահովվի առավել բարձր հանրային հաշվետվողականություն: | |
| Հավակնություն | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | |

| | | |
|---|---|---|
| Պատասխանատու մարմինների և վարկային ծրագրերի քարտեզագրում, հարթակում ներկայացվող տվյալների շրջանակի և ձևաչափի հաստատում | | |
| Առցանց հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակում | | |
| Առցանց հարթակի մշակում և գործարկում | | |
| *Պարտավորության ֆինանսական հաշվարկը | | |

| 11. Իրական սեփականատերերի բաց ռեգիստրի ստեղծում | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 2018թ. հոկտեմբեր - 2020թ. դեկտեմբեր |
| Լիազոր մարմինը | | ՀՀ արդարադատության նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ,<br>«Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» Հակակոռուպցիոն Կենտրոն,<br>Իրավաբանների Հայկական Ասոցիացիա ՀԿ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Թեև ՀՀ օրենսդրությունն արգելում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչի համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված է քրեական պատասխանատվություն, սակայն իրավաբանական անձանց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը գործնականում կարող է հանգեցնել նշված պահանջի խախտմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի կոռուպցիայի տարածմանը:<br>Հայաստանի նոր կառավարությունը 2018 թվականի գարնանը տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո ձեռնամուխ է եղել կոռուպցիայի դեմ իրական և արդյունավետ պայքարի, ինչին մեծապես կնպաստի ընկերությունների իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հրապարակումը: ՀՀ կառավարությունը |

| | |
|---|---|
| | կկիրարկի սեփականատերերի հրապարակայնության միջազգային ստանդարտները և կվերահսկի ընկերությունների չարաշահումները: Հաշվի առնելով նոր կառավարության բացահայտ կամքը բացառել կոռուպցիան բոլոր ոլորտներում ՀՀ կառավարությունը ստանձնում է իրականացնելու իրական սեփականատերերի համապարփակ հրապարակայնությունը բոլոր ոլորտներում: |
| Հիմնական նպատակը | Առաջարկվող հանձնառության հիմնական նպատակն է ապահովել կոռուպցիայի կանխարգելում և կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար՝ գործունեության բոլոր ոլորտներում ընկերությունների իրական սեփականատերերի մասին տեղեկատվության բացահայտման, հրապարակման շնորհիվ՝ համապարփակ իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց պետական հաշվառման ռեգիստրի (այսուհետ՝ Ռեգիստրի) շրջանակներում համապարփակ գրանցամատյանի համապարփակ ռեգիստրի ստեղծման և գործարկման միջոցով: Իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հրապարակումը կաջակցի նաև հարկային և իրավապահ մարմիններին՝ առավել արդունավետ իրականացնել իրենց գործառույթները: Այս տեղեկատվության թափանցիկությունը կնպաստի հանրային վերահսկողության բարձրացմանը և արդյունավետ իրականացմանը, կառավարության հանդեպ հանրային վստահության ձևավորմանը: Միաժամանակ սա նաև էապես կնպաստի ներդրումների ակտիվացմանը: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | ՀՀ Կառավարությունը հանձնառում է իրականացնել բոլոր ոլորտներում գործող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտում՝ Ռեգիստրի շրջանակներում համապարփակ գրանցամատյան ստեղծելու և գործարկելու միջոցով: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հրապարակայնություն, հաշվետվողականություն, Հանրային օրինավորության խթանում, նորարարություն |

| | | |
|---|---|---|
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Ռեգիստրի միջոցով հասանելի կդառնա տեղեկատվությունը իրական սեփականատերերի մասին, կբարելավի հանրային վստահությունը, կբարձրանա ոլորտի թափանցիկության և հանրային վերահսկողության մակարդակները, հետևաբար, կբարելավի ընկերությունների հաշվետվողականության մակարդակը: | |
| Հավակնություն | Հանձնառությունը բացառիկ է և Հայաստանի, և ԲԿԳ անդամ մյուս երկրների համար: Հանձնառության իրականացման շնորհիվ կստեղծվի հզոր գործիք քաղաքացիական հասարակության և պետության համար՝ պարզելու՝ ովքեր են տարբեր բիզնեսների իրական տերերը: Այս հանձնառությունը համընդգրկուն, ամբողջական ծրագիր է, որը կհանգեցնի դրական մեծ փոփոխությունների: Այն կունենա հսկայական ազդեցություն կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարում: Այն իրագործելու դեպքում Հայաստանը կդառնա առաջամարտիկներից մեկն ամբողջ աշխարհում իրական սեփականատերերի բացահայտման (Beneficial Ownership) ոլորտում: | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| 1. Տալ հասկացության իրավական սահմանումը - Այլ օրենքներում (մասնավորապես՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք և այլն) փոփոխությունների նախագծերի փաթեթի կազմում՝ ապահովելու համար նախատեսվող բարեփոխումների իրականացումը: Նախագծերի փաթեթն ակտիվորեն քննարկել քաղաքացիական հասարակության խմբերի հետ: | 2018 հոկտեմբեր | 2019 հունիս |
| 2. ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Ազգային ժողով | 2019 հունիս | 2019 սեպտեմբեր |
| 3 Պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի գրանցամատյանի | 2019 Մայիս | 2019 դեկտեմբեր |

| | | |
|---|---|---|
| ծրագրային ապահովման մշակում՝ տվյալների հրապարակայնության և որոնման հնարավորության մատչելիության ապահովմամբ: | | |
| 4. Պետական ռեգիստրի շրջանակներում իրական սեփականատերերի գրանցամատյանի մշակում և տվյալների մուտքագրում: | 2019 նոյեմբեր | 2020 հոկտեմբեր |
| 5. Իրական սեփականատերերի հանրային ռեգիստրի գործարկում | 2020 հոկտեմբեր | 2020 նոյեմբեր |
| 6. Իրական սեփականատերերի գրանցամատյանի վերաբերյալ համապարփակ հանրային իրազեկման ծրագրի իրականացում | 2020 հոկտեմբեր | 2020 դեկտեմբեր |

| 12. Կառավարության դրամաշնորհների և սուբսիդիաների հաշվետվողականություն. ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների և սուբսիդիաների հատկացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում | | |
|---|---|---|
| Լիազոր մարմին | | ՀՀ Արդարադատության նախարարություն |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ (համաձայնությամբ) |
| Ներկա իրավիճակը/ կարգավորման ենթակա հարցերը | | ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման գործընթացները կանոնակարգվում են «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 24 N 1937-Ն որոշմամբ և «ՀՀ պետական բյուջեից ՀՀ նախագահի աշխատակազմին հատկացված միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2008 թ. մայիսի 19-ի ՆՀ-118-Ն հրամանագրով:<br>Առաջարկում ենք ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհները հատկացնել միայն մրցութային կարգով, սահմանվի լիազոր մարմնի կողմից դրամաշնորհի տրամադրման համար կազմակերպված մրցույթների մասնակցած և հաղթող ճանաչված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման, դրամաշնորհային ծրագրերը իրականացվող կազմակերպությունների կողմից հաշվետվությունների ներկայացման և լիազոր մարմնի կողմից այդ հաշվետվությունների հրապարակման ընթացակարգերը:<br>ԲԿԳ գործողությունների 3-րդ ծրագրում արդեն իսկ ներառվել էր «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի կողմից առաջարկած «Կառավարության դրամաշնորհների հաշվետվողականություն. ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների հատկացման թափանցիկության և հաշվետվողականության ապահովում» հանձնառությունը: Սակայն |

<table>
<tr><td></td><td colspan="4">հանձնառության շրջանակներում մշակվել է միայն ԱՄՀՆ կողմից մրցութային կարգ, սակայն չի կիրառվել: Հանձնառությունը կատարվել է մասամբ: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը կիրառում է պետական դրամաշնորհների տրամադրման առցանց համակարգ, որը թույլ է տալիս առավել թափանցիկ և հրապարակային դարձնել պետական աջակցությունը երիտասարդական կազմակերպություններին և բարձրացնել գործընթացի արդյունավետությունը:<br>Դրամաշնորհները տրամադրվում են չհամակարգված և առանց մրցույթի:<br>Սույն փորձառությամբ և հանձնառությամբ պետք է կիրառելի դարձնել պետական բյուջեից ՔՀԿ-ներին դրամաշնորհներ և սուբսիդիաներ տրամադրելու մրցութային կարգը և հաշվետվողականության միասնական մեխանիզմը:</td></tr>
<tr><td>Հիմնական նպատակը</td><td colspan="4">Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող դրամաշնորհների տրամադրում մրցութային կարգով: Դրամաշնորհների տրամադրման ընթացակարգի և դրամաշնորհներով իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, դրամաշնորհների հասցեականության, ոլորտի հաշվետվողականության և թափանցիկության բարելավում:</td></tr>
<tr><td>ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը</td><td colspan="4">Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում, հանրային վստահության բարելավում, հանրային օրինավորության խթանում:</td></tr>
<tr><td rowspan="2">Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում</td><td>Թափանցիկություն</td><td>Հաշվետվողականություն</td><td colspan="2">Հանրային մասնակցություն</td></tr>
<tr><td>V</td><td>V</td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="2">Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ</td><td>Նոր կամ ընթացիկ պարտավորություն</td><td>Մեկնարկի օր</td><td>Ավարտի օր</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| 1. Պետական դրամաշնորհների և սուբսիդիաների տրամադրման արդեն իսկ կիրառվող գործիքների և ընթացակարգերի ուսումնասիրություն, առավելությունների և թերությունների սահմանում:<br>2. Դրամաշնորհների և սուբսիդիաների տրամադրման կարգերը սահմանող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակում և քննարկում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ :<br>3. Իրավական ակտերի նախագծերի համաձայնեցում շահագրգիռ գերատեսչությունների հետ և ընդունում:<br>4. Դրամաշնորհի և սուբսիդիա ստացած կազմակերպությունների հաշվետվությունների հրապարակում դրամաշնորհներ և սուբսիդիա տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում:<br>5. ՀՀ պետական բյուջեից դրամաշնորհների տրամադրման մրցույթների, մրցույթներին մասնակցած և հաղթող ճանաչված | Ընթացիկ | 01.10.2018<br><br>30.11.2018<br><br>28.02.2018<br>30.07.2018<br><br>30.07.2018 | 30.11.2018<br><br>28.02.2018<br><br>30.06.2018<br><br>Շարունակական<br><br>Շարունակական |

| | | | |
|---|---|---|---|
| կազմակերպությունների ցանկի տեղադրում դրամաշնորհներ տրամադրող լիազոր մարմինների պաշտոնական կայքերում: | | | |

| **13. <<Բաց տվյալներ>> հրապարակված հայտարարագրերում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br>**2018թ. Հունիս- 2020թ. Դեկտեմբեր** | | Նախկին հանձնառության շարունակություն |
| Լիազոր մարմինը | | Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով / Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Խուդավերդյան Արմեն/ կճշտվի |
| Պաշտոնը, վարչությունը | | Հանձնաժողովի նախագահի տեղակալ/ կճշտվի |
| Էլ. հասցեն | | armen.khudaverdyan@ethics.am |
| Հեռախոսահամարը | | (+37410)588795 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ կառավարության աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | «Հետք» (համաձայնությամբ), «Թրանսփարենսի ինթերնեշնլ» ՀԿ (համաձայնությամբ) |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | 2012թ-ից հայտարարատու պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերը հրապարակվում են ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1835-Ն որոշման պահանջներին |

| | |
|---|---|
| | համապատասխան՝ www.ethics.am կայքէջում: «Հայտարարագրերի ռեեստր» բաժնում հայտարարագրերի որոնումն իրականացվում է պաշտոնատար անձի «Անուն, Ազգանուն», «Պաշտոն» և «Տարի» հայտանիշներով: Առկա են խնդիրներ՝ կապված ոչ միայն հայտարարագրերի տվյալներին հասանելիության մատչելիության ապահովման, այլև այդ տվյալների հետագա վերամշակման հետ: «Հայտարարագրերի ռեեստր» բաժինն օգտվողների, մասնավորապես՝ հետաքննող լրագրողների, հայտարարարագրերի տվյալների ուսումնասիրություններ իրականացնողների համար դեռևս մատչելի չէ հետևյալ տեսանկյունից. հայտարարագրերից պահանջվելիք տվյալների ընտրության՝ ըստ կոնկրետ հայտանիշի, առանձին տարիների տվյալների շարքերի (դինամիկայի) ստացման ու վերլուծությունների: |
| Հիմնական նպատակը | Հնարավորություն ընձեռել ինտերակտիվ եղանակով համակարգից ստանալու հրապարակման ենթակա տվյալները էլեկտրոնային բաց ձևաչափով: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի ֆորմատի համապատասխանեցում բաց տվյալների սկզբունքին, դրանց վերամշակման, վերլուծության, որոնման համակարգի կատարելագործում: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային օրինավորության խթանում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի հրապարակումը բաց տվյալների սկզբունքով կխթանի տեղեկատվության հասանելիությունը և մատչելիությունը, ինչպես նաև կապահովի առավել բարձր հանրային հաշվետվողականություն: |
| Հավակնություն | Հայտարարագրերի ռեեստրի ինտերակտիվ գործիքի ներդրման արդյունքում Հանձնաժողովն ակնկալում է ՔՀ շահագրգիռ միավորումների կողմից ստանալու առավել փաստարկված առաջարկություններ ու դիմումներ այս կամ այն բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից «Հանրային ծառայության մասին» |

| | | | |
|---|---|---|---|
| | ՀՀ օրենքով սահմանված պահանջների ենթադրյալ խախտումների վերաբերյալ: | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| 1. 2017-2020թթ. հայտարարագիր չներկայացրած և սահմանված ժամկետից ուշ ներկայացրած հայտարարատու պաշտոնատար անձանց, Հանձնաժողովի կողմից կիրառված վարչական պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում, Հանձնաժողովի կայքում: | | 2018թ. դեկտեմբեր | Յուրաքանչյուր տարվա ավարտի դրությամբ՝ հաջորդ տարվա առաջին եռամսյակ |
| 2. Հանձնաժողովի www.ethics.am կայքի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնի որոնողական համակարգի զարգացում, դրա՝ օգտվողի համար ինտերակտիվ հասանելիության ապահովում, ծրագրային ապահովման մշակում և ներդնում: | | 2018թ. Սեպտեմբեր | 2019թ. հունիս |
| 3. ՔՀ շահագրգիռ միավորումների կողմից Հանձնաժողով ներկայացված դիմումների (հրապարակումների կամ այլ եղանակով) քանակի աճ: | | 2019թ. հունիս | 2020 դեկտեմբեր |
| 4. Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաշվետվության հրապարակում Հանձնաժողովի կայքում | | 2019թ. դեկտեմբեր | Յուրաքանչյուր տարվա ավարտի դրությամբ՝ հաջորդ տարվա առաջին եռամսյակ |

| Բնակչին առավել հասանելի և ինֆորմացված համայնքային պաշտոնական կայքեր | |
|---|---|
| Լիազոր մարմին | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման |

| | | |
|---|---|---|
| | | նախարարություն |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | <<Արմավիրի զարգացման կենտրոն>> ՀԿ (համաձայնությամբ) |
| Ներկա իրավիճակը/ կարգավորման ենթակա հարցերը | | Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է պաշտոնական կայք ունենալու համայնքների պարտավորությունը և կայքում տեղադրվելիք ներբեռնման հնարավորությամբ նվազագույն փաստաթղթերի ցանկը:<br>Համայնքների պաշտոնական կայքերի թերությունը կայանում է նրանում, որ չնայած օգտագործողին տրամադրվող ինֆորմացիայի՝ այն ամբողջական չէ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ընդլայնել օրենքով սահմանված փաստաթղթերի ցանկը և տեղեկատվությունը՝ ներառելով<br>➢ Համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցների բյուջեները,<br>➢ Անկախ պատկանելիությունից համայնքում առկա բոլոր կառույցների մասին (կրթական, մշակութային և այլն) տեղեկատվությունը (հասցե, բյուջե, մատուցվող ծառայություններ և այլն)<br>➢ Համայանքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների առցանց եղանակով հասանելիության ապահովումը,<br>➢ Գովազդների, առևտրի և այլ տեսակի թույլտվությունների հրապարակումը,<br>➢ Քաղաքում կատարվելիք կամ սպասվող շինարարության հետ կապված տեղեկատվություն (շինարարության հասցե, սկիզբ, ավարտ, նախատեսված բյուջե, |

<table>
<tr><td></td><td colspan="4">հովանավորող կազմակերպություն),<br>➢ Քաղաքում առկա զբոսայգիների, տեսարժան և պատմամշակութային վայրերի մասին տեղեկատվություն ( հասցե, նկարներ, հակիրճ բնութագիր),<br>➢ Տեղական մակարդակում e-draft մոդելի կիրառում, այն է  համայնքապետի, ավագանու որոշումների նախագծերի տեղադրում համանքապետարանի կայքում տեղեկացման և քննարկման նպատակով:</td></tr>
<tr><td>Հիմնական նպատակը</td><td colspan="4">Տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկ և հաշվետու գործունեության ապահովման համար համայնքապետարանների կայքերի պատշաճ գործարկումը և մատուցվող ծառայությունների առցանց հասանելիության ապահովումը:</td></tr>
<tr><td>ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը</td><td colspan="4">Թափանցիկության և հաշվետվողականության ապահովում<br>Տեղեկատվության մատչելիության խթանում</td></tr>
<tr><td rowspan="2">Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում</td><td>Թափանցիկություն</td><td>Հաշվետվողականություն</td><td colspan="2">Հանրային մասնակցություն</td></tr>
<tr><td>V</td><td>V</td><td colspan="2">V</td></tr>
<tr><td colspan="2">Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ</td><td>Նոր կամ ընթացիկ պարտավորություն</td><td>Մեկնարկի օր</td><td>Ավարտի օր</td></tr>
<tr><td colspan="2">1. Հանրային քննարկումների կազմակերպում անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ընդլայնելու և հստակեցնելու համար<br>2. Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում</td><td>Նոր<br>Նոր<br>Նոր</td><td>30.09.2018թ.<br>01.12.2018թ.</td><td>01.12.2018թ.<br>01.06.2019թ.</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| համապատասխան փոփոխության իրականացում<br>3. Համայնքների պաշտոնական կայքերի համապատասխանեցում օրենքի փոփոխությանը: | | 01.06.2019թ. | 01.10.2019թ. |

| | | |
|---|---|---|
| | | |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Կառավարություն<br>Մասնավոր հատված |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Հայաստան Հանրապետության կառավարության 2017-2022 թթ. ծրագիրը «1.1. Պետական կառավարման արդիականացում» կետում սահմանում է կառավարման թվային համակարգի զարգացման ուղղությամբ հանձնառությունները՝ էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունների թվի մեծացում, պետական կառավարման էլեկտրոնային ինտեգրված համակարգի մշակում և ներդրում, քաղաքացիների կողմից պետական մարմիններին հասցեագրված հարցումներին և դիմումներին պատասխանելու արդյունավետ էլեկտրոնային կառավարման համակարգի |

| | |
|---|---|
| | ներդրում, հարցումների միասնական էլեկտրոնային հարթակ ստեղծելու և այն Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգին համակցելու պարտավորություն: Հանձնառությունները մասնավորեցված և գործունեության ուղղությունները նախանշված են «Հայաստանի թվային օրակարգ 2018-2030» շրջանակային փաստաթղթում:<br><br>Բացի այդ՝ «Բաց կառավարման գործընկերության Հայաստանի Հանրապետության գործողությունների ծրագիր» փաստաթղթի 1.2. կետի՝ «Էլեկտրոնային կառավարության ներդրում» առաջին պարբերությունում նախանշված են հիմնական այն ուղղությունները, որոնք կարող են նպաստել հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:<br><br>Վերոնշյալ փաստաթղթերը, ըստ էության ուրվագծում են հանրային ծառայությունների մատուցման թվանշային էկոհամակարգի զարգացման և նոր տեխնոլոգիաների, գործիքների ներդրման ուղղությամբ հիմնական քայլերը: Ընդ որում, բոլոր այս հանձնառությունները ենթադրում են հայերենով շրջանառվող թվային տեղեկատվության նոր, շատ ավելի մեծ մասշտաբներ, կամ՝ հայերենով թվային ամբողջովին այլ՝ մինչև այս անհասանելի ընդգրկմամբ և ծավալով տվյալներ: Այլ կերպ ասած, ձևավորվում է հայերենով լեզվական մեծ տվյալների մշակման և հայերենի հետ աշխատող թվային գործիքների ստեղծման անհրաժեշտություն:<br><br>Նման ծավալի տվյալների առաջնային, ավտոմատ մշակման գործիքներ այսօր առաջարկում են «բնականլեզվի մշակման» (NLP) համակարգերը, որոնք հիմնված են 1960-ականներից նախ կիրառական և մաթեմատիկական, ապա |

| | |
|---|---|
| | հաշվողական լեզվաբանության բնագավառներում հետևողականորեն իրականացվող հետազոտությունների վրա: Հայերենն այս առումով թերևս բաց է թողել լեզվի շուրջ ուսումնասիրությունների տեխնոլոգիզացիայի առաջին փուլը, պայմանականորեն՝ լեզվական թվային մեծածավալ ծանոթագրված կորպուսների ստեղծման փուլը: Այս հանգամանքը հայերենը պարզապես անընկալունակ է դարձնում թվային փոխակերպման և ընդհանրապես թվայնացման ցանկացած օրակարգի մարտահրավերների նկատմամբ՝ սրանից բխող բոլոր հետևանքներով:<br><br>Խնդրավորման այսպիսի շրջանակում առաջարկվում է ստեղծել «Հայերենի թվային լաբորատորիա», որը հիմնարար և կիրառական հետազոտական գործունեություն է իրականացնում «հաշվողական լեզվաբանության» (Computational Linguistics), «բնական լեզվի մշակման» (NLP, Natural language processing), «նեյրոնային ցանցեր և մեքենայական (խոր) ուսուցման» (Neural networks and deep learning)» ոլորտներում՝ առաջարկելով թվային էկոհամակարգ հայերենի համար:<br><br>Շարահյուսական ծառերի բանկի և դրա վրա վարժեցված նեյրոնային ցանցերի հենքով ստեղծվող համակարգը թույլ է տալու մշակել գործիքներ կիրառական այս կամ այն խնդրից բխող յուրաքանչյուր առանձին դեպքի համար, լինի դա էլեկտրոնային փաստաթղթերի ավտոմատ կլաստերիզացիա, տարատեսակ բազաների, բառացանկերի ստեղծում և վարում, թե տեքստերի խոր (ձևաբանական, շարահյուսական-մետաիմաստային) վերլուծության հիման վրա փաստաթղթերում որոնման համակարգերի բարելավում, |

| | |
|---|---|
| | փաստաթղթերի բովանդակության մշակման համակարգեր: |
| Հիմնական նպատակը | - Միջազգայնորեն ինտեգրված ազգային հարթակի/ենթակառուցվածքի ստեղծում, որը տեխնոլոգիական լուծումներ է առաջարկում թվայնացման, տնտեսության թվային փոխակերպման, էլեկտրոնային կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունների լեզվական բաղադրիչի մասով:<br>- Հայերենը տպագրի լեզվից վերածելովթվանշանայինի՝ գիտահետազոտական և փորձարարական նախագծման միջոցով երկարաժամկետ զարգացման և թվային ներառականության խորացման մեխանիզմների ստեղծում այնպիսի բնագավառներում (բուհական կրթություն, լեզվաբանական, սոցիոլեզվաբանական, մշակութաբանական հետազոտություններ), որոնք ավանդաբար չեն էլ դիտարկում տնտեսական աճի համար անհրաժեշտ թվային հմտություններ զարգացնելու կամ թվային տնտեսություն կառուցելու համատեքստում: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Պաշտոնական լեզվի գործառնության հիմնական ոլորտները ներառող հայերենի շարահյուսական ծառերի նվազագույն նմուշային բանկի ստեղծում՝ 100 բառանիշ (մոտ 5000 նախադասություն) ծավալով, բնական լեզուների մշակման արդի հետազոտությունների ու բանկերի միջազգայնորեն բաց Universa Dependencies ստանդարտներով: Այս բանկի հիման վրա պաշտոնական գրագրության, պաշտոնական փաստաթղթերի և պաշտոնական բանավոր հաղորդակցության հայերենի մետածանոթագրման |

| | |
|---|---|
| | համ Թափանցիկությունակարգի (ոլորտի ֆորմալ օնտոլոգիա, կլաստերիզացիա), տեքստի անդամատման համակարգի (բառանջատում և բառանիշավորում), հայերեն տեքստի որոնման համակարգի ձևաբանական բաղադրիչի (հիմքատում և բառույթավորում) թվային գործիքների ստեղծում: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հաշվետվողականություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Փորձարարական տեխնոլոգիա ու գաղափար, որը համագործակցային և գործուն ինստիտուցիոնալ շրջանակ է ստեղծում հանրային ծարայությունների թվային ներառականությունը ընդլայնելու համար: |
| Հավակնություն | Կարճաժամկետ՝ Էլեկտրոնային կառավարման ոլորտում արդյունավետության բարձրացում (նաև ԲԿԳ ծրագրերի), այդ թվում՝<br>- հայերենով փաստաթղթերի և կից նյութերի էլեկտրոնային տարբերակների ավտոմատ կառավարման, մասնավորապես՝ դասակարգման, մետատվյալներով ծանոթագրման ու կլաստերիզացիայի ավտոմատ համակարգի ներդրման համար լեզվական մշակումներ,<br>- անհրաժեշտ փաստաթղթերի/փաստաթղթերում արագ որոնման համակարգի ներդրում, որը ներառում է ձևաբանական, շարահյուսական և մետաիմաստային տարրեր (բացակայում է ընդհանրապես հայերենի համար):<br>Երկարաժամկետ՝ թվային էկոհամակարգ, որը միտված է բուհական կրթության ու զբաղվածության ոլորտներում արդյունավետ |

| | |
|---|---|
| | համագործակցության հարթակի ու միջդիսցիպլինար գիտական մշակումների վրա հիմնված կիրառական մշակումների ստեղծմանը, ինչի արդյունքում գիտական մի ամբողջական ոլորտ (ավանդաբար՝ բանասիրություն) բերվում է «խելացի» տեխնոլոգիաների ոլորտ, ստեղծվում միջդիսցիպլինար՝ «Հաշվողական լեզվաբանություն», «Բնական լեզուների մշակում» կրթական ծրագրերի/դասընթացների ներդրման/զարգացման մեխանիզմներ: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| Արդի գրական պաշտոնական արևելահայերենի շարահյուսական ծառերի բանկի նկարագրության ստանդարտների մշակում | 2019 փետրվար | 2019 հուլիս |
| Բանկը սպասարկող պորտալի մշակում | 2019 մայիս | 2019 նոյեմբեր |
| Արդի գրական պաշտոնական արևելահայերենի 100 բառանիշ պարունակող շարահյուսական ծառերի բանկի ծանոթագրում | 2019 հունիս | 2022 փետրվար |

| **Հանձնառության անվանումը**<br>**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** | |
|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | 01.07.2018- 30.06.2020 |
| Լիազոր մարմինը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | Սյուզաննա Մակյան |

| | | |
|---|---|---|
| Պաշտոնը, վարչությունը | | Հանրակրթության վարչություն, նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ |
| Էլ. հասցեն | | syuzannamakyan@mail.ru |
| Հեռախոսահամարը | | 010524777, 099961171 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն/ԿՏԱԿ/-իրականացնող, տարածքային կառավարման նախարարություն, Երևանի քաղաքապետարան, մարզպետարաններ, ուսումնական հաստատություններ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Երեխաների հերթագրումների, կրկնակի գրանցումների, ուսումնական հաստատութփյուններ ընդունելության և տեղափոխման մեխանիզմների հստակեցում, թափանցիկություն ապահովում, վարչարարության նվազում: |
| Հիմնական նպատակը | | Միասնական էլեկտրոնային կառավարման միջոցով տեղեկատվության ամբողջականության ապահովում, հավաստիության, հանրային հաշվետվողականության, աշխատանքի արդյունավետության բարձրացում: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգի զարգացում՝ ներառելով բոլոր կրթական մակարդակների՝ այդ թվում նախադպրոցական, բոլոր հաստատությունները՝ անկախ կազմակերպաիրավակա ձևից և ենթակայությունից: Այն հնարավորություն կտա բազմաշերտ և համապարփակ տեղեկատվություն ստանալ կազմակերպության գործունեության մասին, ծանոթանալ հաշվետվություններին, իրազեկվել հաստատություններում տեղերի առկայության, ընդունելության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Թափանցիկություն, հաշվետվողականություն, մասնակցություն, տեխնոլոգիա և |

| | |
|---|---|
| | նորարարություն |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Բոլոր |
| Հավակնություն | Երեխաների հերթագրումների, կրկնակի գրանցումների, ուսումնական հաստատություններ ընդունելության և տեղափոխման մեխանիզմների հստակեցում, թափանցիկություն ապահովում, վարչարարության նվազում, այլ հարցերի կարգավորում: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Բոլոր ուսումնական հաստատությունները ընդգրկված են համակարգում, այն հասանելի է հանրությանը:* | 01.07.2018 | 30.06.2020 |
| | | |
| | | |
| | | |

| *1. Միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ստեղծման և ներդրման ծրագիր* | |
|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | 2017 -2018 թթ |
| Լիազոր մարմինը | ՀՀ մշակույթի նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | Սամվել Մուրադյան |
| Պաշտոնը, վարչությունը | ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար |

| | | |
|---|---|---|
| Էլ. հասցեն | | s_muradyan@mincult.am |
| Հեռախոսահամարը | | 011 564868 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | *Մեկ* ***միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ստեղծում և ներդրում*** Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող թատերահամերգային, թանգարանային, մարզական-սպորտային կազմակերպություններում և ժամանցային կենտրոններում: Համակարգի ստեղծման և ներդրման գործընթացը մեկնարկել է 2017 թվականից: ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 850-Ն որոշմամբ սահմանված կարգով կազմակերպված «ՀՀՄՆ-ԵՄԾՁԲ-17/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի արդյունքում 2018 թվականի փետրվարի 28-ին հաղթող մասնակից է ճանաչվել «Էլեկտրոնային տոմսերի միասնական համակարգ» ՍՊԸ և «ԻնֆոՏեխ» ՍՊԸ կոնսորցիումը, որի հետ առաջիկայում կկնքվի պայմանագիր: |
| Հիմնական նպատակը | | Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող թատերահամերգային, թանգարանային, մարզական-սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի ստեղծում, ներդրում, պետություն-մասնավոր գործընկերության փոխշահավետ գործակցության ձևաչափ, որով առանց պետական ֆինանսավորման, բացառապես մասնավոր տնտեսվարողի |

| | |
|---|---|
| | միջոցներով ստեղծվում է համակարգ, որի շահագործումը կհանգեցնի դրամական հոսքի ավելացմանը պետական բյուջե: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող թատերահամերգային, թանգարանային, մարզական-սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգը կներդրվի 3 փուլով. 1-ին փուլ՝ Երևանում գործող 10, 2-րդ փուլ՝ Երևանում գործող բոլոր, 3-րդ փուլ՝ հանրապետության մարզերի պետական թատերահամերգային, թանգարանային, սպորտային կազմակերպություններում և ժամանցային կենտրոններում: Ընտրված մոդելը պետություն-մասնավոր գործընկերության փոխշահավետ գործակցության ձևաչափ է, որով առանց պետական ֆինանսավորման, բացառապես մասնավոր տնտեսվարողի միջոցներով ստեղծվում է համակարգ: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ծառայությունների բարելավում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Թափանցիկություն, հաշվետվողականություն, մասնակցություն |
| Հավակնություն | Էլեկտրոնային տոմսերի տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի ներդրումը վաճառքի հնարավոր բոլոր ուղիների միջոցներով տոմսերի ձեռքբերումը կդարձնի առավել դյուրին ու հարմարավետ: Կձևավորվի թատերահամերգային, թանգարանային, սպորտային, ժամանցային ծառայությունների մատուցման ոլորտում միանգամայն նոր միջավայր, կամրագրվեն տոմսային տնտեսության վարման նոր սկզբունքներ, որոնք հնարավորություն կտան առավել վերահսկելի ու համահավասարության հիման վրա արդյունավետորեն կազմակերպել մշակութային-ժամանցային ծրագրային քաղաքականությունը: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | 2017 | 2018 |
| Մշակութային ծառայությունների մատչելիության ապահովում | | |
| Մշակութային-ժամանցային ծրագրային քաղաքականության արդյունավետ կազմակերպում | | |
| Տոմսերի վաճառքի մատչելիության ապահովում | | |

| ***2. Հուշարձանների կադաստրային տվյալների կազմում և տեղեկատվության մատչելիության ապահովում*** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 2019-2025 թվականներ |
| Լիազոր մարմին | | ՀՀ մշակույթի նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Արև Սամուելյան |
| Պաշտոնը, վարչությունը | | ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ |
| Էլ. հասցեն | | arevsam@gmail.com |
| Հեռախոսահամարը | | 011 52 12 25 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրային տվյալների ձեռքբերում, համակարգում, կադաստրային գրանցամատյանի ստեղծում և |

| | |
|---|---|
| | վարում, տեղեկատվության մատչելիության ապահովում: |
| Հիմնական նպատակը | Կկանոնակարգվի հուշարձանների պահպանության բնագավառին վերաբերող գույքային հարաբերությունները, նվազագույնի կհասցվեն թույլ տրվող իրավախախտումները, հնարավորություն կընձեռնվի նոր մեթոդաբանությամբ իրականացնել հուշարձանների կադաստրային գնահատումը, կապահովվի հուշարձաններին վերաբերող տվյալների տրամադրման մատչելիությունը: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | **Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զգալի մասի,** դրանց զբաղեցրած տարածքների և պահպանական գոտիներին առնչվող տվյալների բացակայությունը, Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռներում պատմական և մշակութային հողերին վերաբերող **տվյալների անճշտությունները,** պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների և դրանց տարածքների սեփականության իրավունքի գրանցման և սեփականության գույքային իրավունքի վկայականների ձեռքբերման գործընթացի բացակայությունը, հուշարձանների սեփականատերերի (վարձակալների, օգտագործողների) վերաբերյալ տվյալների ճշտումը, հուշարձանների հաշվառման փաստաթղթերի (վկայագիր, պահպանական գոտի, ներդիրներ, ցուցակներ) լրամշակման և ճշգրտման անհրաժեշտությունը, արդի տեխնոլոգիաների զարգացման՝ մասնավորապես քարտեզագրական նյութերի թվային համակարգին անցնելը, ինչպես նաև պետական կադաստրի բնագավառում կիրառվող ձևաչափերին համապատասխանեցնելը ներկայում առաջնահերթություն են և պահանջում են համապատասխան լուծում, ինչն էապես կնպաստի հուշարձանների պահպանության բնագավառի գույքային հարաբերությունների ճշգրտմանը և կանոնակարգմանը, կնվազեցնի թույլ տրվող խախտումները, հնարավորություն կընձեռի նոր մեթոդաբանությամբ իրականացնել հուշարձանների կադաստրային գնահատումը: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում | Հանրային ծառայությունների բարելավում |

| | | | |
|---|---|---|---|
| պարտավորությունը | | | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Հաշվետվողականություն, թափանցիկություն, տեխնոլոգիա և նորարարություն | | |
| Հավակնություն | | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների կադաստրային տվյալների ձեռքբերում<br>- կադաստրային գրանցամատյանի ստեղծում և վարում<br>- հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում | | 2019 թվական | 2025 թվական |

| | | |
|---|---|---|
| Հանձնառության անվանումը. Հանրային ենթակառուցվածքների զարգացման համայնքահեն մշտադիտարկման նախաձեռնություն | | |
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | մայիս 2017-հունիս 2020 |
| Լիազոր մարմինը | | ՀՀ տարածքային կառավարման եվ զարգացման նախարարություն<br>ՀՀ քաղաքաշինության կոմիտե |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ | Այլ շահագրգիռ | ՀՀ կառավարության աշխատակազմ, Հայաստանի տարածքային զարգացման |

| | | |
|---|---|---|
| մարմիններ | պետական մարմիններ | հիմնադրամ, ՀՀ քաղաքաշինության կոմիտե, Երևանի քաղաքապետարան, Արարատի մարզպետարան, Գեղարքունիքի մարզպետարան, Սյունիքի մարզպետարան, Լոռու մարզպետարան, Վայոց Ձորի մարզպետարան |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Ինթեգրիթի Էկշն ՀԿ, Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ, Սոցիալ-տնտեսական քաղաքականության տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտ, ՀԿ կենտրոն, Մարտունու կանանց համայնքային խորհուրդ, Գորիսի մամուլի ակումբ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Կոռուպցիայի դեմ պայքարի, ինչպես նաև արդյունավետ կառավարման համակարգի կայացման գործում էական նշանակություն ունի քաղհասարակության ներգրավումը հանրային կառավարման համակարգի գործունեությանը: Մասնակցային կառավարումը լիարժեք չէ, քանի որ պատմականորեն Հայաստանն ի վիճակի չի եղել որոշումների կայացման գործընթացում պետություն-քաղաքացի համապարփակ գործընկերություն հաստատելու և նման ներգրավվածության համար ունեցել է ինստիտուցիոնալ կարողությունների և ռեսուրսների պակաս:<br><br>Փորձարկված և ինստիտուցիոնալացված պլատֆորմների և երկխոսության ձևաչափերի օգտագործումը, հանրային ենթակառուցվածքների զարգացման և հանրային ծառայությունների մատուցման մոնիտորինգի համակարգի ներդրումը խիստ կարևոր են մասնակցային կառավարման լիարժեք համակարգի ձևավորման համար: |
| Հիմնական նպատակը | | Ծրագրի նպատակը նեղ իմաստով հանրային ծառայության որոշակի բնագավառում (դպրոցների վերակառուցում և վերանորոգում) նոր, անկախ և արդյունավետ մշտադիտարկման համակարգի ձևավորումն ու գործարկումն է՝ մշտադիտարկման գործընթացում շահառուների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ և խրախուսանքի կառուցակարգերի ներառման միջոցով: Լայն իմաստով ծրագիրը ուղղված է |

| | |
|---|---|
| | մասնակցային կառավարման համակարգի զարգացմանը և քաղաքացիական հասարակության հետ կայուն գործակցության ձևավորմանը: Ծրագիրն իր ներդրումն ունի Կայուն Զարգացման Նպատակների՝ հատկապես ԿԶՆ4, ԿԶՆ15 և ԿԶՆ 16 իրագործման հարցում: Ծրագիրը ներկայացվում է փորձնական (պիլոտային) հիմունքներով՝ հաշվի առնելով ամբողջ երկրի տարածքում բարեփոխումների տարածման կարևորագույն անհրաժեշտությունը և հաջողված փորձնական ծրագրերի ինստիտուցիոնալացումը: Ծրագրի նպատակն է փորձարկել բարեվարքության համայնքահեն Մշտադիտարկումը, որը կօգնի քաղաքացիական հասարակությանը մշտադիտարկում իրականացնելու 8 դպրոցների վերականգնման և վերակառուցման նկատմամբ՝ թիրախավորված ուժգնության սեյսմիկ իրադարձություններին դիմակայման համար՝ Ասիայի զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից ֆինանսավորվող Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի (ՍԱԲԾ) ներքո: Դպրոցները կառուցվում են ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության միջև գործընկերության ներքո՝ վերականգնելու կամ վերակառուցելու երկրաշարժերին դիմակայուն 46 դպրոցներ և բարելավելու երկրի՝ բնական աղետներին նախապատրաստվելու և արձագանքելու կարողությունը: ՍԱԲԾ- ն աջակցում է Հայաստանի Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության իրականացմանը 2015-2023 թվականների ընթացքում՝ (ա) բարելավելով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը՝ երկրաշարժերի ժամանակ դպրոցներում կորուստների և վնասների նվազեցման համար, և (բ) հնարավորություն ընձեռելով դպրոցական շենքերի ավելի լայն օգտագործման համար՝ որպես ապաստարան հանրության համար համար երկրաշարժից հետո արտակարգ իրավիճակների արձագանքման կենտրոն: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Աղքատության կրճատման Ճապոնիայի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող <Տեխնիկական Աջակցություն-9288. Պետության և քաղաքացիական |

| | |
|---|---|
| | հասարակության համագործակցության ամրապնդում Բաց կառավարման գործընկերության շրջանակում՝ հանրային ծառայությունների բարելավման նպատակով> ծրագրով ԱՋԲ-ն և Ինթեգրիթի Էկշն ՀԿ-ն արդեն պայմանավորվել են համագործակցել 8 դպրոցների վերականգնման և վերակառուցման նկատմամբ համայնքահեն մշտադիտարկման իրականացման համար՝ աջակցելու համայնքի և քաղաքացիական հասարակության վերապատրաստմանը, մշտադիտարկմանը և կառուցվածքային բարեվարքության և երաշխիքների վերաբերյալ քաղաքացիական կրթությանը: Ծրագիրը կարող է ընդլայնվել և ընդգրկվել ՍԱԲԾ-ի շրջանակներում գտնվող 12 լրացուցիչ դպրոցներ (առավելագույնը 20):<br>Վերապատրաստված համայնքային մշտադիտարկում իրականացնող անձանց միջոցով դիտարկելով և վերահսկելով ՍԱԲԾ-ի շրջանակներում գտնվող դպրոցների վերակառուցման աշխատանքները, փորձնական ծրագիրը կնպաստի ավելի լավ կառուցվածքային բարեվարքությամբ և սեյսմիկ անվտանգությամբ ապահովված դպրոց ունենալուն՝ (ա) նվազեցնելով ռեսուրսների արտահոսքի ռիսկը շինարարական գործընթացում, (բ) ապահովելով պայմանագրային պարտավորությունների պահպանումը, (գ) հաստատելով նյութական միջոցների համապատասխան որակի պահպանումը, (դ) ապահովելով աշխատողների առողջության և անվտանգության պահանջները պահպանումը և այլն:<br>Ծրագրի առաջին փուլում կառուցվում է մոնիտորինգի կարողությունը: Տեղական ՔՀԿ գործընկերները ընտրվում են և Ուսուցանողների վերապատրաստում են անցնում՝ Համայնքային Բարեվարքության Կառուցում (ՀԲԿ) մոտեցման հիման վրա, ինչպիսիք են համայնքի ներգրավվածության և ներառականության մարտահրավերները, մշտադիտարկում իրականացնող անձանց ընտրության չափանիշները (ինչպես պահել, պլանավորել և մոտիվացնել նրանց) կամ ինչպես հավաքել ապացույցներ, ինչպես անցկացնել մշտադիտարկման այցեր ենթակառուցվածքային նախագծերում և ինչպես օգտվել DevelopmentCheck-ից |

| | |
|---|---|
| | որպես մոնիտորինգի գործիք:<br>Մշտադիտարկման գործիքակազմի վերաբերյալ նյութերը թարգմանվել են հայերեն, DevelopmentCheck գործիքը նույնպես թարգմանվել է հայերեն և հարմարեցվել տեղական պահանջներին:<br>Յուրաքանչյուր դպրոցի համար իրականացվում է մշտադիտարկում իրականացնող անձանց ընտրություն և վերապատրաստում: Վերապատրաստվելուց հետո նրանք սկսում են մշտադիտարկման գործողությունները: Մշտադիտարկում իրականացնող անձինք ծրագրերը վերահսկում են շաբաթական առնվազն երկու անգամ 3 հոգանոց խմբով: Նրանք հավաքում են տվյալներ և ապացույցներ, որոնք առնչվում են`<br>1. ծրագրի թափանցիկությանը (օրինակ` որքան դյուրին է փաստաթղթերին մուտք ունենալը):<br>2. ծրագրի արդյունավետությանը (օրինակ` շահառուները բավարարված են ծրագրից կամ արդյոք ծրագիրը իրականացվում է պայմանագրային պարտավորություններին համապատասխան):<br>3. ծրագրի ներառականությանը (օրինակ` արդյոք համայնքի հետ խորհրդակցվել է ծրագրի պլանավորման փուլում):<br>Հավաքագրված տվյալները և ապացույցները մշտադիտարկում իրականացնող անձինք մուտքագրում են DevelopmentCheck գործիքի մեջ, իսկ տվյալները վերանայում են տեղական ՔՀԿ գործընկերների կողմից` նախքան հրապարակումը:<br>Համատեղ աշխատանքային խմբերը ստեղծվում են յուրաքանչյուր դպրոցում, որոնք պատասխանատու են մշտադիտարկում իրականացնող անձանց կողմից հայտնաբերված խնդիրների բարձրացման և վերացման համար: Նրանք բաղկացած են տեղական ինքնակառավարման պաշտոնյաներից, կապալառուներից, իրականացնող մարմնից, տեղական հասարակական |

| | |
|---|---|
| | կազմակերպություններից և մշտադիտարկում իրականացնող անձանցից: 2018 թ. մարտին հաջողությամբ ստեղծվել է նաև Կառավարման կոմիտե՝ ծրագրի արդյունավետությունը բարելավելու, շահագրգիռ կողմերին ծրագրի առաջընթացի վերաբերյալ տեղեկացնելու և մշտադիտարկում իրականացնող անձանց կողմից հայտնաբերված խնդիրների վճռման համար լուծումների իրականացումը դյուրինացնելու համար: Իրականացման ավարտից հետո հաջորդ քայլը կլինի կառավարության համապատասխան պաշտոնյաների, քաղաքացիների և քաղհասարակության ընդգրկուն վերապատրաստումը և քաղաքացիների ներգրավվածության փորձարկված մեխանիզմների մասին իրազեկվածության բարձրացումը, հիմնական շահառու խմբերի միջև վստահության հաստատումը և սոցիալական պատասխանատվության նոր բիզնես գործընթացների ներդրումը: Հաշվի առնելով ստացված գիտելիքները և գործնական փորձը, մշտադիտարկման արդյունքներին արձագանքման և բողոքների վերացման հստակեցված մեխանիզմը, կքննարկվեն հանրային ենթակառուցվածքների զարգացման այլ ծրագրերում համայնքահեն մշտադիտարկման ներդրումը, ինչպես նաև կարգավորող օրենսդրության փոփոխությունները: Ծրագրի գնահատված բյուջեն 225.000 ԱՄՆ դոլար է 20 դպրոցների համար: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Կառավարման թափանցիկություն, հանրային մասնակցություն և հանրության առջև հաշվետվողականություն |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Պետության և քաղաքացիական հասարակության միջև ամրապնդված համագործակցություն՝ հանրային ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների մատուցման գործում արդյունավետ հանրային մասնակցությանը նպաստելու և հանրային կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարձրացնելու համար: |
| Հավակնություն | Փորձնական ծրագիրը քաղաքացիներին և ՔՀԿ-ներին ներգրավելու վերաբերյալ |

| | |
|---|---|
| | գիտելիքների փոխանցման և նորարարական ուղիների յուրացման հնարավորություն կընձեռի պետական ինստիտուտների համար: ՀՀ կառավարությանը հնարավորություն կընձեռնվի կառավարման որոշակի բնագավառի բարեփոխման այս հաջողված մոտեցումը կիրառել հանրային ենթակառուցվածքների զարգացման և հանրային ծառայությունների այլ ոլորտներում: Կներդրվի պետության և քաղաքացու փոխգործակցության նոր մշակույթ՝ ապահովելով Հայաստանի քաղաքացու ակտիվ մասնակցությունը քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| 1.Նախաձեռնության պիլոտային ծրագրի իրականացում 8 (կարող է ներառել նաև լրացուցիչ 12) դպրոցներում տարբեր մարզերում | մայիս 2017 | մայիս 2019 |
| 1.1 Մշտադիտարկում իրականացնող բոլոր անձանց ընտրություն և ուսուցանում | հունվար 2018 | դեկտեմբեր 2018 |
| 1.2 Յուրաքանչյուր դպրոցի համար միասնական աշխատանային խմբերի ստեղծում | մայիս 2018 | դեկտեմբեր 2018 |
| 1.3 Համայնքահեն մշտադիտարկման տվյալների և գիտելիքների ստեղծման արդյունքների ամփոփում | | մայիս 2019 |
| 2. Համայնքահեն մշտադիտարկման վերաբերյալ գիտելիքների փոխանցման միջոցառում | | մայիս 2019 |
| ՀՀ կառավարության 28.10.1998թ. ընդունված <Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման եվ հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը եվ որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին> թիվ N 660 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում՝ պիլոտային ծրագրի արդյունքների հիման վրա՝ կառուցապատման/հանրային ենթակառուցվածքային նախագծերում պարբերական (շարունակական) մոնիտորինգի արդյունքներին հստակ արձագանքման և բողոքների վերացման մեխանիզմը ներդնելու համար (անհրաժեշտության դեպքում): | մայիս 2019 | հունիս 2020 |

| Պետական գույքի օտարման նպատակով էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագիր | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 23.01.2018թ.-31.12.2018թ. |
| Լիազոր մարմինը | | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Լյուդվիգ Գրիգորյան |
| Պաշտոնը, վարչությունը | | «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ –ի տնօրեն |
| Էլ. հասցեն | | auction.center@mail.ru |
| Հեռախոսահամարը | | 011-24-55-51 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված<br>Արմավիրի զարգացման կենտրոն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | էլեկտրոնային աճուրդներ |
| Հիմնական նպատակը | | Հնարավորություն ընձեռնել հասարակությանը մասնակցել պետական գույքի աճուրդներին նաև էլեկտրոնային եղանակով |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | Պետական գույքի աճուրդների կազմակերպման էլեկտրոնային համակարգի ներդնում |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Միտված է կայուն զարգացման նպատակներին |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | | Աշխատանքների թափանցիկության ապահովում |

| Հավակնություն | Բյուջեի ֆինանսական մուտքերի ավելացում | |
|---|---|---|
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| Ծրագրավորման ապահովում | 30.03.2018թ. | 31.12.2018թ. |
| Անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերում | 30.03.2018թ. | 31.12.2018թ. |

| **Հարցումների մշակման խելացի համակարգ** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | |
| Լիազոր մարմինը | | Վարչապետի աշխատակազմ |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ |
| | Քաղաքացիական | |

| | | |
|---|---|---|
| | հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Քաղաքացիների հարցումների ավտոմատացված մշակում և արագ արձագանքում |
| Հիմնական նպատակը | | Քաղաքացիների հարցումների՝ արհեստական բանականության կիրառմամբ պատասխանատու անձանց ակնթարթային որոշում և հարցման ավտոմատացված նախնական մշակում |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | Ստեղծել ավտոմատացված համակարգ, որը թույլ կտա մուտքագրել, տեքստի վերածել և ծրագրային ապահովման միջոցով ավտոմատ կերպով վերլուծել հարցումների բովանդակությունը, այն ուղղելով պատասխանատու անձին: Համակարգը նաև կիրականացնի նախնական մշակում՝ կատարելով բարձրացված խնդրի նախնական որոշում: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Հանրային ծառայությունների բարելավում, օրինավորության խթանում, |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | | Բարձրացնում է տեղեկատվության հասանելիությունը և արժանահավատությունը, միաժամանակ ծառայությունների տրամադրման ժամանակին ծախսերի նվազում, հանրային ծառայությունների որակի բարելավում |
| Հավակնություն | | Գործընթացների պարզեցում, հստակեցում արագացում, արդյունավետության և հանրային վստահության բարձրացում |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| | | |
| | | |
| *Պարտավորության ֆինանսական հաշվարկը | | |

| **Chat-bot խորհրդատուների համակարգ** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | |
| Լիազոր մարմինը | | Վարչապետի աշխատակազմ |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| Էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Քաղաքացիներին պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրում՝ կոնկրետ հարցերի պատասխանելու միջոցով |
| Հիմնական նպատակը | | Քաղաքացիներին հարմար, արագ, ինտերակտիվ և հասանելի եղանակով խորհրդատվության տրամադրում՝ պետկան մարմնի իրավասության շրջանակում գտնվող հարցերի վերաբերյալ |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | Ստեղծել **Chat-bot խորհրդատուների համակարգ, որոնք ինքնաշխատ կերպով ընդունակ կլինեն պատասխանել քաղաքացիների հարցումներին՝ իրականացնելով խնդրի նախնական գնահատում և խորհրդատվություն** |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Հանրային ծառայությունների բարելավում, օրինավորության խթանում, |

| | | | |
|---|---|---|---|
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Բարձրացնում է տեղեկատվության հասանելիությունը և արժանահավատությունը, միաժամանակ ծառայությունների տրամադրման ժամանակին ծախսերի նվազում, հանրային ծառայությունների որակի բարելավում | | |
| Հավակնություն | Գործընթացների պարզեցում, հստակեցում արագացում, արդյունավետության և հանրային վստահության բարձրացում | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | | |
| | | | |
| | | | |
| *Պարտավորության ֆինանսական հաշվարկը | | | |

| **Open & Social. ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում** | |
|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br>2018 հուլիս – 2020 հունիս | Հանձնառության շարունակություն |
| Լիազոր մարմինը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |

| | | |
|---|---|---|
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Արման Սարգսյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն |
| Էլ. հասցեն | | ceo.arman.sargsyan@nilsr.am |
| Հեռախոսահամարը | | +374 10 208344 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանումներ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Սոցիալական պաշտպանության ոլորտի շահագրգիռ հասարակական կազմակերպություններ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Հանձնառության իրականացումը պայմանավորված է ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երրորդ ծրագրի 7-րդ հանձնառությամբ իրականացվող աշխատանքների շարունակականության ապահովման անհրաժեշտությամբ: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում իրականացվում են սոցիալական պաշտպանության շուրջ 80 պետական ծրագրեր, որոնք ենթադրում են նաև բազմատեսակ ծառայություններ, բազմաբնույթ նախապայմաններով և ընթացակարգերով: Այս առումով կա հանրության իրազեկման և սոցիալական ծառայություններն առավել հասանելի դարձնելու անհրաժեշտություն, ինչը կնպաստի նաև պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության և վստահելիության բարձրացմանը: |
| Հիմնական նպատակը | | «Open&Social» հանձնառության շրջանակներում մշակված ինովացիոն գործիքների միջոցով կապահովվի հանրության առցանց մասնակցությամբ սոցիալական ծառայությունների մանրամասնորեն դասակարգված և ինքնաշխատ ներկայացվող տեղեկատվության հասանելիությունը, սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացում հանրության մասնակցությունը, ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեյտինգավորումը՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | հանրության համար սոցիալական ծառայությունների մատչելիության և իրազեկվածության բարձրացման նպատակով: | | |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | «Open&Social» տվյալների հավաքագրման, համակարգման և վերլուծության վրա հիմնված գործիքի ներդրում | | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ծառայությունների բարելավում, հանրային իրազեկվածության բարձրացում | | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Սույն հանձնառությամբ հանրային մասնակցությունն ապահովող գործընթացների շնորհիվ կբարձրանա պետության կողմից տրամադրվող ծառայությունների որակը, ինչպես նաև կմեծանա տեղեկատվության հասանելիությունը և կբարելավվի հանրային հաշվետվողականության մակարդակը | | |
| Հավակնություն | Սոցիալական ծառայությունների որակի վերաբերյալ հետադարձ կապի շնորհիվ դրանց արդյունավետության բարձրացում, տեղեկատվության մատչելիության և հանրային մասնակցության ապահովում: | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| 1. Շահառուին` իր համար հասանելի սոցիալական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով http://www.esocial.am ինտեգրված սոցիալական ծառայությունների առցիծ տեղեկատվական համակարգում «Open&Social» գործիքի ներդրում: | | 2018թ. հուլիս | 2020թ. հունիս |
| 2. Հարթակի ստեղծում և առկա լուծումների զարգացում ու լրամշակում, որտեղ հանրությանը հնարավորություն կտրվի կոնկրետ ծառայությանը և այդ ծառայությունը մատուցող կազմակերպությանը տալ բալային գնահատականներ, որոնց վերլուծության արդյունքում այդ ծառայությունները և սոցիալական պաշտպանության ոլորտում գործող կազմակերպությունները կունենան որոշակի ռեյտինգ: Շահառուների կարծիքների հիման վրա մատուցվող ծառայությունների վերանայում, աշխատանքային | | 2018թ. հուլիս | 2020թ. հունիս |

| | | |
|---|---|---|
| գործընթացների պարզեցում, ժամանակի կրճատում: | | |

<table>
<tr><th colspan="3">Համայնքային վարչական ծառայությունների էլեկտրոնային հարթակի ստեղծում Հայաստանի խոշոր համայնքների պաշտոնական համացանցային կայքերում</th></tr>
<tr><td colspan="2">Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները</td><td>Պարտավորության մեկնարկ՝ 2018թ.<br>Պարտավորության ավարտ՝ 2020թ.</td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմինը</td><td>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմնի պատասխանատու անձը</td><td>Աշոտ Գիլոյան</td></tr>
<tr><td colspan="2">Պաշտոնը, վարչությունը</td><td>Աշխատակազմի տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ</td></tr>
<tr><td colspan="2">Էլ. հասցեն</td><td>a.giloyan@mta.gov.am</td></tr>
<tr><td colspan="2">Հեռախոսահամարը</td><td>+374 10 511-342</td></tr>
<tr><td rowspan="2">Այլ շահագրգիռ մարմիններ</td><td>Այլ շահագրգիռ պետական մարմիններ</td><td>ՀՀ մարզպետարաններ<br>ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td>Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված</td><td>«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td colspan="2">Կարգավորման ենթակա խնդիրը</td><td>Ներկայումս հանրապետության համայնքների գերակշիռ մասում շահագործվում է ՀՀ</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՀՀ ՏԿԶՆ) նախաձեռնությամբ ստեղծված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ), որի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններն ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված բազմաթիվ գործառույթներն իրականացնում են էլեկտրոնային եղանակով:<br>Համայնքապետարանները, ապահովելով ՀԿՏՀ-ի համացանցային հասանելիությունը, այն ծառայեցնում են նաև որպես պաշտոնական կայք՝ համայնքի բնակչության համար մատչելի դարձնելով իրենց գործունեության, մասնավորապես, տրամադրվող համայնքային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը:<br>ՀՀ ՏԿԶՆ մեկ այլ նախաձեռնության շրջանակներում, մշակվել են ՏԻՄ-երի կողմից տրամադրվող ավելի քան 60 վարչական ծառայությունների (թույլտվությունների, տեղեկանքների, համաձայնեցումների տրամադրում, ընդունելությունների գրանցում և այլն) ընթացակարգերի նկարագրեր՝ տեղեկատվական քարտեր, որոնցում մանրամասնորեն ներկայացված են տվյալ ծառայությանը վերաբերող և դրա շահառուին անհրաժեշտ տեղեկությունները. պահաջվող փաստաթղթեր, տրամադրման ժամկետներ, իրավական հիմքեր, գանձվող վճարներ և այլ:<br>Այդ ծառայությունների ցանկում արդեն իսկ կան այնպիսիք, որոնց մատուցման ամբողջ ցիկլը համայնքապետարանի կողմից իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ ՀԿՏՀ-ի միջոցով:<br>Կարգավորման ենթակա խնդիրը վերը թվարկված արդյունքների համադրումն է՝ պատշաճ նկարագրված համայնքային վարչական ծառայությունների տրամադրման ապահովում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների առավել լայն և կազմակերպված կիրառության միջոցով: |

| | | | |
|---|---|---|---|
| Հիմնական նպատակը | Պարտավորության հիմնական նպատակը հանրապետության խոշոր համայնքներում բնակչությանը մատուցվող համայնքային վարչական ծառայությունների որակի, հասանելիության ու մատչելիության բարելավումն է: | | |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Պարտավորության կատարման շրջանակներում նախատեսվում է աստիճանաբար ավելացնել համայնքապետարանների կողմից տրամադրվող էլեկտրոնային ծառայությունների քանակը (հնարավորության դեպքում՝ դրանց տրամադրումը բնակիչներին իրականացնելով նաև առցանց եղանակով), մեկտեղել և ըստ բնագավառների խմբավորել դրանք էլեկտրոնային հարթակում, որը հասանելի կլինի տվյալ համայնքի համացանցային կայքի գլխավոր էջի ակնհայտ տեսանելի մասում զետեղված հղմամբ:<br>Հանձնառության իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքային ծառայությունների որակի և հասանելիության բարելավում՝ դրանց վրա ծախսվող ժամանակի կրճատման, տրամադրման հարմարավետության ավելացման և հրապարակայնության ապահովման միջոցով: | | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային օրինավորության ամրապնդում<br>Հանրային ծառայության բարելավում<br>Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում | | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Տեխնոլոգիա և նորարարություն | | |
| Հավակնություն | Համացանցային կայքերում էլեկտրոնային հարթակների ստեղծմամբ համայնքային ծառայությունների տրամադրման ընդհանուր գործընթացն առավել կազմակերպված և կանոնակարգված բնույթ կկրի: | | |
| | | | |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| 1. Համայնքապետարաններում շահագործվող համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման փաթեթներում համապատասխան փոփոխությունների մշակում, ՀԿՏՀ-ի գործառնական հնարավորությունների համապատասխանեցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և տեխնիկական չափանիշներին | 2018թ. հուլիս 1 | 2019թ. մարտի 1 |
| 2. Ծրագրային ապահովման մշակումների վերջնարդյունքում ձևավորված՝ ՀԿՏՀ-ի նոր տարբերակի ներդրում և փորձնական շահագործում թվով 10 խոշոր համայնքներում | 2019թ. մարտի 1 | 2019թ. հուլիսի 1 |
| 3. Համայնքային վարչական ծառայությունների մատուցման էլեկտրոնային հարթակի ապահովում հանրապետության թվով 50 խոշոր համայնքներում | 2019թ. հուլիս 1 | 2020թ. հուլիս 1 |

**1. Պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման ենթակա և հայտարարագրվող տվյալների հրապարակման ենթակա տվյալների ցանկի ընդլայնում**

| | |
|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | 2019 հունվար - 2021 հունիս |

| | | |
|---|---|---|
| Լիազոր մարմին | | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Պետական | Կառավարության աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն |
| | Ոչ պետական | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | 2012թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը, որի կարգավորումների համաձայն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը հրապարակում է հայտարարատու անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը: Հրապարակման ենթակա տվյալների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N1835-Ն որոշմամբ, ըստ որի հայտարարագրում առկա մի շարք տվյալներ ենթակա չեն հրապարակման: Եթե ընդունելի և արդարացված է անձը կամ գույքը նույնականացնող տվյալները չհրապարակելը, սակայն մի շարք տեղեկությունների գաղտնագրումը հիմնավոր չէ և որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում: Արդյունքում՝ ձևավորում է ոչ լիարժեք պատկերացում հայտարարագրի բովանդակության վերաբերյալ, ինչպես նաև ողջամիտ կասկածի տակ է դրվում հայտարարատուի գույքի ու եկամուտներ աղբյուրների օրինականությունը: Մասնավորապես, հրապարկման ենթակա չեն հայտարարատու անձանց արտերկրում գրանցված ընկերությունները և գույքը ու դրանցից ստացված եկամուտները: Օրենսդրական կարգավորումների համաձայն, ենթադրվում է, որ պաշտոնյայի գույքն ու եկամուտները հայտարարագրվում են՝ անկախ դրանց գտնվելու վայրից՝ ՀՀ-ում և ՀՀ-ի տարածքից դուրս: Բայց քանի որ գույքի գտնվելու վայրը և եկամուտի աղբյուրը (եկամուտ վճարողը) հրապարակման ենթակա տվյալներ չեն (նաև ՀՀ-ի տարածքում), ուստի հանրությունը տեղեկություններ չի ստանում անձի՝ ՀՀ-ից դուրս գտնվող բիզնեսների, դրանցից ստացվող եկամուտների և գույքի մասին:<br>Բացի այդ, հրապարակման ենթակա չեն նաև նվիրատուների տվյալները, ինչի պատճառով |

| | |
|---|---|
| | հնարավոր չէ գնահատել նվերի արժեքի համադրելիությունը նվիրատուի և հայտարարատուի միջև առկա հարաբերությունների բնույթին: Տվյալների փակ լինելը հանրության մոտ կոռուպցիոն ռիսկերի մասին տարաբնույթ կասկածների տեղիք է տալիս, մինչդեռ եթե հանրությանը հասանելի լինի տեղեկությունը նվիրատուի, ինչպես նաև հայատարարատու հետ վերջինիս արնակցական կապի մասին, ապա կասկածները կփարատվեն և անհիմն շահարկումների տեղիք չեն տա:<br>Ի լրումն նշվածի, սահմանափակ է հանրային ծառայողների հայտարարագրվող գույքի շրջանակը: Մասնավորապես Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի համաձայն հայատարարատու անձինք, ի թիվս այլ գույքի, պարտավոր են հայտարարագրել նաև 8 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք, որն օտարվել կամ ձեռք է բերվել հարկային տարում: Այս գնային շեմը շատ բարձր է, ինչի պատճառով հայտարարագրման ենթակա գույքի ծավալը/շրջանակը ընդգրկուն չէ: |
| Հիմնական նպատակը | Հանրությանը հասանելի դարձնել հայտարարագիր անձանց գույքի և եկամուտների մասին առավել ընդհանրական պատկեր՝ բացահայտելու շահերի բախումն ու ու կոռուպցիոն ռիսկերը: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Հրապարակել գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնող պաշտոնատար հայտարարատու անձանց՝ արտերկրում գրանցված ընկերությունները և գույքը ու դրանցից ստացված եկամուտները՝ նշելով երկիրը և բնակավայրը, եկամուտ վճարողի անունը/անվանումը, նվիրատուի անունը/անվանումը և փոխկապակցվածությունը պաշտոնատար անձի հետ, ինչես նաև հայտարարագրել ու հրապարակել 3 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային օրինավորության խթանում |

| | |
|---|---|
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Գույքի և եկամուտների առավել լիարժեք ներկայացումը հանրությանը հնարավորություն ապահովել կտա ապահովել առավել լիարժեք հանրային վերահսկողություն և կխթանի հանրային ծառայության օրնավորությունը/բարեվարքությունը: |
| Հավակնություն | Ակնկալվում է ապահովել բարձրաստիճան պաշտոնատար անձանց հաշվետվողականության բարձրացում և նրանց նկատմամբ վստահության բարձրացում |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ<br>*Ընթացիկ գործողություններ* | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| 1. Համապատասխան իրավական ակտերի՝ Հանրային ծառայության մասին օրենքի և կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N1835-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի մշակում | 2019 հունվարի 1 | 2019 մարտի 31 |
| 2. Իրավական ակտի ընդունում և կիրարկման տեխնոլոգիական ապահովում | 2019թ. ապրիլի 1 | 2019թ. մայիսի 31 |
| 3. Հանրային ծառայության մասին օրենքում կատարել փոփոխություն | 2019թ. ապրիլի 1 | 2019թ. հունիսի 31 |

| **2. ՀՀ հողային կադաստրի հանրային հասանելիության ապահովում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 2019 հունվար - 2021 հունիս |
| Լիազոր մարմինը | | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կոմիտե |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր, Պետական գույքի կառավարման գործակալություն, ՏԻՄեր |
| | Քաղաքացիական | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն |

| | | |
|---|---|---|
| | հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Հայաստանի Հանրապետությունում հողային կադաստրը փակ է, և որևէ տարածքի մասին տեղեկատվություն ստանալու հարկավոր է դիմել ՀՀ անշարժ գույքի կառավարման կոմիտե կամ համապատասխան ՏԻՄ: Հողօգտագործման սխեմաները, գոտիավորման նախագծերը և տարածական պլանավորման փաստաթղթերը թեև օրենքով հանդիսանում են բաց փաստաթղթեր, դրանք հասանալի չեն, կամ հասանելի են այնպիսի ձևաչափերով, որ ընկալելի չեն քաղաքացիների համար: Այս փակ ռեժիմի արդյունքում տարիներ ՀՀ անշարժ գույքի կոմիտեն բավականին մեծ գումարով վաճառել է տեղեկատվությունը քաղաքացիներին, իսկ համայնքների ղեկավարներն ունեցել են հողամասերը կամայական տնօրինելու հնարավորություն՝ առանց որևէ հանրային վերահսկողության հնարավորության: |
| Հիմնական նպատակը | | Ապահովել հողային կադաստրի և հողօգտագործման սխեմաների ու գոտիավորման փաստաթղթերի թափանցիկությունը և, այդպիսով, համապատասխան կառույցների հանրային հաշվետվողականությունը: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | | Ապահովել հողային կադաստրի և հողօգտագործման սխեմաների ու գոտիավորման փաստաթղթերի ամբողջական հասանելիությունը հանրությանը՝ քարտեզի միջոցով, որոնման հնարավորությամբ, ապահովելով անձնական տվյալների պաշտպանության ռեժիմը: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարում, հանրային վստահության բարելավում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | | Պետության և ՏԻՄերի կողմից տնօրինվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակումը կապահովի հողային ռեսուրսների մասին տեղեկատվության և դրանց վերաբերյալ որոշումների հանրային հասանելիությունը, կօգնի ապահովել հանրային հաշվետվողականություն, ինչի արդյունքում հնարավոր կդարձնի հանրային |

| | | | |
|---|---|---|---|
| | վերահսկողությունը հողօգտագործման սխեմաների ու գոտիավորման փաստաթղթերի կիրարկման նկատմամբ: | | |
| Հավակնություն | ՀՀ կառավարության և ՏԻՄերի կողմից հողօգտագործման վերաբերյալ ընդունվող որոշումների թափանցիկության ապահովում, հանրային պատշաճ վերահսկողություն և վստահության բարձրացում այդ մարմինների նկատմամբ | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| *Ընթացիկ գործողություններ* | | | |
| Վերազինել և էլեկտրոնային եղանակով քարտեզագրել անշարժ գույքի կադաստրի տվյալների բազան՝ ապահովելով կապը հողօգտագործման սխեմաների և գոտիավորման նախագծերի հետ, ինչպես նաև իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի հետ | | 2019թ. հունվարի 1 | 2020թ. դեկտեմբերի 31 |
| Հրապարակել և որոնման հնարավորությամբ հասանելի դարձնել կադաստրի տվյալները՝ ապահովելով անձնական տվյալների պաշտպանությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխան | | 2021թ. հունվարի 1 | 2021թ. հունիսի 31 |

| **3. Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 2018 հոկտեմբեր - 2021 հունիս |
| Լիազոր մարմինը | | Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական | ՀՀ արդարադատության նախարարություն |

| | | |
|---|---|---|
| | մարմիններ | |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Հայաստանի Հանրապետությունը Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) շրջանակներում քայլեր է ձեռնարկում ապահովելու հանքարյունաբերող ընկերությունների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը 2020 թվականին և մշակել է նախագիծ, որի համաձայն պետք է փոփոխվի Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին օրենքը՝ ապահովելով իրական սեփականատերերի վերաբերյալ գրանցումը և հրապարակայնության ապահովումը: Այս թափանցիկության պահանջը պետք է վերաբերի ոչ միայն հանքարդյունաբերող ընկերություններին, բայց նաև ժամանակի ընթացքում ներառի այլ ընկերությունների ևս, նախապատրաստելով Հայաստանի անդամակցությունը Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության Հարկային նպատակներով թափանցիկության ապահովման և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումին: Թեև այս գործընթացն ընթացքի մեջ է, սակայն անհրաժեշտ է այն արագացնել և փուլային լուծումներով հասանելի դարձնել ընկերությունների մասին տվյալները:<br>Մասնավորապես, շուտափույթ պետք է առաջիկա խորհրդարանական ընտրությունների նախաշեմին հրապարակային դարձնել զանգվածային լրատվամիջոցների իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը, որը բխում է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ կողմից խորհրդարանական ընտրությունների հանձնարարականներից: ԶԼՄ-ների կողմնակալ լուսաբանումները տարբեր |

| | |
|---|---|
| | քաղաքական գործընթացների վերաբերյալ կասկածներ են հարուցում նրանց քաղաքական կապերի վերաբերյալ և խաթարում հանրային վստահությունը լրատվության և պետական կարգավորող մարմինների աշխատանքի նկատմամբ: |
| Հիմնական նպատակը | Ապահովել արդեն իսկ սկսված իրավաբանական անձանց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության գործընթացը՝ առաջնահերթ երաշխավորելով ԶԼՄ-ների իրական սեփականատերերի թափանցիկությունը: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Փոփոխություն կատարել Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքում և պարտավորեցնել ԶԼՄ-ներին իրենց կայքերում ապահովել իրենց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային վստահության բարելավում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | ԶԼՄների իրական սեփականատերերի բացահայտումը կնպաստի հանրային վստահությանը ԶԼՄ-ների, ինչպես նաև հասկանալի կդարձնի տարբեր քաղաքական գործընթացների լուսաբանման հիմքերը՝ թույլ տալով հասարակությանը ստանալ ճիշտ տեղեկություն իրադարձությունների, պետական մարմինների և պաշտոնյաների նկատմամբ և ընդունել իրազեկ որոշումներ: |
| Հավակնություն | Քաղաքական գործընթացների վերաբերյալ պատշաճ և անկողմնակալ լուսաբանում ԶԼՄների կողմից, ընտրողների կողմից իրազեկ ընտրության կատարում, կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործունության վերաբերյալ ստահոդ լուրերի կանխարգելում և  վստահության բարձրացում: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի  չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| 1. Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի մշակում | 2018թ. հոկտեմբեր 1 | 2018թ. դեկտեմբերի 31 |
| 2. Իրավական ակտի ընդունում և կիրարկման ապահովում | 2019թ. | 2019թ. |

| | | |
|---|---|---|
| | փետրվարի 1 | փետրվարի 28 |

| Երևանի քաղաքապետերանի պաշտոնական **www.yerevan.am** կայքի զարգացում | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br><br>**2018թ. հուլիս - 2020թ. հունիս** | | Շարունակական նախաձեռնություն |
| Լիազոր մարմինը | | Երևանի քաղաքապետարան |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձ | | Սարգիս Մանուկյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Տնօրեն, "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն" ՓԲԸ |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Քաղաքացիներ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Երևանի քաղաքապետարանի կողմից տարվող աշխատանքները դարձնել էլ ավելի թափանցիկ և հանրամատչելի, իսկ մատուցվող ծառայությունները՝ հարմարավետ: |
| Հիմնական նպատակը | | Հանրային վստահության բարելավում<br>Համայնք-քաղաքացի թափանցիկության հարաբերությունների մակարդակի բարձրացում<br>Մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հաշվետվողական համակարգի բարելավում<br>Գործառույթների կառավարում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ |

| | |
|---|---|
| Պարտավորության հակիրճ նկարագիրը | Համակարգը, տեխնոլոգիաների և ժամանակակից քաղաքակիրթ պահանջների զարգացմանը զուգահեռ, անընդհատ ունի արդիականացման, նոր գործիքներով համալրման կարիք: Նախատեսված է համակարգի ծրագրային հենքի բարելավում, ծառայությունների որակի բարձրացում և ընդլայնում, էլեկտրոնային դիմումների նոր ձևաթղթերով և ուղեցույցներով համալրում, քաղաքացիներին մատուցվող առցանց ծառայությունների ավելացում, նոր համակարգերի հետ ինտեգրում: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ծառայությունների բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հանրային վստահության բարձրացում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Թափանցիկություն<br>Հաշվետվողականություն<br>Մասնակցություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն |
| Հավակնություն | Համակարգի բարելավման շնորհիվ կբարձրանա տեղեկատվության հասանելիությունը և արժանահավատությունը, կբարելավվի մատուցվող հանրային ծառայությանների որակը և հանրային հաշվետվողականության մակարդակը: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| 1. https://www.yerevan.am Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի համալրումը էլեկտրոնային ծառայություններ մատուցող և համայնքի աշխատանքն առավել թափանցիկ դարձնող նոր գործիքներով:<br>2. Քաղաքացուն մատուցվող առցանց ծառայությունների ցանկի ընդլայնում՝ առցանց վճարումների, կարճ հաղորդագրությունների միջոցով ծանուցումներ, առցանց հարցումներ: | 2018թ. հուլիս | շարունակական |

<table>
<tr><th colspan="3">Երևան համայնքի մանկապարտեզների էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում</th></tr>
<tr><td colspan="2">Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br><br>2018թ. հուլիս – 2020թ. հունիս</td><td>Նախաձեռնության նոր փուլ</td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմինը</td><td>Երևանի քաղաքապետարան</td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմնի պատասխանատու անձ</td><td>Սարգիս Մանուկյան</td></tr>
<tr><td colspan="2">Պաշտոնը, վարչությունը</td><td>Տնօրեն, "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն" ՓԲԸ</td></tr>
<tr><td rowspan="2">Այլ շահագրգիռ մարմիններ</td><td>Կառավարություն</td><td>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ<br>Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմ</td></tr>
<tr><td>Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված</td><td>Քաղաքացիներ</td></tr>
<tr><td colspan="2">Կարգավորման ենթակա խնդիրը</td><td>Հեշտացնել Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների գործառույթները, դարձնել դրանք առավել թափանցիկ և վերահսկելի, իսկ քաղաքացու համար՝ առավել հարմարավետ: Համակարգը նախատեսված է ընդլայնել, և քաղաքացիների համար ստեղծել մանկապարտեզ առցանց հերթագրման և ընդունման համակարգ:</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td><td>Մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հաշվետվողական համակարգի բարելավում<br>Գործառույթների կառավարում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ</td></tr>
<tr><td colspan="2">Պարտավորության հակիրճ նկարագիրը</td><td>Քաղաքացիներին մատուցվող առցանց ծառայությունների ավելացում և արդիականացում:<br>Նոր համակարգերի հետ ինտեգրում:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային ծառայությունների բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հանրային վստահության բարձրացում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Թափանցիկություն<br>Հաշվետվողականություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն |
| Հավակնություն | Համակարգի զարգացումը և համալրումը ժամանակակից հնարավորություններով կնպաստի համայնքի կողմից տարվող գործունեության հանդեպ քաղաքացու վստահության բարձրացմանը, վերահսկող մարմինների և նրա ստորաբաժանումների միջև իրականացվող աշխատանքների որակի բարելավմանը, կբարձրանա տեղեկատվության արժանահավատությունը: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| 1. Համակարգի նոր գործիքներով համալրում:<br>2. ՔԿԱԳ-ի տվյալների բազայի հետ ինտեգրումը:<br>3. Երեխաների մանկապարտեզից մեկ այլ մանկապարտեզ տեղափոխման առցանց հայտի գործիքի ստեղծում և ներդրում:<br>4. Մանկապարտեզ առցանց հերթագրման համակարգի ստեղծում և ինտեգրում: | 2018թ. հուլիս | 2020թ. հունիս |

| Երևան համայնքի գովազդային միջոցների հաշվառման և վերահսկման տեղեկատվական համակարգի զարգացում | |
|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br><br>**2018թ. հուլիս - 2020թ. հունիս** | Նախաձեռնության նոր փուլ |

| | | |
|---|---|---|
| Լիազոր մարմինը | | Երևանի քաղաքապետարան |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձ | | Սարգիս Մանուկյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Տնօրեն, "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն" ՓԲԸ |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ<br>Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Իրավաբանական անձիք |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Գովազդային միջոցների հաշվառման և վերահսկման տեղեկատվական համակարգի ներդրումն առավել վերահսկելի դարձրեց գովազդային դաշտը: Ներկայիս լուծման ենթակա խնդիրներն են գովազդային ուրվանկարների համաձայնեցման գործընթացի պարզեցումը՝ տրամադրելով հետևյալ ծառայությունները. գովազդի ուրվանկարի առցանց համաձայնեցում, գովազդի տեղադրման թույլտվության առցանց տրամադրում, պետական տուրքի առցանց վճարում կատարելու հնարավորություն: |
| Հիմնական նպատակը | | Մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հաշվետվողական համակարգի բարելավում<br>Գործառույթների կառավարում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ<br>Քաղաքացիների համար առավել հարմարավետ ծառայությունների մատուցում |
| Պարտավորության հակիրճ նկարագիրը | | Բաց տվյալների սկզբունքի վրա հիմնված համակարգի կատարելագործում:<br>Քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ավելացում և արդիականացում:<br>Նոր համակարգերի հետ ինտեգրում: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Հանրային ծառայությունների բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հանրային վստահության բարելավում |

| | | | |
|---|---|---|---|
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Թափանցիկություն<br>Հաշվետվողականություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն | | |
| Հավակնություն | Էլեկտրոնային համակարգի զարգացման հիմնական նպատակներն են՝ քաղաքացուն առավել հարմարավետ, որակյալ, թափանցիկ և ժամանակակից ծառայությունների մատուցումը: | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| 1. Համակարգի՝ նոր գործիքներով համալրում ու ծրագրային հենքի բարելավում:<br>2. Կենտրոնական գանձապետարանի համակարգի հետ ինտեգրում<br>3. Էլեկտրոնային եղանակով գովազդի թույլտվության տրամադրում:<br>4. Տեղադրված գովազդային ուրվանկարի պետական տուրքի էլեկտրոնային եղականով վճարման համակարգերի ստեղծում և ներդրում: | | 2018թ. հուլիս | 2020թ. հունիս |

| | |
|---|---|
| **Երևանի քաղաքապետարանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների e-school էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում և զարգացում** | |
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br><br>**2018թ. հուլիս – 2020թ. հունիս** | Նոր նախաձեռնություն |
| Լիազոր մարմինը | Երևանի քաղաքապետարան |
| Լիազոր մարմնի պատասխանատու | Սարգիս Մանուկյան |

| | | |
|---|---|---|
| անձ | | |
| Պաշտոնը, վարչությունը | | Տնօրեն, "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն" ՓԲԸ |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ<br>Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Քաղաքացիներ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Երևանի քաղաքապետարանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներ հաճախող երեխաների հաշվառման և վերահսկման տեղեկատվական համակարգի ներդրում այցելությունների և ֆինանսական դաշտն առավել վերահսկելի դարձրեց նպատակով: Համակարգը նախատեսված է ընդլայնել, և քաղաքացիների համար հավելված, որի միջոցով հնարավոր կլինի իրականացնել պարտքի հարցում և կատարել համապատասխան առցանց վճարում: |
| Հիմնական նպատակը | | Մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հաշվետվողական համակարգի բարելավում<br>Գործառույթների կառավարում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ<br>Քաղաքացիների համար առավել հարմարավետ ծառայությունների մատուցում |
| Պարտավորության հակիրճ նկարագիրը | | Բաց տվյալների սկզբունի վրա հիմնված համակարգի ստեղծում:<br>Քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ավելացում: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Հանրային ծառայությունների բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հանրային վստահության բարելավում |

| | | | |
|---|---|---|---|
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Թափանցիկություն<br>Հաշվետվողականություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն | | |
| Հավակնություն | Էլեկտրոնային համակարգի ստեղծման հիմնական նպատակներն են թափանցիկության, հաշվետվողականության, վստահության բարձրացումը, առցանց ծառայությունների ավելացումը, քաղաքացուն առավել հարմարավետ, որակյալ և ժամանակակից ծառայությունների մատուցումը: | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| 1. Համակարգի ստեղծում<br>2. Համակարգի ներդրում<br>3. Համակարգի աշխատանքային նոր գործիքներով համալրում՝ հիմնվելով օգտվողների փորձի վրա:<br>4. Էլեկտրոնային եղանակով վճարումների ընդունում:<br>5. Առցանց ֆինանսական հաշվետվությունների ստեղծում: | | 2018թ. հուլիս | 2020թ. հունիս |

| | |
|---|---|
| Երևանի քաղաքապետարանի և իր ստորաբաժանումների աշխատակազմի կառավարման, գործառույթների ավտոմատացման և վերահսկման համակարգի ստեղծում | |
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br><br>**2018թ. հուլիս – 2020թ. հունիս** | Նոր նախաձեռնություն |
| Լիազոր մարմինը | Երևանի քաղաքապետարան |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձ | Սարգիս Մանուկյան |

| | | |
|---|---|---|
| Պաշտոնը, վարչությունը | | Տնօրեն, "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն" ՓԲԸ |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ<br>Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմ<br>Երևանի քաղաքապետարանի ստորաբաժանումների աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Ստեղծել Երևանի քաղաքապետարանի և իր ենթակառուցվածքների անձնակազմի կառավարման միասնական համակարգ: |
| Հիմնական նպատակը | | Հաշվետվողական համակարգի բարելավում<br>Գործառույթների կառավարում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ |
| Պարտավորության հակիրճ նկարագիրը | | Անձնակազմի կառավարման միասնական համակարգը իրենից ներկայացնելու է Երևանի քաղաքապետարանի և իր ստորաբաժանումների ներկա և նախկին աշխատակիցների հսկայական բազա, որի միջոցով հնարավոր կլինի իրականացնել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված կադրերի կառավարման գործընթացի հստակ, ժամանակին և հեշտ ղեկավարմանը: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Ադմինիստրատիվ կառավարման բարելավում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | | Հաշվետվողականություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն |

| | | |
|---|---|---|
| Հավակնություն | Էլեկտրոնային համակարգի ստեղծման հիմնական նպատակներն են հաշվետվողականության բարելավումը, նորարարական տեխնոլոգիաների միջոցավ իրականացվող գործառույթների պարզեցումը և հստակեցում, կառավարման որակի բարելավում, օգտագործվող ռեսուրսների կրճատում, թափուր աշխատատեղերի համակարգումը: | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| 1. Համակարգի ստեղծում<br>2. Համակարգի ներդրում Երևանի քաղաքապետարանում<br>3. Համակարգի ներդրում Երևանի քաղաքապետարանի ստորաբաժիններում: | 2018թ. հուլիս | 2020թ. հունիս |

| | | |
|---|---|---|
| Կառուցապատման էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգի զարգացում | | |
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br><br>**2018թ. հուլիս – 2020թ. հունիս** | | Նախաձեռնության նոր փուլ |
| Լիազոր մարմինը | | Երևանի քաղաքապետարան |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձ | | Սարգիս Մանուկյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Տնօրեն, "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն" ՓԲԸ |
| Այլ շահագրգիռ | Կառավարություն | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ<br>Երևան քաղաքի վարչական շրջանների աշխատակազմեր |

| | | |
|---|---|---|
| մարմիններ | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ<br>«Վեոլիա ջուր» ՓԲԸ<br>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ<br>Քաղաքացիներ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Զարգացնել կառուցապատման էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգը՝ ընդլայնելով և բարելավելով համագործակցությունների շրջանակը, համապատասխանեցնելով ընթացիկ օրենսդրական փոփոխություններին: |
| Հիմնական նպատակը | | Հաշվետվողական համակարգի բարելավում<br>Պետական և մասնավոր կառույցների համագործակցության որակի բարելավում<br>Գործառույթների կառավարում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ<br>Շինարարության թույլտվությունների տրամադրման ժամկետների վերահսկում<br>Կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը<br>Գործարար միջավայրի բարելավում |
| Պարտավորության հակիրճ նկարագիրը | | Հաշվետվողական համակարգի բարելավում, ժամկետների կրճատում, օգտագործվող ռեսուրսների խնայողության բարձրացում, փաստաթղթերի թվայնացում, գործառույթների կառավարում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | | Հանրային ծառայությունների բարելավում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հանրային վստահության բարելավում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | | Թափանցիկություն<br>Հաշվետվողականություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն |
| Հավակնություն | | Էլեկտրոնային համակարգի զարգացման հիմնական նպատակներն են հաշվետվողականության բարելավումը, նորարարական տեխնոլոգիաների միջոցավ իրականացվող գործառույթների պարզեցումը և հստակեցում, կառավարման որակի բարելավում, օգտագործվող ռեսուրսների կրճատում, գործարար միջավայրի բարելավումը: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| 1. Ինտեգրում e-permits համակարգի հետ<br>2. "Doing Business" վարկանիշային աղյուսակում ՀՀ դիրքերի բարելավում | 2018թ. հուլիս | 2020թ. հունիս |

| Քաղաքացիների առաջարկների և որոշումներ ընդունման, առկա խնդիրների քննարկումների "Ակտիվ քաղաքացի" հարթակի ստեղծում | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br><br>**2018թ. հուլիս - 2020թ. հունիս** | | Նոր նախաձեռնություն |
| Լիազոր մարմինը | | Երևանի քաղաքապետարան |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձ | | Սարգիս Մանուկյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Տնօրեն, "Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն" ՓԲԸ |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Քաղաքացիներ |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Քաղաքացիների քաղաքում առկա խնդիրներն ներգրավածության և քննարկվող հարցերի ակտիվ մասնակցության ապահովում: Նաև այս էլեկտրոնային գործիքը հնարավորություն կտա ավելի շոշափելի դարձնել «մասնակցային կառավարում» եզրույթը և դարձնել այն քաղաքի բնակիչների առօրյա կյանքի անբաժանելի մասը: |

| | | | |
|---|---|---|---|
| Հիմնական նպատակը | Հանրային վստահության բարելավում<br>Համայնք-քաղաքացի թափանցիկության հարաբերությունների մակարդակի բարձրացում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հանրային կարծիքների հավաքագրում | | |
| Պարտավորության հակիրճ նկարագիրը | Ստեղծել հարթակ բոլոր այն մարդկանց համար, ովքեր մտահոգ են Երևան քաղաքի խնդիրներով և ցանկանում են իրենց մասնակցությունն ունենալ քաղաքային կառավարման բարդ ու պատասխանատու գործին: | | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային քննարկումների իրականացում<br>Թափանցիկության ապահովման որակի բարելավում<br>Հանրային վստահության բարձրացում | | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Թափանցիկություն<br>Մասնակցություն<br>Տեխնոլոգիա և նորարարություն | | |
| Հավակնություն | Համակարգի ստեղծման շնորհիվ կբարձրանա տեղեկատվության հասանելիությունը և արժանահավատությունը,ավելի սերտ կլինի համայնք-քաղաքացի կապը, շոշափելի կդառնա «մասնակցային կառավարում» եզրույթը: | | |
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| 1. Կայքի ստեղծում<br>2. Կայքի հանրությանը ներկայացում | | 2018թ. հուլիս | 2019թ. հունիս |

<table>
<tr><td colspan="3">Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը ուղղված օրենսդրական փոփոխություններ</td></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմին</td><td>ՀՀ Արդարադատության նախարարություն</td></tr>
<tr><td rowspan="2">Այլ շահագրգիռ մարմիններ</td><td>Կառավարություն</td><td>ՀՀ կառավարություն, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով</td></tr>
<tr><td>Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված</td><td>Արամ Ազիզյան</td></tr>
<tr><td colspan="2">Ներկա իրավիճակը/ կարգավորման ենթակա հարցերը</td><td>«Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխությունների և լրացումների առաջարկություններ:<br><br>1. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածում՝<br><br>ա) 4 -րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br><br>Հանձնաժողովի անդամները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել ներկայացուցչական որևէ մարմնի անդամ, զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեության:<br><br>Հանձնաժողովի անդամների հետ փոխկապակցված անձինք չեն կարող աշխատել ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներում՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոններում:<br><br>բ) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| | Հանձնաժողովի անդամները, **աշխատակազմի աշխատակիցներն և նրանց հետ փոխկապակցված անձինք** իրավունք չունեն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նվերներ կամ նյութական այլ օգուտներ ստանալ ապրանքային շուկայի մասնակիցներից:<br><br>2. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածում՝<br><br>ա) լրացնել 7-րդ կետը հետևյալ բովանդակությամբ՝<br><br>Հանձնաժողովի անդամները, աշխատակազմի աշխատակիցներն և նրանց հետ փոխկապակցված անձինք իրենց պաշտոնավարման ընթացքում չեն կարող ունենալ կարգավորվող անձանց արժեթղթեր, բաժնեմաս կամ դրանցում կատարել ներդրումներ:<br><br>բ) լրացնել 8-րդ կետը հետևյալ բովանդակությամբ՝<br><br>Հանձնաժողովի անդամն իրավունք չունի իր պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարելու պահից երեք տարվա ընթացքում զբաղեցնել ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներում՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոն: | | |
| Հիմնական նպատակը | «Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու միջոցով նպաստել ՏՄՊՊՀ հաշվետվողականության և թափանցիկության բարելավմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: | | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Հանրային վստահության բարելավում, հանրային օրինավորության խթանում: | | |
| Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում | Թափանցիկություն | Հաշվետվողականություն | Հանրային մասնակցություն |

| | V | V | | |
|---|---|---|---|---|
| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | | Նոր կամ ընթացիկ պարտավորություն | Մեկնարկի օր | Ավարտի օր |
| 1. Հանրային քննարկումների կազմակերպում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ<br>2. Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի մասին ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացում | | նոր | 01.10.2018<br>01.01.2019 | 31.12.2018<br>31.05.2019 |

| «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխությունների և լրացումների առաջարկություններ | | |
|---|---|---|
| Լիազոր մարմին | | ՀՀ արդարադատության նախարարություն |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Կառավարություն | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Արամ Ազիզյան |

| | |
|---|---|
| Ներկա իրավիճակը/ կարգավորման ենթակա հարցերը | «**Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին**» **օրենքում փոփոխությունների և լրացումների առաջարկություններ**:<br>1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (25 դեկտեմբերի 2003 թվականի, ՀՕ-18-Ն 3-րդ հոդվածում լրացնել 3-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝<br><br>Սակագներում չներառվող ծախսերի ցանկը սահմանում է կառավարությունը:<br><br>2. Օրենքի 9-րդ հոդվածում՝<br><br>ա) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br><br>Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքից, պայմանով, որ այդ աշխատանքները չեն ֆինանսավորվում կարգավորվող անձանց կողմից:<br>***Հանձնաժողովի անդամի հետ փոխկապակցված անձը չի կարող զբաղեցնել կարգավորվող անձանց՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոն***:<br>բ) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br><br>Հանձնաժողովի անդամները, աշխատակազմի աշխատակիցներն և ***նրանց հետ փոխկապակցված անձինք*** իրենց պաշտոնավարման ընթացքում չեն կարող ունենալ կարգավորվող անձանց արժեթղթեր, բաժնեմաս կամ դրանցում կատարել ներդրումներ:<br>գ) 4 -րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br><br>Հանձնաժողովի անդամն իրավունք չունի իր պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարելու պահից երեք տարվա ընթացքում զբաղեցնելու հանրային |

<table>
<tr><td></td><td colspan="4">ծառայությունների ոլորտի կարգավորվող ընկերության՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոն:<br>3. Օրենքի 11-րդ հոդվածում՝ 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝<br><br>Հանձնաժողովը <u>հրապարակում է ներկայացված հայտերը</u> զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային էջի և այլ միջոցներով:</td></tr>
<tr><td>Հիմնական նպատակը</td><td colspan="4">«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման միջոցով նպաստել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:</td></tr>
<tr><td>ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը</td><td colspan="4">Թափանցիկության և հաշվետվողականության ապահովում<br>Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում</td></tr>
<tr><td rowspan="2">Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում</td><td>Թափանցիկություն</td><td>Հաշվետվողականություն</td><td colspan="2">Հանրային մասնակցություն</td></tr>
<tr><td>V</td><td>V</td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="2">Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ</td><td>Նոր կամ ընթացիկ պարտավորություն</td><td>Մեկնարկի օր</td><td>Ավարտի օր</td></tr>
<tr><td colspan="2">1. Հանրային քննարկումների կազմակերպում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ<br>2. Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացում</td><td>Նոր</td><td>01.10.2018<br><br>01.01.2019</td><td>31.12.2018<br><br>31.05.2019</td></tr>
</table>

<table>
<tr><th colspan="3">Հանրային ծառայությունների սակագներում չներառվող ծախսերի ցանկի սահմանում</th></tr>
<tr><td colspan="2">Լիազոր մարմին</td><td>ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն</td></tr>
<tr><td rowspan="2">Այլ շահագրգիռ մարմիններ</td><td>Կառավարություն</td><td>ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով</td></tr>
<tr><td>Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված</td><td>Արամ Ազիզյան</td></tr>
<tr><td colspan="2">Ներկա իրավիճակը/ կարգավորման ենթակա հարցերը</td><td>Ինչպես գիտենք ՀՀ-ում բնական մենաշնորհ ունեցող կազմակերպությունների կողմից բնակչությանը տրվող ծառայությունների / էլեկտրական էներգիայի, գազի, ջրի և այլն/ վճարների արժեքները, այն է Սակագները, սահմանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը /ՀԾԿՀ/ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվարկների /հայտի/ հիման վրա:<br>Այդ կազմակերպությունների կողմից տրված հաշվարկներում այն ծախսերը, որոնք ուղղակի չեն մասնակցում նպատակային գործողությունների իրականացմանը, չպետք է ներառվեն սակագների ձևավորման հաշվարկներում: Առաջարկում եմ կառավարության որոշմամբ սահմանել այն ծախսերի ցանկը, որոնք ՀԾԿՀ-ն չպետք է ներառի սակագների ձևավորման հաշվարկներում:<br>Այդպիսի ծախսերն են.<ul><li>Կապիտալ շինարարության կամ վերանորոգման ծախսեր, որոնք կատարվել են վարչական շենքերում,</li><li>Տարածքների վարձակալության ծախսերի այն մասը, որոնք նախ գերազանցում են կադաստրային արժեքը և որոնք կատարվել են ոչ նպատակային,</li><li>Անշարժ և շարժական գույքի ձեռքբերման ծախսերի այն մասը, որոնք նախ գերազանցում են գործող արժեքը և որոնք ձեռք են բերվել ոչ նպատակային,</li><li>Անշարժ և շարժական գույքի վարձակալության ծախսերի այն մասը, որոնք գերազանցում են գործող վարձակալական արժեքներից և որոնք վարձակալվել են ոչ նպատակային,</li><li>Անշարժ և շարժական գույքի վերանորոգման ծախսերի այն մասը, որոնք կատարվել են ոչ նպատակային,</li></ul></td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| | • Տրանսպորտային ծախսերի այն մասը, որոնք կատարվել են ոչ նպատակային,<br>• Կապի միջոցների ծախսերի այն մասը, որոնք կատարվել են ոչ նպատակային,<br>• Գործուղման ծախսերի այն մասը, որոնք կատարվել են ոչ նպատակային,<br>• Ներկայացուցչական ծախսերը,<br>• Գովազդի ծախսերը,<br>• Գնումներ, որոնք իրականացվել են գործող իրավական նորմերին հակասող ընթացակարգերով և խախտումներով,<br>• Օգնությունները,<br>• Եվ այլն:<br><br>Վերը թվարկվածս ծախսերը դրանք ռիսկային ծախսեր են, որոնք պետք է պարտադիր ՀԾԿՀ-ի կողմից ենթարկվեն համակողմանի ուսումնասիրության:<br>Սակագնի ներկայացված հաշվարկը պետք է պարտադիր ենթակա լինի հրապարակման, որպեսզի անկախ փորձագետները ևս հնարավորություն ունենան կատարելու ուսումնասիրություն: Դա իր հերթին կնվազեցնի ՀԾԿՀ-ի կողմից որոշումների ռիսկայնությունը և հասարակության մեջ կբարձրացնի որոշման արդարացիությունը: | | |
| Հիմնական նպատակը | Կառավարության որոշմամբ հանրային ծառայությունների սակագների հաշվարկներում ընդգրկվող ծախսերի ցանկի սահմանման միջոցով նպաստել բնական մենաշնորհների գործունեության թափանցիկությանն ու վերահսկողությանը, հանրային օրինավորության խթանմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: | | |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Թափանցիկության և հաշվետվողականության ապահովում<br><br>Հանրային օրինավորության խթանում<br><br>Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում | | |
| Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում | Թափանցիկություն | Հաշվետվողականություն | Հանրային մասնակցություն |
| | V | V | |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Նոր կամ ընթացիկ պարտավորություն | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|---|
| 1. Հանրային քննարկումների կազմակերպում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ սակագների ձևավորման հաշվարկներում չներառվող ծախսերի վերաբերյալ<br>2. Հանրային ծառայությունների սակագներում չներառվող ծախսերի ցանկի սահմանում<br>3. Կառավարության որոշմամբ հանրային ծառայությունների սակագներում չներառվող ծախսերի ցանկի ընդունում | Նոր | 01.10.2018<br>01.01.2019<br>28.02.2019 | 31.12.2018<br>28.02.2019<br>31.05.2019 |

| Փոխկապակցված անձանց մասին օրենքի ընդունում | | |
|---|---|---|
| Լիազոր մարմին | | ՀՀ արդարադատության նախարարություն |
| Այլ | Կառավարություն | ՀՀ կառավարության աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն |

<table>
<tr><td>շահագրգիռ մարմիններ</td><td>Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված</td><td colspan="4">Արամ Ազիզյան</td></tr>
<tr><td colspan="2">Ներկա իրավիճակը/ կարգավորման ենթակա հարցերը</td><td colspan="4">Պետական կառույցներում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն ենք համարում Փոխկապակցված անձանց մասին օրենքի ընդունումը, որը կկարգավորվի և պարտադիր կլինի բոլոր օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի համար: Օրենքով պետք է հստակ սահմանվեն իրավաբանական և ֆիզիկական անձանց դեպքում, ովքեր են հանդիսանում փոխկապակցված անձինք:<br>Մասնավորապես առաջարկվում է այդ ցանկերում ընդգրկել՝ հայր, մայր, կին, ամուսին, եղբայր, քույր հարազատական կապերից բացի, ամուսնու և կնոջ հարազատական կապերը:</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական նպատակը</td><td colspan="4">Փոխկապակցված անձանց մասին օրենքի ընդունմամբ նվազեցնել հնարավոր կոռուպցիոն ռիսկերը պետական կառույցներում:</td></tr>
<tr><td colspan="2">ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը</td><td colspan="4">Թափանցիկության և հաշվետվողականության ապահովում<br>Հանրային օրինավորության խթանում<br>Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում</td></tr>
<tr><td colspan="2" rowspan="2">Պարտավորությունը ԲԿԳ ո՞ր արժեքների առաջխաղացմանն է նպաստում</td><td>Թափանցիկություն</td><td>Հաշվետվողականություն</td><td colspan="2">Հանրային մասնակցություն</td></tr>
<tr><td>V</td><td>V</td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="3">Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ</td><td>Նոր կամ ընթացիկ պարտավորություն</td><td>Մեկնարկի օր</td><td>Ավարտի օր</td></tr>
<tr><td colspan="3">1. Հանրային քննարկումների կազմակերպում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ Փոխկապակցված անձանց մասին օրենքի</td><td>Նոր</td><td>01.10.2018</td><td>31.12.2018</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| անհրաժեշտության վերաբերյալ<br>2. Փոխկապակցված անձանց մասին օրենքի նախագծի մշակում և ընդունում | | 01.01.2019 | 31.05.2019 |

| ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | Ավարտը՝ մինչև 2019թ. տարեվերջ |
| Լիազոր մարմինը | | ՀՀ վարչապետի աշխատակազմ, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Լիլիա Շուշանյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քարտուղարության ղեկավար |
| էլ. հասցեն | | lilya.shushanyan@gov.am, lusine.tovmasyan@gov.am |
| Հեռախոսահամարը | | (010) 515932, (010) 515954, |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Արդարադատության նախարարություն,<br>Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն,<br>Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,<br>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խումբ |

| | |
|---|---|
| Կարգավորման ենթակա խնդիրը | Հայաստանի Հանրապետությունը 2017 թվականի մարտից հանդիսանում է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) թեկնածու երկիր: Համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջի՝ 2020 թվականից ԱՃԹՆ-ն իրականացնող երկրները պետք է հրապարակեն, թե ովքեր են հանքարդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերը: Այս համատեքսում իրական սեփականատեր է համարվում վերջնական ֆիզիկական անձը, ով վերահսկում կամ տիրապետում է հանքարդյունահանող կազմակերպությանը: |
| Հիմնական նպատակը | Հանձնառության նպատակն է մշտապես հասարակության ուշադրության կենտրոնում գտնվող հանքարդյունաբերության ոլորտում բացահայտել չհայտարարագրված սեփականատիրությունը, պարզել ոլորտում քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասնակցության չափը: Հանձնառության իրականացումը համահունչ է նաև Եվրամիության փողերի լվացման դեմ պայքարի կարգավորումներին: Հանձնառության իրականացումը հնարավորություն կտա ոլորտը դարձնել թափանցիկ, լայն հասարակությանը, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, հետաքննող լրատվության ներկայացուցիչներին կտրամադրի պահաջված տվյալներ մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների իրական սեփականատերերի վերաբերյալ: Մետաղական հանքաքարի արդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության նպատակով թույլտվությունների տրման գործընթացում լիազոր մարմինը կդիտարկի նաև դիմող կազմակերպության իրական սեփականատերի վերաբերյալ տվյալները: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների իրական սեփականատերերի՝ հանրությանը հասանելի |

| | |
|---|---|
| | տվյալների բազայի (ռեգիստրի) ստեղծում: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | Թափանցկություն,<br>Հանրային օրինավորության խթանում |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | Կմեծանա տեղեկատվության ազատ հասանելիության մակարդակը, կբարձրանա ոլորտի թափանցիկության մակարդակը, ինչպես նաև հանրային վերահսկողության և, հետևաբար, ոլորտում գործող ընկերությունների հաշվետվողականության մակարդակը: |
| Հավակնություն | Կոռուպցիոն ռիսկերի նվազում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հաշվետվողականության բարձրացում, մետաղական հանքաքարի արդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության նպատակով թույլտվությունների տրման գործընթացում դիմող կազմակերպությունների իրական սեփականատերերի տեղեկատվության առկայություն, ոլորտի հանրային վերահսկողության բարձրացում: |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների մշակում և ընդունում* | 2018թ. սեպտեմբեր | 2018թ. դեկտեմբեր |
| *Իրական սեփականատերերի բացահայտման և ներկայացված տվյալների հավաստիության ստուգման ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում և* | 2018թ. հոկտեմբեր | 2019թ. մարտ |

| | | |
|---|---|---|
| *ընդունում* | | |
| *Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում իրական սեփականատերերի ռեգիստրի տեղեկատվական տեխնոլոգիաների պլատֆորմի ստեղծում* | 2019թ. մայիս | 2019թ. դեկտեմբեր |
| *Պարտավորության ֆինանսական հաշվարկը | | |

| **Հայաստանի արտաքին վարկային միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ ապաագրեգացված տվյալների ինտերակտիվ հարթակի ստեղծում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | |
| Լիազոր մարմինը | | Ֆինանսների նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | Պետական կառավարման մարմիններ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | ՏՏ կազմակերպություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի ծավալը կազմել է 4,021.0 մլն ԱՄՆ դոլար: Միաժամանակ, |

<table>
<tr><td></td><td colspan="2">վարկային միջոցների ծախսի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն բաց տվյալների սկզբունքին համապատասխան կամ բաց կառավարման համատեքստում ենթադրվող միջոցնելով հասանելի չէ հանրությանը կամ հասանելի է մասնակիորեն և սփռված տարբեր մարմինների կայքերում:</td></tr>
<tr><td>Հիմնական նպատակը</td><td colspan="2">Գործընկեր երկրների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված նպատակային և բյուջետային աջակցության վարկերի, վարկային միջոցների ծախսի ուղղությունների, ֆինանսավորվող ծրագրերի, տոկոսադրույքների չափի, տոկոսադրույքների փաստացի սպասարկման վերաբերյալ ապաագրեգացված տեղեկատվության հրապարակում:</td></tr>
<tr><td>Պարտավորության հակիրճ նկարագրությունը</td><td colspan="2">Ինտերակտիվ հարթակի ստեղծում, որտեղ առավելագույն կարճ ժամանակահատվածում կտեղադրվի տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում միջազգային վարկային միջոցներով իրականացվող ծրագրերի, փաստացի ծախսերի, դրանց համառոտ նկարագրության, տոկոսադրույքների և դրանց սպասարկման վերաբերյալ՝ բաց տվյալների սկզբունքի համապատասխան: Հնարավորության դեպքում կարելի է ներկայացնել նաև արդյունքային ցուցանիշներ:</td></tr>
<tr><td>ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը</td><td colspan="2">Թափանցիկություն,<br>Հանրային մասնակցություն</td></tr>
<tr><td>Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին</td><td colspan="2">Կմեծանա ներգրավված վարկային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և մատչելիությունը, կապահովվի առավել բարձր հանրային հաշվետվողականություն:</td></tr>
<tr><td>Հավակնություն</td><td colspan="2"></td></tr>
<tr><td>Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ</td><td>Մեկնարկի օր</td><td>Ավարտի օր</td></tr>
<tr><td>Ընթացիկ գործողություններ</td><td></td><td></td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| Պատասխանատու մարմինների քարտեզագրում, հարթակում ներկայացվող տվյալների շրջանակի հաստատում | | |
| Առցանց հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակում | | |
| Առցանց հարթակի մշակում և գործարկում | | |
| *Պարտավորության ֆինանսական հաշվարկը | | |

| **Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի և շրջանառության հարկի հաշվարկի որոշ դաշտերի ինքնաշխատ լրացում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները | | 2018թ.սեպտեմբեր – 2020թ. հունիս |
| Լիազոր մարմինը | | Պետական եկամուտների կոմիտե |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | |
| Պաշտոնը, վարչությունը | | |
| էլ. հասցեն | | |
| Հեռախոսահամարը | | |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | |
| Կարգավորման ենթակա խնդիրը | | Դյուրացնել և պարզեցնել հարկ վճարողների կողմից հաշվարկի լրացման գործընթացը, խնայել ժամանակը և նվազեցնել սխալվելու հավանականությունը: |

| | |
|---|---|
| Հիմնական նպատակը | Ներկայումս «Շրջանառության հարկի հաշվարկը» հարկ վճարողների կողմից լրացվում և ներկայացվում է ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային եղանակով: Հաշվարկում նախատեսվում է ներդնել ինքնաշխատ լրացման համակարգ, ինչը հնարավորություն կտա հարկ վճարողներին խնայել իրենց ժամանակը, նվազեցնելու է սխալվելու հավանականությունը, թույլ է տալիս համադրել հարկային մարմնի տվյալների շտեմարանում և հարկ վճարողի հաշվապահական հաշվառման տվյալները: |
| | Ներկայումս «Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը» հարկ վճարողների կողմից լրացվում և ներկայացվում է ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային եղանակով: Սակայն հաշվարկում ներառված թվային ցուցանիշները լրացվում են հարկ վճարողների կողմից: Ինքնաշխատ լրացման համակարգի ներդրումը հնարավորություն կընձեռի հարկ վճարողներին խնայել իրենց ժամանակը, կնվազեցնի սխալվելու հավանականությունը, թույլ կտա համադրել հարկային մարմնի տվյալների շտեմարանում և հարկ վճարողի հաշվապահական հաշվառման տվյալները: |
| Պարտավորության հակիրճ նկարագրությունը | Ներդնել «Շրջանառության հարկի հաշվարկի» դաշտերի ինքնաշխատ լրացման համակարգ: Մասնավորապես՝ հաշվարկում հնարավոր է արտացոլել հաշվարկային փաստաթղթերի հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունը: |
| | Ներդնել «Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի» դաշտերի ինքնաշխատ լրացման համակարգ: Մասնավորապես՝ ԱԱՀ-ի հաշվարկի մասով հնարավոր է հաշվարկում ինքնաշխատ արտացոլել հաշվարկային փաստաթղթերի հիման վրա հաշվարկված իրացման |

| | |
|---|---|
| | շրջանառությունը, ինչպես նաև ստացված հաշվարկային փաստաթղթերի և ներմուծման հայտարարագրերի (այդ թվում ԵՏՄ) վերաբերյալ տվյալներ: |
| | «Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում» ակցիզային հարկի մասով հնարավոր է ինքնաշխատ արտացոլել ակցիզային հարկով հարկվող ապրանքների հարկային հաշիվների հիման վրա հաշվարկված ակցիզային հարկի գումարը: |
| ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը | |
| Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին | |
| Հավակնություն | |

| Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ | Մեկնարկի օր | Ավարտի օր |
|---|---|---|
| *Ընթացիկ գործողություններ* | | |
| **Իրականացնել աշխատակարգերի և միջազգային փորձի ուսումնասիրություն, այդ թվում՝** Շրջանառության հարկի հաշվարկ | 2018թ. սեպտեմբեր | 2018թ. դեկտեմբեր |
| Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ՝ ԱԱՀ-ի մասով | 2018թ. սեպտեմբեր | 2018թ. դեկտեմբեր |
| Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ՝ ակցիզային հարկի մասով | 2018թ. սեպտեմբեր | 2018թ. դեկտեմբեր |
| **Լրամշակել առաջարկների փաթեթը և ներկայացնել կառավարության հաստատմանը այդ թվում՝** Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ | 2019թ. հունվար | 2019թ. մարտ |
| | | |

| **Համապատասխան փոփոխության ապահովում և գործարկում այդ թվում՝**<br>Շրջանառության հարկի հաշվարկ | 2018թ. սեպտեմբեր | 2018թ. դեկտեմբեր |
|---|---|---|
| Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ՝ ԱԱՀ-ի մասով | 2019թ. ապրիլ | 2020 հունվար |
| Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ՝ ակցիզային հարկի մասով | 2020թ. հունվար | 2020 հունիս |
| *Պարտավորության ֆինանսական հաշվարկը | | |

| **Open & Social. ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում** | | |
|---|---|---|
| Պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետները<br>2018 հուլիս – 2020 հունիս | | Նոր հանձնառություն և նախորդ հանձնառության շարունակություն |
| Լիազոր մարմինը | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Լիազոր մարմնի պատասխանատու անձը | | Արման Սարգսյան |
| Պաշտոնը, վարչությունը | | Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրեն |
| Էլ. հասցեն | | ceo.arman.sargsyan@nilsr.am; arman.sargsyan@mlsa.am |
| Հեռախոսահամարը | | (+374 10)208344 |
| Այլ շահագրգիռ մարմիններ | Այլ շահագրգիռ պետական մարմիններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և առանձնացված ստորաբաժանումներ |
| | Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված | Սոցիալական պաշտպանության ոլորտի շահագրգիռ հասարակական կազմակերպություններ |

<table>
<tr><td>Կարգավորման ենթակա խնդիրը</td><td colspan="2">Հանձնառության իրականացումը պայմանավորված է ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երրորդ ծրագրի 7-րդ հանձնառությամբ իրականացվող աշխատանքների շարունակականության ապահովման և տրամաբանական ավարտի ապահովման անհրաժեշտությամբ: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում իրականացվում են սոցիալական պաշտպանության շուրջ 80 պետական ծրագրեր, որոնք ենթադրում են նաև բազմաբնույթ ծառայություններ, բազմաբնույթ նախապայմաններով և ընթացակարգերով: Այս առումով կա հանրության իրազեկման և սոցիալական ծառայություններն առավել հասանելի դարձնելու անհրաժեշտություն, ինչը կապահովվի նաև պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկության և վստահելիության բարձրացմանը, կոռուպցիոն դրսևորումների ճնշմանը:</td></tr>
<tr><td>Հիմնական նպատակը</td><td colspan="2">«Open&Social» հանձնառության շրջանակներում մշակված ինովացիոն գործիքների միջոցով կապահովվի հանրության առցանց մասնակցությամբ սոցիալական ծառայությունների մանրամասնորեն դասակարգված և ինքնաշխատ ներկայացվող տեղեկատվության հասանելիությունը, սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացում հանրության մասնակցությունը, ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեյտինգավորումը՝ ապահովելով սոցիալական ծառայությունների մատչելիության և իրազեկվածության բարձրացումը հանրության համար:</td></tr>
<tr><td>Պարտավորության հակիրճ նկարագրությունը</td><td colspan="2">«Open&Social» տվյալների հավաքագրման, համակարգման և վերլուծության վրա հիմնված գործիքի ներդրում:</td></tr>
<tr><td>ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը</td><td colspan="2">Հանրային ծառայությունների բարելավում, հանրային օրինավորության խթանում</td></tr>
<tr><td>Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին</td><td colspan="2">Սույն հանձնառությամբ հանրային մասնակցությունն ապահովող գործընթացների շնորհիվ կբարձրանա պետության կողմից տրամադրվող ծառայությունների որակը, էապես կնվազեցվի սոցիալական ծառայությունների վերաբերյալ հանրության տեղեկատվական անորոշությունը և կբարելավվի հանրային հաշվետվողականության մակարդակը:</td></tr>
<tr><td>Հավակնություն</td><td colspan="2">Սոցիալական ծառայությունների որակի վերաբերյալ հետադարձ կապի շնորհիվ դրանց արդյունավետության բարձրացում, տեղեկատվության մատչելիության և հանրային մասնակցության ապահովում:</td></tr>
<tr><td>Պարտավորության կատարման ստուգելի և չափելի չափանիշներ</td><td>Մեկնարկի օր</td><td>Ավարտի օր</td></tr>
<tr><td>1. Շահառուին՝ իր համար հասանելի սոցիալական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով http://www.esocial.am</td><td>2018թ. հուլիս</td><td>2020թ. հունիս</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| | ինտեգրված սոցիալական ծառայությունների առցիծ տեղեկատվական համակարգում «Open&Social» գործիքի ներդրում, ինչպես նաև ՀՀ ամբողջ տարածքում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների քարտեզագրում:<br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում են սոցիալական պաշտպանության շուրջ 80 ծրագրեր, որոնք գերազանցապես ենթադրում են հանրությանը մատուցվող ծառայություններ և յուրաքանչյուր ծրագիր որպես կանոն ենթադրում է բազմագործոն բիզնես գործընթաց, որի վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ ընկալելի չէ հանրության կողմից: Այս առումով կա անհրաժեշտություն հանրության շրջանում սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն, ամբողջական, մատչելի, թիրախավորված և կառավարելի տեղեկատվության ապահովում, ինչը վերջին հաշվով բարձրացնելու է հանրության իրազեկվածությունը և նպաստելու է սոցիալական ծառայություններում շահառուի կողմից տեղեկացվածության պակասի պատճառով կոռուպցիոն երևույթների ճնշմանը, քանի որ քաղաքացին առավել լավ է տիրապետելու իր իրավունքներին: Արդյունքում, շահառուն իր վերաբերյալ տեղեկատվության ընտրության և մուտքագրման դեպքում պետք է տեղեկացվի կոնկրետ իր համար հասանելի սոցիալական ծառայությունների, դրանցից օգտվելու ընթացակարգերի, ծառայությունների մատուցման աշխարհագրության, ինչպես նաև՝ քարտեզագրված սոցիալական ծառայություններ մատուցող համապատասխան ոչ պետական կազմակերպությունների վերաբերյալ: Օրինակ շահառուն իր վերաբերյալ տեղեկատվության մուտքագրման արֆյունքում ինքնաշխատ կիրազեկվի, թե որքանով է հավանական իր կողմից ընտանիքի անապահովության նպաստ ստանալը կամ սոցիալական բնակարանների տրամադրման ծրագրից օգտվելու հնարավորությունը, ինչպես և որտեղ պետք է ստանա այդ ծառայությունը, ինչպիսի այլընտրանքներ կան ոչ պետական սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններում և այլն: Այսինքն շահառուն ինքը կկարողանա կառավարել սոցիալական ծառայություններին իր հասանելիության ցուցիչները: | | |
| 2. | Հարթակի ստեղծում և առկա լուծումների զարգացում ու լրամշակում, որտեղ հանրությանը հնարավորություն կտրվի կոնկրետ ծառայությանը և այդ ծառայությունը մատուցող կազմակերպությանը տալ բալային գնահատականներ, որոնց վերլուծության արդյունքում այդ ծառայությունները և սոցիալական պաշտանության ոլորտում գործող կազմակերպությունները կունենան որոշակի ռեյտինգ: Շահառուների կարծիքների հիման վրա մատուցվող ծառայությունների վերանայում, աշխատանքային գործընթացների պարզեցում, ժամանակի կրճատում: | 2018թ.<br>հուլիս | 2020թ.<br>հունիս |

Առաջարկում եմ ներմուծել նոր դպրոցական առարկա՝ Քաղաքացիական Դաստիարակություն և փոխարինել Շախմատի առարկան:

Շախմատը դպրոցում որպես առարկա ուսուցանելը անիմաստ ժամանակի և պետական միջոցների վատնում է: Սերժ Սարգսյանը լինելով շախմատի սիրահար այն ներմուծեց մեր կրթական համակարգ: Հայաստանը աշխարհի միակ երկիրն է, որ ունի նման առարկա դպրոցական ծրագրում: Սակայն շախմատի շնորհիվ Հայաստանը չի արձանագրել որևէ առաջընթաց և մենք շարունակում ենք մնալ աշխարհի ոչ զարգացած երկրների շարքում:
Կրթության նախարարությանը առաջարկում եմ վերանայել այդ որոշումը: Որքան էլ որ շախմատը հետաքրքիր և ուղեղը զարգացնող խաղ լինի, միևնույն է այն մնում է խաղ և կյանքում չունի որևէ գործնական կիրառություն: Ովքեր որ սիրում են շախմատ, նրանք կարող են իրենց ազատ ժամերը տրամադրել դրան:
Շախմատի դասերի փոխարեն առաջարկում եմ ներմուծել մի շատ կարևոր նոր առարկա, պայմանականորեն այն անվանենք Քաղաքացիական Դաստիարակություն: Այս առարկան միջին և բարձր դասարանների աշակերտներին կուսուցանի ազատ հասարակարգում քաղաքացու դերը, իրավունքներն ու պարտականությունները: Այն նաև կուսուցանի ժողովրդավարական հասարակարգում իշխանության ձևավորման բնականոն ընթացքը, սահմանադրությունը և սահմանադրականությունը, ազատ և

արդար ընտրությունների կարևորությունը, և շատ այլ դրույթներ, որոնց գիտակցությունը ցավոք պակասում է մեր հասարակությունում:
Եթե մինչև հիմա այսպիսի կրթություն լիներ Հայաստանի դպրոցներում, մենք չէինք ունենա ընտրակաշառքների բաժանում, ընտրությունների կեղծում, և հեղափոխությունների անհրաժեշտություն: Գիտակից և պետության համար մտահոգ քաղաքացիներ ունենալը շատ ավելի մեծ ռեսուրս է, քան նավթի ու գազի պաշարները: Այն կապահովի ամուր և համերաշխ հասարակություն, ինչպես նաև կայուն և ժողովրդավար պետություն: Եվ դա մենք կարող ենք ստեղծել կրթության միջոցով: Դրա համար շատ գումար հարկավոր չէ:
Բնականաբար, այս առարկան պետք է զերծ պահել ցանկացած կուսակցական երանգավորումներից և ցանկացած բնույթի քաղաքական քարոզչությունից:

| 13 | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Կարեն Հ. Սարգսյան |
| Կազմակերպություն | ՍԷԴ Սիսթեմս ՍՊԸ |
| Կոնտակտային հեռախոս | 91432137 |
| Կոնտակտային էլ. փոստ | karen.sargsyan@pentadcc.biz |
| Սեռ | արական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը |
| Լիազոր մարմին | ՀՀ Մշակույթի նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Թավշյա հեղափոխությունից հետո գերատեսչությունների ղեկավարները դրսևորում են բարձր կամային հատկանիշներ և պատրաստակամություն օգնելու իրենց կառավարման համակարգերը առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Ներկայացվող նախարարության համար արդեն իսկ ներքին |

| | |
|---|---|
| | կառավարման որոշակի համակարգեր փոփոխելով և ավելի արդյունավետ դարձնելով, առանձնացրել ենք խնդիր, որը կարող է գործունեությունը դարձնել ավելի մասնակցային: Առավել արդիական է դարձել քաղաքացիների հետ արդյունավետ փոխհարաբերությունների կառուցման և գործընկերային կապ հաստատելու գործընթացը: Նախորդ իշխանության օրոք քաղաքացիների հետ կապը տեղի էր ունենում երեք հիմնական եղանակներով. կայքում առկա հեռախոսահամարի միջոցով կապի հաստատում, որը անմիջական արձագանքողի ուղակի գործառույթների մեջ չի մտնում, երկրորդ տարբերակը՝ էլ.փոստի միջոցով նամակ ուղարկելն է (http://citizen.mincult.am/index/login, http://mincult.am/feedback.html, https://www.e-request.am/hy/), դրանցից վերջինը էլեկտրոնային ստորագրության առկայության պարտադիր առկայությամբ, և բոլորի լրացման դաշտը մեկն է ու չխմբավորված, և նախարարության առաջին հարկում առկա հեռախոսահամարի միջոցով կապի հաստատում, որի պարագայում քաղաքացուն հարկավոր է լինում իր խնդրի լուծման հասցեատիրոջը կամ գտնել 3-4 փորձից հետո կամ էլ ընդհանրապես չգտնել: Թվարկված եղանակների անարդյունավետությունը փաստում են թե քաղաքացիների և թե նախարարության աշխատակիցների կողմից ներկայացված դեպքերը: Դրանցից որոշների ականատեսը եղել են մեր ընկերության փորձագետները, ովքեր գնահատել են առկա եղանակների արդյունավետությունը հիմնվելով՝ ժամանակի, որակի և ազդեցության չափանիշներով: Բացի այդ, չունենալով արդյունավետ հաղորդակցման համակարգեր, քաղաքացիների մի ստվար զանգված պարզապես խուսափում է կապ հաստատել նախարարության հետ՝ համարելով այն ժամանակի կորուստ: Այդ ամենի հետևանքով նվազում է վստահությունը դեպի նախարարությունն և նրա գործունեությունը: Այսպիսով, քաղաքացիների հետ կապի արդյունավետ համակարգ ներդնելը կնպաստի վստահության բարձրացմանը, մասնակցության խթանմանը և թափանցիկության ապահովմանը: |
| Հիմնական նպատակը | Նպաստել նախարարություն-քաղաքացիներ կապի |

| | |
|---|---|
| | արդյունավետության բարձրացմանը: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Քաղաքացիների և նախարարության հետկապի արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկում ենք մշակել ծրագրային/տեխնոլոգիական մի համակարգ, որի միջոցով յուրաքանչյուր քաղաքացի կկարողանա իրեն հուզող հարցը, դիմումը, նամակը, և այլ խնդիրներ առավել դասակարգված, խմբավորված մշակի ու թիրախավորված ուղարկի հասցեատիրոջը: Այն նպաստում է, որ ուղարկվող տեղեկությունը չլինի թերի, դրանով նվազեցնելով մի քանի անգամ հետադարձ կապ հաստատելու ժամանակը: Նախարարության համապատասխան աշխատակցի կողմից ստացվող հայտին ավելի արագ ու լիարժեք պատասխան ներկայացնելով այն ավելի համակարգված է գալիս, և ի վերջո կբարձրանա հայտերի որակը, դրանց արձագանքվող լուծումների ազդեցությունը: Տվյալ խնդիրը ամբողջապես լուծելու համար հարկավոր է քաղաքացիների հետկապ հաստատող առկա բոլոր համակարգերը մեկտեղել առաջարկվող ծրագրային լուծման մեջ, որպեսզի հավելյալ դժվարություններ չառաջանան քաղաքացու համար որևէ խնդրով դիմելու ժամանակ (այս պահին կայքում առկա է քաղաքացիների հետ կապի ապահովման 3 եղանակ, որոնք շփոթմունքի առիթ են նրանց համար): Համակարգի առկայության դեպքում նաև փոխվելու հեռախոսով կապ հաստատելու համակարգը, ինչպես նաև շենքի առաջին հարկի հեռախոսը կփոխարինվի համակարգչային ծրագրի միջոցով կապի հաստատմանը: Սույն ծրագրի իրականացման համար հարկավոր կլինի ներդնել 3.840.000դրամ: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Վերոնշյալ գումարն իր մեջ ներառում է հետևյալ մոտավոր հաշվարկումները. ծրագրային ապահովում 2.000.000 դրամ, տեխնիկական հագեցվածություն 1.000.000դրամ, փորձարկման, տեխնիկական ապահովման, սպասարկման և նմանատիպ այլ ծախսերի համար 840.000դրամ: |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Տեխնոլոգիա և նորարարություն |

| | |
|---|---|
| Ակնկալվող ազդեցություն | Կարճաժամկետ ազդեցությունը կդրսևորվի հետևյալ կերպ. քաղաքացիների կողմից ներկայացվող հայտերը կլինեն ավելի հստակ ձևակերպված և համակարգված, ինչը կնպաստի ուղարկվող հայտերի որակի բարձրացմանը և թիրախային լինելուն; աշխատակազմի կողմից վերջիններս ավելի արագ արձագանք կստանան, ինչը կբերի ժամանակի կրճատմանը, կամ հենց աշխատակիցների աշխատաժամանակի առավել արդյունավետ օգտագործմանը; ինչպես նաև առաջարկող հայտերի բարձր որակի պարագայում ազդեցության բարձր ցուցանիշ ապահովելուն:Երկարաժամկետ ազդեցությունը կդրսևորվի հետևյալ կերպ. կբարձրանա քաղաքացիների վստահությունը դեպի նախարարություն և իր կողմից իրականացվող գործունեությանը; կբարձրանա քաղաքացիների հետկապի ապահովմամբ զբաղվող աշխատակազմի աշխատանքի արդյունավետությունը; ինչպես նաև քաղաքացիների խնդիրների մեծ մասի համար լուծումները: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Քաղաքացիների կողմից ուղարկվող նամակների որակական փոփոխությունները համեմատած նախորդների հետ, աշխատակիցների և քաղաքացու միջև երկրորդային և ավելի տեղեկության ճշգրտման քանակի նվազեցում/ժամանակի կրճատում, հայտերի պատասխանների և հետադարձ կապի ժամանակի կրճատում: |

| 14 | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Կարեն Հ. Սարգսյան |
| Կազմակերպություն | ՍԷԴ Սիսթեմս ՍՊԸ |
| Կոնտակտային հեռախոս | 91432137 |
| Կոնտակտային էլ. փոստ | karen.sargsyan@pentadcc.biz |
| Սեռ | արական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և | սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 30-ը |

| | |
|---|---|
| ավարտի ժամկետը | |
| Լիազոր մարմին | ՀՀ Մշակույթի նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն, Մասնավոր հատված |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Յուրաքանչյուր նախարարություն օրենքով նախատեսված կարգով իրականացնում է դրամաշնորհային միջոցառումներ բոլոր հետաքրքրվող անձանց համար: Նախորդ իշխանության ժամանակ մրցութային կարգով անցկացվող դրամաշնորհային ծրագրերը թափանցիկ և բաց չեն եղել, որի արդյունքում կասկածի տակ է դրվում դրանց օրինական լինելը:<br><br>Մյուս կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի ձևանմուշները բավարար չեն, որպեսզի դիմող կողմը լիարժեք և համապարփակ ձևով ներկայացնի իր ծրագրի գաղափարը և իրականացման մանրամասները:<br><br>Իրականացված ծրագրերի որակի մասով նույնպես կան թերություններ, որոնք փաստում են առկա հաշվետվություններն ու ընթացիկ միջամտությունները:<br><br>Առկա չեն հստակ ընթացակարգեր և մեխանիզմներ, թե ինչպես պետք է քաղաքացին, կազմակերպությունը հայտ ներկայացնի դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար:<br><br>Այս և այլ հարակից խնդիրներ են առկա այսօր նախարարության կողմից իրականացվող դրամաշնորհային քաղաքականության ուղղությամբ: |
| Հիմնական նպատակը | Ապահովել պետական բյուջեից դրամաշնորհային միջոցների արդյունավետօգտագործմանը: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Առկա խնդիրը լուծելու նպատակով առաջարկվում է ստեղծել օնլայն էլեկտրոնային հարթակ, որի միջոցով ցանկացած քաղաքացի և կազմակերպություն կարող է ներկայացնել իր ծրագրային գաղափարի մանրամասները մշակված ձևանմուշի հիման վրա: Այն հնարավորություն է ընձեռում գործընթացը դարձնել առավել թափանցիկ և արդյունքում բարձրացնել |

| | |
|---|---|
| | հաշվետվողականությունը:<br><br>Զուգահեռ գործընթացին կմշակվեն դրամաշնորհային ծրագրին դիմելու ընթացակարգը, ձևանմուշները, և մեխանիզմները: Ընթացիկ աշխատանքների մաս կկազմեն նաև նախարարության կողմից սահմանվելիք գերակա ուղղությունները, որոնցով կառաջնորդվեն դիմողները:<br><br>Արդյունքում մենք կարող ենք վստահեցնել, որ կբարձրանա հայտերի որակը, իրականացվող ծրագրերի ազդեցությունը, աշխատակազմի կողմից ծախսվող ժամանակի արդյունավետությունը:<br><br>Օնլայն հարթակի, վերջինս էլ.կայքին ինտեգրման աշխատանքների, ընթացակարգերի, ձևանմուշների և մեխանիզմների մշակման համար անհրաժեշտ կլինի 4.160.000դրամ: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Ծրագրային ապահովման համար անհրաժեշտ է 3.500.000դրամ, փաստաթղթային կամ բովանդակության ալգորիթմային համակարգի ստեղծման համար 660.000դրամ: Ընդհանուր արժեքն է՝ 4.160.000 ՀՀ դրամ: |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Թափանցիկություն |
| Ակնկալվող ազդեցություն | Կարճաժամկետ ազդեցությունը կլինի այն, որ կբարձրանա դիմող հայտերի որակը, կավելանան դիմողների քանակը, ինչպես նաև կմեծանա արդյունավետությունը ծրագրերի ազդեցության:<br><br>Երկարաժամկետ ազդեցության հիմքում ընկած է քաղաքացիների և կազմակերպությունների վստահության բարձրացումը, ներքին կառավարման համակարգում կոռուպցիայի նվազեցմանը: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Ներկայացված հայտերի որակական և քանակական վերլուծությունը, ծրագրերի ազդեցության հարաբերական փոփոխությունր, րնթացիկ գործընթացների կրճատումր, |

| | |
|---|---|
| | միջոցառումների մասնակցության աստիճանի բարձրացումը, շահառուների կողմից գնահատման արդյունքները: |

| 23 | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Ռոզա Ավագյան |
| Կազմակերպություն | |
| Կոնտակտային հեռախոս | 99242926 |
| Կոնտակտային էլ. փոստ | avagyanroza@gmail.com |
| Սեռ | իգական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | 2019-2020 |
| Լիազոր մարմին | ՀՀ կառավարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն, Մասնավոր հատված |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Ներկայումս ՀՀ կառավարության կազմում գործող գերատեսչություններում առկա են բազմաթիվ տվյալների շտեմարաններ միևնույն սուբյեկտի վերաբերյալ, և տարբեր տվյալներ ստանալու համար անձը ստիպված է դիմել տարբեր գերատեսչությունների: Տվյալների միասնական շտեմարանի ստեղծումը կնվազեցնի՝ 1.-սերվերային ծախսերը, որոնք կապված են տարբեր գերատեսչությունների էլեկտրոնային համակարգերի համար սերվերների ձեռքբերման, պահպանման և սպասարկման համար, 2.-կնվազեցնի մարդկային գործոնով պայմանավորված սխալի հավանականությունը, քանի որ մեկ տեղեկատվությունը մեկ տեղ և մեկ անգամ կմուտքագրվի, 3.-կնվազեցնի տեղեկատվության մուտքագրման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների ծախսը, քանի որ տեղի կունենա տեղեկատվության մեկանգամյա մուտք՝ առաջին անգամ տվյալ սուբյեկտի, օբյեկտի կամ ցուցանիշի հետ շփվող գերատեսչություններում, և մյուսները կօգտվեն հավաքագրված դատայից, 4.- |

| | |
|---|---|
| | կբարձրացնի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, քանի որ ցանկացած անձ կարող է արագ ու ճշգրիտ տեղեկատվություն ստանալ՝ իր արտոնությունների սահմաններում, միևնույն վայրից: |
| Հիմնական նպատակը | Նվազեցնել նյութական (սերվերային, մարդկային) ծախսերը, բարձրացնել թափանցիկությունը և հաշվետվողականությունը |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Սերվերային արժեքների հաշվարկում, տվյալների առկա բազաների ինտեգրում, անհամապատասխանությունների բացահայտում, շտկում: Կնվազեն բազմաթիվ գերատեսչություններում օպերատորների և սերվերների անհրաժեշտությունը: Նախնական ծախսը կախված է այն բանից, թե կօգտագործվեն առկա սերվերային ռեսուրսները, թե կպատվիրվեն նորերը: Կարող է կատարվել՝ առանց շատ մեծ հավելյալ ծախսերի: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | 50-500 միլիոն ՀՀ դրամ՝ կախված այն բանից, թե կօգտագործվեն առկա ռեսուրսները, թե՞ կինտեգրվեն նորերը՝ առանձնային փուլում: |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Տեխնոլոգիա և նորարարություն |
| Ակնկալվող ազդեցություն | Կարճաժամկետ կտրվածքում կառաջացնի լրցուցիչ ռեսուրսների ծախս՝ բազաների միասնականացման և սերվերների ձեռքբերման հետ կապված: Երկարաժանկետ կտրվածքում կհանգեցնի նշված տախսերի կտրուկ նվազեցմանը և հաշվետվողականության և թափանցիկության բարձրացմանը: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության  ազդեցությունը: | Սերվերների, դրանց սպասարկման և տեղեկատվությամ մուտքագրմամբ զբաղվող օգտատերերի աշխատաժամանակի վրա կատարվող ծախսերի հաշվարկ նախորդ 3 տարվա ընթացքում, և դրա համադրումը մեկ տարի հետո ստացված արդյունքի հետ: |

| **24** | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Արմեն Հովսեփյան |
| Կազմակերպություն | Կրթության ազգային ինստիտուտ |
| Կոնտակտային հեռախոս | 077 123 161 |
| Կոնտակտային էլ.  փոստ | armenhovsepyan1972@gmail.com |
| Սեռ | արական |

| | |
|---|---|
| Տարիք | 40-50 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | 20.09.2018-30.04.2019 |
| Լիազոր մարմին | Կրթության և գիտության նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Հանրակրթական յուրաքանչյուր դպրոցի համար կառավարման խորհրդի գործունեությունը անարդյունավետ է: Դրա հիմնական պատճառներն են. 1.այդ ինստիտուտն ունի մեծաքանակ մասնակիցներ (յուրաքանչյուր դպրոցի համար 8 անդամ),<br>2.լիազորված մարմիններից և ծնողական խորհրդից առաջադրված անդամները իրազեկ չեն հանրակրթական ուսումնական հաստատությունների բովանդակային հիմնախնդիրներից,<br>3.Խորհրդի անդամները մոտիվացված չեն իրենց լիազորությունների պատշաճ կատարման խնդրում:<br>Սույն առաջարկը կարող է էականորեն մեծացնել դպրոցների խորհուրդների գործունեության նպատակայնությունը և արդյունավետությունը: |
| Հիմնական նպատակը | Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ձևավորման նոր հայեցակարգի մշակում և դրա հիման վրա համապատասխան կառավարման համակարգի ձևավորումը և փրձնական ներդնումը: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | 1.Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի գործունեության նոր հայեցակարգի մշակում:<br>2.Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածքային կառավարման խորհրդի ձևավորման և գործունեության կարգերի նախագծերի մշակում:<br>3.Նախագծերի փորձարկում Սյունիքի մարզում:<br>4.Նախագծերի վերաբերյալ ջատագովության քարոզարշավի պլանավորում և իրականացում:<br>5.Նախագծի ներկայացում ՀՀ Կառավարություն:<br>Արդյունք 1 Մշակվել են Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի գործունեության նոր հայեցակարգ, |

| | |
|---|---|
| | հաստատությունների տարածքային կառավարման  խորհրդի ձևավորման և գործունեության  կարգերի նախագծեր:<br>Արդյունք 2 Սյունիքի մարզում ներդրվել և փորձարկվել  են մշակված կարգերի նախագծերը. խորհուրդների գործունեությունը դարձել է թափանցիկ, ավելի արդյունավետ, անդամները մոտիվացված և կոմպետենտ են իրենց լիազորությունների իրացման գործում:<br>Արդյունք 3. ՀՀ կառավարությունը և Կրթության կառավարման պետական լիազորված մարմինը հաստատել են մշակված կարգերի նախագծերը:<br>Մոտավոր բյուջեն կազմում է 3 100 000 դրամ: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | 1-ին և 2-րդ գործողություններ՝ 2 փորձագետ*6 ամիս*150 000 դրամ=1 800 000 դրամ<br>3-րդ գործողություն՝ այցելություններ, սեմինար-քննարկումներ,  300 000 դրամ<br>4-րդ գործողություն՝ Ջատագովության քարոզարշավների պլանավորում և իրականացում՝ 1 000 000 դրամ |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Հաշվետվողականություն |
| Ակնկալվող ազդեցություն | Կարճաժամկետ ժամանակահատվածում հանրակրթական ուսումնական հաստատություններում տեղի կունենան կառավարման կոլեգիալ մարմինների ձևավորման և գործունեության էական փոփոխություններ:<br>Երկարաժամկետ ժամանակահատվածում հանրակրթական ուսումնական հաստատություններում կներդրվեն առավել հաշվետվողական, ինստիտուցիոնալ տարածքային կառավարման նոր համակարգ: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության  ազդեցությունը: | 1-ին չափորոշիչը՝ Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի գործունեության նոր հայեցակարգի ընդունումը ՀՀ ԿԳՆ կողմից:<br>2-րդ չափորոշիչ՝ ՀՀ կառավարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների տարածքային կառավարման  խորհրդի ձևավորման և գործունեության  կարգերի նախագծերի հաստատումը:<br>3-րդ չափորոշիչ՝Սյունիքի մարզում իրականացված հաջողված փորձը: |

| 27 | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Գարեգին Ղազարյան |
| Կազմակերպություն | |
| Կոնտակտային հեռախոս | 44733331 |
| Կոնտակտային էլ. փոստ | garik.ghazaryan.g@gmail.com |
| Սեռ | արական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | ՀՀ մարզեր |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | անմիջապես մեկ ամիս |
| Լիազոր մարմին | կապի և տրանսպորտի նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Ստեղծել մի սոցիալական հարթակ, որն կօգնի քաղաքացիներին ուղիղ կոչով դիմել ներկա իշխանություններին և պատասխանատու մարմիններին, և ստանալ հստակ պատասխան(ներ), որը կվերացնի ժողովուրդ և իշխանություն անջրպետը |
| Հիմնական նպատակը | Օգնել ՀՀ քաղաքացիների ինքնագնահատականի բարձրացմնաը, հույսի և ապագայի տեսլականի վերականգմանը, որն իր հերթին ամենառաջին գրավականնն է Հզոր երկիր ստեղծելու |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Ծրագրի իրականացման համար կպահանջվի թույլատվություն ստանալ կցելու Իշխանության և կառավարության բոլոր օղակների պատասխանատուների էլ հասցեները , որով հստակ կպատասխանեն քաղաքացիներին նամակագրությամբ, հստակ ժամկետներում, այժմ ստեղծել ենք Բաց Նամակ Էջը, որի վրա ծախսվել է 800 $ մեր անձնական ռեսուրսից, իսկ կայքի պատրաստման համար կպահանջվի 500 000 ՀՀ դրամ, իսկ ամսական սպասարկման համար 300 000 ՀՀ դրամ |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր | 500 000 ՀՀ որակյալ և պաշտպանված կայք պատրաստելու, 300 000 ՀՀ դրամ ամսական սպասարկման համար |

| | |
|---|---|
| հաշվարկ): | |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Հանրային մասնակցություն |
| Ակնկալվող ազդեցություն | Միանշանակ կբարձրացնի վստահության մակարդակը դեպի իշխանություն, կբարձրանա քաղաքացիների ինքնագնահատականը ինքնադրսևորվելու և զարգանալու ինչնել իր հերթին կզարգացնի Պետական կառավարումը |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության  ազդեցությունը: | Արագ և հստակ լուծումներ կտրվեն քաղաքացիների կողմից բարրացրած խնդիրներին, հարցերին ... վստահ ենք նոր իշխանություններին բոլոր խնդիրները ավելի արագ կերպով ծանոթալու լավագույն միջցն է |

| **28** | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Գրիշա Հովսեփյան |
| Կազմակերպություն | ,Compassե Research, Training and Consultancy Center |
| Կոնտակտային հեռախոս | 41668608 |
| Կոնտակտային էլ.  փոստ | hovsepyan94g@gmail.com |
| Սեռ | արական |
| Տարիք | 18-25 |
| Մարզ | ՀՀ մարզեր |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | 2019 հունվարի 1 - 2024 դեկտեմբերի 31 |
| Լիազոր մարմին | ֆինանսների նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն, Մասնավոր հատված |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Կոմպասս կենտրոնը արդեն ԲԿԳ երկրորդ ծրագրով ներկայացրել է ,Ավելի ինտերակտիվ բյուջեե նախաձեռնությունը, որը իրենցի ենթադրում է նախարարությունների բյուջեները ներկայացնել ինտերակտիվ եղանակով, մուտքեր և ծախսեր դասակարգումներով:  Սակայն այստեղ դուրս են մնում ՊՈԱԿ-ների բյուջեները: Իսկ պոակների կողմից իրականացվում են գնումների |

| | |
|---|---|
| | մեծամասնությունը, որը դուրս է մնում վերահսկողությունից: |
| Հիմնական նպատակը | Հանձնառության նպատակն է մեծացնել վստահությունը ՊՈԱԿ-ների նկատմամբ և բացառել չարաշահումները: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Կոմպասս կենտրոնը արդեն ԲԿԳ երկրորդ ծրագրով ներկայացրել է ,Ավելի ինտերակտիվ բյուջեե նախաձեռնությունը, որը իրենցի ենթադրում է նախարարությունների բյուջեները ներկայացնել ինտերակտիվ եղանակով, մուտքեր և ծախսեր դասակարգումներով: Քանի որ Բաց տվյալների սկզբունքը շատ կարևոր է և 2019թ.-ից նախատեսվում է ՊՈԱԿ-ների բյուջեները ևս մտցնել գանձապետարան, մենք ցանկանում ենք ԲԿԳ գործողությունների ծրագրում մեր իսկ առաջարկաց հանձնառությանը ի լրումն, բյուջեի ինտերակտիվ կայքում տեսնել ՊՈԱԿ-ների բյուջեն ևս:<br><br>Քանի որ կայքը արդեն առկա է և ընդամենը 2019թ-ից սկսած պետք է ծրագրային ապահովման միջոցով ավելացվի ՊՈԱԿ-ների մասը, դա մեծ ծախսերի հետ կապված չէ, մաքսիմում 1000000 ՀՀ դրամ: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | 1000000 ՀՀ Դրամ |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Թափանցիկություն |
| Ակնկալվող ազդեցություն | Հանրության կողմից ՊՈԱԿ-ների ֆինանսական վերահսկողության բարձրացում: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Հարցումների միջոցով: |

| **31** | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Աշոտ Գիլոյան |
| Կազմակերպություն | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն |

| | |
|---|---|
| Կոնտակտային հեռախոս | +37410511342 |
| Կոնտակտային էլ. փոստ | a.giloyan@mta.gov.am |
| Սեռ | արական |
| Տարիք | 50+ |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | Մեկնարկը՝ 2018թ. սեպտեմբեր, Ավարտը՝ հուլիս 2020թ. |
| Լիազոր մարմին | ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Քաղաքացիական հասարակություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Ներկայումս հանրապետության համայնքների գերակշիռ մասում շահագործվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՀՀ ՏԿԶՆ) նախաձեռնությամբ ստեղծված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ), որի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններն ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված բազմաթիվ գործառույթներն իրականացնում են էլեկտրոնային եղանակով: Համայնքապետարանները, ապահովվելով ՀԿՏՀ-ի համացանցային հասանելիությունը, այն ծառայեցնում են նաև որպես պաշտոնական կայք՝ համայնքի բնակչության համար մատչելի դարձնելով իրենց գործունեության, մասնավորապես, տրամադրվող համայնքային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը:<br>ՀՀ ՏԿԶՆ մեկ այլ նախաձեռնության շրջանակներում մշակվել են ՏԻՄ-երի կողմից տրամադրվող ավելի քան 60 վարչական ծառայությունների (թույլտվությունների, տեղեկանքների, համաձայնեցումների տրամադրում, ընդունելությունների գրանցում և այլն) ընթացակարգերի նկարագրեր՝ տեղեկատվական քարտեր, որոնցում մանրամասնորեն ներկայացված են տվյալ ծառայությանը վերաբերող և դրա շահառուին անհրաժեշտ տեղեկությունները.պահաջվող փաստաթղթեր, տրամադրման ժամկետներ, իրավական հիմքեր, գանձվող վճարներ և այլ:<br>Այդ ծառայությունների ցանկում արդեն իսկ կան այնպիսիք, որոնց մատուցման ամբողջ ցիկլը համայնքապետարանի կողմից իրականացվում է էլեկտրոնային |

| | |
|---|---|
| | եղանակով՝ ՀԿՏՀ-ի միջոցով☐<br>Կարգավորման ենթակա խնդիրը վերը թվարկված արդյունքների համադրումն է՝ պատշաճ նկարագրված համայնքային վարչական ծառայությունների տրամադրման ապահովում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների առավել լայն և կազմակերպված կիրառության միջոցով: |
| Հիմնական նպատակը | Պարտավորության հիմնական նպատակը հանրապետության թվով 50 խոշորագույն համայնքներում բնակչությանը մատուցվող համայնքային վարչական ծառայությունների որակի, հասանելիության ու մատչելիության բարելավումն է |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Պարտավորության կատարման շրջանակներում նախատեսվում է աստիճանաբար ավելացնել համայնքապետարանների կողմից տրամադրվող էլեկտրոնային ծառայությունների քանակը (հնարավորության դեպքում՝ դրանց տրամադրումը բնակիչներին իրականացնելով նաև առցանց եղանակով), մեկտեղել և ըստ բնագավառների խմբավորել դրանք համացանցային կայքերում:<br>Հանձնառության իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքային ծառայությունների որակի և հասանելիության բարելավում՝ դրանց վրա ծախսվող ժամանակի կրճատման, տրամադրման հարմարավետության ավելացման և հրապարակայնության ապահովման միջոցով |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | 15 000 000 ՀՀ դրամ |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Տեխնոլոգիա և նորարարություն |
| Ակնկալվող ազդեցություն | Կարճաժամկետ հատվածում՝ պարտավորության իրագործումը կնպաստի համայնքային վարչական ծառայությունների որակի և այդ ծառայություններից օգտվող բնակիչների հարմարավետության բարելավմանը:<br>Երկարաժամկետ հատվածում՝ համայնքային բնույթի ծառայությունների՝ էլեկտրոնային եղանակով տրամադրման ուղղությամբ իրականացված քայլերը բավարար հիմքեր կստեղծեն հետագայում պետական մարմինների նմանատիպ |

| | |
|---|---|
| | համակարգերի հետ փոխգործելիության ապահովման համար |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Հանրապետության 50 խոշորագույն համայնքներում, որոնց բնակչության թվաքանակների հանրագումարը կազմում է ավելի քան 1 200 000, համայնքային վարչական ծառայությունների՝ էլեկտրոնային եղանակով մատուցումը կնպաստի ծառայությունների տրամադրման որակի, հասանելիության և մատչելիության բարելավմանը |

| | |
|---|---|
| Հիմնական նպատակը | Բյուջեի իրատեսական ավելացում, բուժանձնակազմի կատարած աշխատանքի դիմաց համապատասխան բարեխիղճ վարձատրություն, աշխատողների բարոյական և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Բյուջեի ավելացում ՝ ամսական մոտ 2 մլն դրամի չափով, ինչը թույլ կտա բարելավել ստացիոնար և ամբուլատոր ծառայությունների որակը, որն էլ իր հերթին կբերի վճարովի հիվանդների թվի և սպասարկման ծավալների և տեսակների ավելացմանը: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Ամսական մոտ 2 մլն դրամով բյուջեի ավելացում |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Հաշվետվողականություն |
| Ակնկալվող ազդեցություն | կարճաժամկետ՝ բուժանձնակազմի բարոյահոգեբանական և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում, հիվանդների սպասարկման որակի բարձրացում, երկարաժամկետ՝ բարեկարգված շենքային պայմաններում հիվանդների բուժօգնության ապահովում որակյալ բուժարքավորումներով: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Ստուգումներ, աուդիտ և հարցումներ |

| **34** | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Վահե Խաչիկյան |
| Կազմակերպություն | ,ՀԿ Կենտրոնե ՔՀԶ ՀԿ |

| | |
|---|---|
| Կոնտակտային հեռախոս | 99680069 |
| Կոնտակտային էլ. փոստ | vahekhachikyan94@gmail.com |
| Սեռ | արական |
| Տարիք | 18-25 |
| Մարզ | ՀՀ մարզեր |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | Կարծում եմ լավ կլինի, եթե մինչև 2019թ-ի 3-րդ եռամսյակ ներ դրվեն այս առաջարկները: |
| Լիազոր մարմին | ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը տարիներ ի վեր գործարկում է առցանց դրամաշնորհային www.cragrer.am կայքը, որով դրամաշնորհներ են ստանում հիմնականում երիտասարդական և սկսնակ ՀԿ-ները:<br>Համակարգն առաջ է բերում մի շարք խնդիրներ՝ մանավանդ անփորձ կազմակերպությունների համար:<br>Կազմակերպությունը հարցեր ունենալու դեպքում կարող է միայն զանգահարել Նախարարության ծրագրերի իրականացման բաժին, սակայն հեռախոսով ասված տեղեկատվությունը հետագայում փաստարկել գրեթե անհնար է: Կան նախադեպեր, որ դիմումատու կառույցը զանգահարել է նախարարություն և հարցին ստացել է դրական պատասխան և այդպես դիմում է ներկայացրել, սակայն ծրագիրը մերժվել է, քանի որ այդ կետը սխալ է եղել:<br>Կա մեկ խնդիր ևս՝ նախարարությունը տեխնիկական պատճառով, օրինակ փաստաթուղթը սխալմամբ չկցելու համար մերժում է կառույցի ողջ ծրագիրը, հնարավորություն չտալով շտկել տեխնիկական խնդիրը:<br>Այս առաջարկը կլուծի մի քանի խնդիրներ,<br>- Դրամաշնորհի մասին հարցերին պատասխանողները կլինեն փաստարկված,<br>- Երիտասարդական կառույցները կկարողանան ստանալ առցանց և անվճար խորհրդատվություն,<br>- Կվերանա զուտ տեխնիկական պատճառներով ծրագրերի մերժումները,<br>- և այլն: |
| Հիմնական նպատակը | Առաջարկության նպատակն է՝ Նպաստել երիտասարդական, քիչ փորձառու |

| | |
|---|---|
| | ՀԿ-ների դրամաշնորհային ծրագրի առաջարկներ ներկայացնելու կարողությունների զարգացմանը և նվազագույնի հասցնել դրամաշնոհի մասին տրվող սխալ տեղեկատվության մակարդակը ՍԵՀՆ-ի կողմից: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Առաջարկում եմ ստեղծել ,24 ժամյա առցանց խորհրդատվական կենտրոնե, որը կգործի www.cragrer.am կայքում:<br>Համակարգը իրենից կներկայացնի ոլորտի փորձագետների և ՀԿ-ների ներկայացուցիչների chat☐ Կարևոր է նշել, որ հարցերը կարող են լինել միայն հայտադիմումների տեխնիկական մասերի վերաբերյալ:<br>Ինչպե՞ս է այն գործելու.<br>ՀԿ-ն իր մուտքանունով և գաղտնաբառով մուտք է գործում համակարգ և ստեղծված նոր բաժնում նշում է ոլորտը, որի մասին ունի հարց ու գրում է այդ հարցը, համապատասխան ոլորտի փորձագետնի ուղարկվում է ծանուցում հարցի մասին և նա պատասխանում է այդ հարցին՝ սեղմ ժամկետներում: Այս երկխոսությունը չի կարող ունենալ նամակները ջնջելու հնարավորություն, որով էլ կապահովվի տրամադրված տեղեկատվության հետագա փաստարկվածությունը:<br>Հաջորդ առաջարկը ծրագրերի տեխնիկական վրիպակների պատճառով մերժելու մասին է: Առաջարկում եմ տեխնիկական վրիպկների առկայության դեպքում ՀԿ-ին տալ հնարավորություն 1 օրվա ժամկետում www.cragrer.am կայքի հայտադիմումում շտկել տեխնիկական խնդիրը, օրինակ՝ ավելացնել սխալմամբ չկցված փաստաթղթերը: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Կարծում եմ այս կետր ճիշտ կլինի ներկայացնի Սպորտի և երիտասարդության հարցրեի նախարարությունը: |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Տեխնոլոգիա և նորարարություն |
| Ակնկալվող ազդեցություն | Առաջարկությունների իրականացման արդյունքում կբարձրանա վստահությունը նախարարության հանդեպ, ինչպես նաև ՀԿ-ների շահագրգռվածությունը դիմելու առցանց դրամաշնորհային համակարգին: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Առաջարկության ազդեցությունն ու արդյունավետությունը կարելի է չափել մի քանի ձևով՝ |

| | |
|---|---|
| | - ,24 ժամյա առցանց խորհրդատվական կենտրոնե դիմածների և հարցերի լուծում ստանալու քանակով,<br>- Դրամաշնորհի դիմող ՀԿ-ների քանակով,<br>- Թերի փաստաթղթերի լրամշակման քանակով<br>- և այլն: |

| 35 | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Սուսաննա Մակարյան |
| Կազմակերպություն | Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի կառավարման քաղաքականության վարչություն, |
| Կոնտակտային հեռախոս | 011 527390 |
| Կոնտակտային էլ. փոստ | susanna.makaryan@mail.ru |
| Սեռ | |
| Տարիք | |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | 2018, ավարտ 2019 թվականի առաջին կիսամյակ |
| Լիազոր մարմին | Պետական գույքի կառավարման կոմիտեի ,Աճուրդի կենտրոնե ՊՈԱԿ |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն, Մասնավոր հատված |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Այժմ աճուրդային գործընթացն իրականացվում է ոչ էլեկտրոնային տարբերակով, մեծ է կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև վարչական քաշքշուկները: Նոր համակարգը հնարավորություն կտա պետական գույքը վաճառել էլեկտրոնային եղանակով, դրանով իսկ նպաստելով գործարքների թափանցիկությանը, հանրության լայն շրջանակներին տեղեկատվության հասանելիությանը, դրամական միջոցների փոխանցման ժամանակի կրճատմանը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացմանը, մրցակցային առավելություններին, պետական գույքի վաճառքի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ծախսերի կրճատմանը: Կավելանա ՀՀ պետական բյուջեի մուտքերը: |
| Հիմնական նպատակը | Հնարավորություն ընձեռնել հասարակության լայն շրջանակներին մասնակցել |

| | |
|---|---|
| | պետական գույքի աճուրդներին նաև էլեկտրոնային տարբերակով: Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման համակարգը հնարավորություն կտա հանրությանը առցանց եղանակով դիմել և մասնակցել Կոմիտեի կողմից հայտարարվող աճուրդներին, հետևել դրանց ընթացքին՝ նվազագույնի հասցնելով պետական ծառայող-քաղաքացի անմիջական շփումների անհրաժեշտությունը: Էլեկտրոնային աճուրդի ներդրման շնորհիվ էականորեն կբարելավի ծառայությունների մատուցման որակը, կվերանան վարչական քաշքշուկները, գործընթացը կդառնա ավելի մրցակցային, կապված մասնակիցների թվաքանակի աճի հետ, հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի իր բնակության վայրից կարող է մասնակցել պետական գույքի վաճառքին և այլն: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Կոմիտեի կողմից օտարման գործընթացը կանոնակարգող ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882 որոշման մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ, որով հաստատված կարգի 6-րդ գլուխը՝ ,VI. Գույքի օտարման նպատակով էլեկտրոնային աճուրդի անցկացումըե ներկայացվել է նոր խմբագրությամբ: Էլեկտրոնային աճուրդով վաճառքի ծրագրի ներդրման համար Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի միջոցներից նախատեսվել է 29 մլն 56 հազ. դրամ: Վերոգրյալ ծրագրերի ներդրման գործընթացն արդեն իսկ սկսված է, դրանց վերջնական կիրարկումը նախատեսվում է իրականացնել 2019 թվականի առաջին կիսամյակում: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Էլեկտրոնային աճուրդներն իրականացնելու համար կազմվել է աճուրդի կայքի ստեղծման և սպասարկման, ինչպես նաև սերվերի ձեռքբերման ու սպասարկման նախնական հաշվարկ, որի մեջ մտնում է կայքի գլխավոր էջի, ներսի տեղեկատվական էջերի, հաճախորդների գրանցման էջերի, ադմինիստրատորի էջերի ձևավորումը, կայքի ծրագրավորումը, կայքի և տվյալների բազայի կառուցվածքի մշակումը, ինչպես նաև սպասարկումը: Նախատեսված են նաև սերվերի ծախսեր՝ սերվերի ձեռքբերումը, սնուցման համակարգը, ինտերնետ ապահովվածությունը, սերվերի առաջնային կարգավորումը և սպասարկումը: |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր | Թափանցիկություն |

| | |
|---|---|
| մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | |
| Ակնկալվող ազդեցություն | ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացում, ծառայությունների մատուցման որակի բարձրացում: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Չափորոշիչները հետևյալն են.<br>մեկնարկային գնի նկատմամբ վաճառքի գնի հարաբերակցությունը,<br>վաճառքի իրականացման ժամկետի կրճատումը,<br>աճուրդի կայացման տոկոսը: |

| **37** | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Գարուշ Դավթյան |
| Կազմակերպություն | Քաղաքացիական ծառայության գրասենյակ |
| Կոնտակտային հեռախոս | 55426371 |
| Կոնտակտային էլ. փոստ | g_buniatyan@mul.gov.am |
| Սեռ | արական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | Հոկտեմբեր 2018-Փետրվար 2019 |
| Լիազոր մարմին | Վարչապետի աշխատակազմի Քաղծառայության գրասենյակ |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Քաղաքացիական ծառայության համակարգի թափանցիկությունն ու հաշվետվողականության մակարդակը անհրաժեշտ է բարձրացնել: Հասարակության, այդ թվում ՔԼՄ-ների շրջանում թույլ է նոր Քաղծառայության օրենսդրության և հարակից կարգերի մասին իրազեկվածությունը: Այդուհանդերձ, հարկ ենք համարում ուշադրության արժանացնել այս կարևոր խնդրին և համապատասխան կայուն և շարունակական լուծումներ առաջարկել: |
| Հիմնական նպատակը | Հիմնական նպատակն է թափանցիկ քաղաքացիական ծառայության ստեղծումը, որտեղ յուրաքանչյուր քայլ, սկսած մրցույթից, մինչև |

| | |
|---|---|
| | առաջխաղացումներ, թափանցիկ կլինեն քաղաքացիների, քաղծառայողների և հասարակական միավորների համար։ Գտնում ենք, որ նախևառաջ ՔԾ համակարգի լուսաբանումը պետք է պատշաճ իրականացնեն հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումները։ ՔԾ համակարգի հնարավորությունների մասին իրազեկվածությունը, որպես գործատու՝ պետության վարկանիշի բարձրացումը արհետսավարժ կադրերի միջոցով, կապահովի որակյալ կադրերի ներհոսքը դեպի պետական համակարգ, որն էլ իր հերթին կնպաստի թե՛ երկրի կայուն զարգացմանը, թե՛ կոռուպցիայի կանխարգելմանը։ Իրազեկ քաղաքացին և քաղծառայողը՝ կայուն պետականության գրավականն են։ |
| Պարտավորության համառոտ նկարագիր | 1.1 Նախաձեռնության շրջանակներում նախատեսվում են "Բաց քաղաքացիական ծառայություն" թեմայով վերապատրաստումներ համապատասխան պետական թվով 72 մարմինների հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների հետ։<br>1.2 Նախատեսվում է մշակել և հանրության և մասնագիտական շրջանակներում տարածել ուղեցույցեր՝ նոր կանոնակարգերի լուսաբանման նպատակով։<br>1.3 Նախատեսվում է անցկացնել սեմինար-հանդիպումներ՝ համապատասխան պետական թվով 72 մարմինների մարդկային ռեսուրսների կառավարիչների հետ՝ քաղաքացիական ծառայության գործիքների կիրառելիության աջակցության նպատակով։ |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ)։ | 1.1 Վերապատրաստումներ՝ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների աշխատակիցների հետ։<br>Հաշվարկ՝ 72 մարմնից 2-ական աշխատակից=144 մասնակից, որոնց համար նախատեսվում է անցկացնել 2 օր (ընդհանուր 16 ժամ տևողությամբ) դասընթացներ☐ Մասնակիցները կբաժանվեն 8 խմբի (ընդհանուր 128 ժամ) ☐ Դասընթացավարների մեկ ժամի արժեքն է 20.000 ՀՀԴ, որն էլ կկազմի 2.560. 000 ՀՀԴ.։ Վերապատրաստումները կանցկացվեն ՔԾԳ-ի դահլիճում։ 2 սուրճի ընդմիջումները և ճաշի ընդմիջումը մեկ հոգու հաշվարկով կկազմի՝ 6500 ՀՀԴ |

| | |
|---|---|
| | օրեկան՝ընդհանուր 144 հոգի/2 օր՝ 1.872.000 ՀՀԴ: Ընդհոնուր վերապատրաստման բյուջեն կկազմի՝ 4.432.000 ՀՀԴ:<br>1.2 Ուղեցույցերի մշակում և տարածում՝ 2 փորձագետ՝ օրեկան 40 եվրո x 40 աշխատանքային օր = 3200 եվրո:<br>1.3 Սեմինար-հանդիպումներ՝ 72 մարմինների մադրկային ռեսուրսների կառավարիչների հետ: Հաշվարկ՝ 72 մարմնից 2-ական աշխատակից=144 մասնակից, որոնց համար նախատեսվում է անցկացնել 3 օր (ընդհանուր 24 ժամ տևողությամբ) դասընթացներ: Մասնակիցները կբաժանվեն 7 խմբի (ընդհանուր 168 ժամ) ☐ Դասընթացավարների մեկ ժամի արժեքն է 20.000 ՀՀԴ, որն էլ կկազմի<br>3.360.000 ՀՀԴ: 2 սուրճի ընդմիջումները և ճաշի ընդմիջումը մեկ հոգու հաշվարկով կկազմի՝ 6500 ՀՀԴ օրեկան՝ընդհանուր 144 հոգի/3 օր 2.808.000 ՀՀԴ: Սեմինարի ընդհանուր բյուջեն կկազմի 6.168.000 ՀՀԴ: |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Թափանցիկություն |
| Ակնկալվող ազդեցություն | Առաջարկված պարտավորությունները նախևառաջ կբարձրացնեն քաղծառայողների կոմպետենցիաների մակարդակը՝ համակարգի կանոնակարգերի, թափանցիկ աշխատելաոճի, հաշվետվողականության վերաբերյալ:<br>Մշակվող ուղեցույցերը սկիզբ կդնեն քաղծառայության համակարգի վերաբերյալ շարունակաբար թարմացվող տեղեկատվության առցանց տրամադրման, որն էլ կապահովի համակարգի մատչելիությունը հասարակության բոլոր անդամների համար:<br>Քանի որ քաղացիական ծառայության մասին նոր 2018թ-ի օրենքը մեծ լիազորություններ և պարտականություններ է նախատեսում մարմինների մարդկային ռեսուրսների կառավարիչների համար, ակնկալվում է, որ այս սեմինար-աշխատանքային հանդիպումները կնպաստեն կառավարիչների մասնագիտական որակների, իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, |

| | |
|---|---|
| | ինչպես նաև բաց և թափանցիկ աշխատելու սկզբունքների որդեգրմանը: Նոր կանոնակարգերի ավելի մատչելի՝ հարցուպատասխանի ձևով բացատրությունը նրանց աշխատանքը կդարձնի ավելի արդյունավետ: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Նախատեսվում է մշտադիտարկել վերապատրաստումները և սեմինար-հանդիպումները՝ դրանց անցկացման ընթացքում: Բանավոր կարծիքներ հավաքագրել մասնակիցներից: Այնուհետև, նախատեսվում է մշակել գնահատման հարցաթերթիկներ, որոնք կբաժանվեն մասնակիցներին՝ յուրաքանչյուր վերապատրաստումից և սեմինար հանդիպումից հետո: Այդ հարցաթերթիկները կպարունակեն փակ հարցեր՝ գնահատման որոշակի միավորով կամ սանդղակով, ինչպես նաև բաց հարցեր՝ սեփական կարծիքների և առաջարկությունների համար: Հիմնվելով վերապատրաստումների և սեմինարների գնահատականների և ընթացիկ մշտադիտարկման վրա, ծրագրի պատասխանատուները կներկայացնեն համապատասխան ամփոփ հաշվետվություն՝ արդյունքների գնահատում:<br>Իսկ ուղեցույցերի մշակման արդյունավետությունը նախատեսվում է գնահատել դրանից օգտվողներին հնարավորություն ընձեռելով՝ առցանց նամակ հարցումներ կատարել և/կամ գնահատել ուղեցույցի օգտավետությունը՝ դրանից օգտվելուց հետո: |

| **38** | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Մարիամ Գալստյան |
| Կազմակերպություն | ՀՀ արդարադատության նախարարություն |
| Կոնտակտային հեռախոս | 10594022 |
| Կոնտակտային էլ. փոստ | mariam_galstyan@yahoo.com |
| Սեռ | իգական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և | 01-01-2019 - 20-12-2019 |

| | |
|---|---|
| ավարտի ժամկետը | |
| Լիազոր մարմին | ՀՀ վարչապետի աշխատակազմ |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն, Մասնավոր հատված |
| Կարգավորման ենթակա խնդիրը | ՀՀ կառավարության նիստերի օրակարգերը, ՀՀ վարչապետի որոշումները, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումները հրապարակվում են www.e-gov.am հարթակում: Ընդ որում, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքը Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում հրապարակման պարտադիր պահանջ սահմանում է բացառապես նորմատիվ իրավական ակտերի համար: Չնայած այն հանգամանքին, որ ներքին և անհատական իրավական ակտերը նույնպես երբեմն հրապարակվում են տվյալ հարթակում, այնուամենայնիվ, հարցը թողնված է ակտն ընդունող մարմնի հայեցողությանը: Ուստի, այս պարագայում e-gov.am կայքը հանդիսանում է այն միակ հարթակը, որտեղ զետեղված են ոչ միայն ՀՀ կառավարության և վարչապետի ընդունած բոլոր որոշումները, այլ և նիստերի ընթացքում քննարկվող նախագծերը՝ համապատասխան հիմնավորումներով: Այս համատեքստում այն հանգամանքը, որ e-gov.am կայքը տեխնիկական հնարավորություն չի ընձեռում <<որոնում>> կոճակով փնտրելու անհրաժեշտ տեղեկատվությունը, ստեղծում է մի շարք արհեստական խոչընդոտներ, այդ թվում՝ ժամանակի վատնում, ոչ միայն քաղաքացիների, այլ նաև հենց հանրային ծառայողների համար, ովքեր աշխատանքի բերումով օրվա ընթացքում բազմաթիվ անգամներ առերեսվում են այս խնդրին: |
| Հիմնական նպատակը | Բարձրացնել կառավարության գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը՝ e-gov.am հարթակի իրավական ակտերի, կառավարության նիստի օրակարգերի բաժինը օգտատերերի համար հարմարավետ (user friendly) և առավել մատչելի դարձնելու միջոցով: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Առաջարկվում է e-gov.am հարթակի իրավական ակտերի, կառավարության նիստի օրակարգերի բաժինը դարձնել օգտատերերի համար հարմարավետ (user friendly) և առավել մատչելի՝ բաժնում նախատեսելով որոնման համակարգ ամբողջ բաժնում առկա տեղեկատվությունը որոնելու հնարավորությամբ: |
| Պարտավորության իրականացման համար | Անհրաժեշտ է քննարկել SS մասնագետների հետ: |

| | |
|---|---|
| անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Թափանցիկություն |
| Ակնկալվող ազդեցություն | Կնպաստի կառավարության գործունեության թափանցիկության բարձրացմանը, կնվազեցնի քաղաքացիների և հանրային ծառայողների արհեստական բեռը: |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | 1.Տեխնիկական նկարագրի մշակում: 2.Հանրային քննարկումների կազմակերպում: 3. Հնարավորության ստեղծում: |

| 41 | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Մարիամ Խաչատրյան |
| Կազմակերպություն | |
| Կոնտակտային հեռախոս | 55820654 |
| Կոնտակտային էլ. փոստ | m.xachatryan2011@yandex.ru |
| Սեռ | իգական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | ՀՀ մարզեր |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | 1 ամիս |
| Լիազոր մարմին | Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն, Քաղաքացիական հասարակություն, Մասնավոր հատված |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Կարևոր տարածաշրջանային նշանակություն ունի: Նպաստում է ներկա վիճակի բարելավմանն ու առաջընթացին: |
| Հիմնական նպատակը | Նորույթ, որ չկա ամբողջ աշխարհում |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Երևան քաղաքին շատ մոտ մի վայր, որը յուրաքանչյուրը կցանկան տեսնել, թե տեղաբնակները, թե զբոսաշրջիկները: |

| | |
|---|---|
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Չկա հաշվարկ, քանի որ ներդնողը կարող է նաև հետագայում շահույթ ակնկալել, այսինքն փոխշահավետ ներդրում: |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Տեխնոլոգիա և նորարարություն |
| Ակնկալվող ազդեցություն | Բնակավայրի ճանաչում ու զարգացում, զբոսաշրջության խթանում |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության  ազդեցությունը: | Բացառիկություն, որով կառանձնանա և առաջ կընթանա: |

| 42 | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Գարուշ Դավթյան |
| Կազմակերպություն | Քաղաքացիական ծառայության գրասենյակ |
| Կոնտակտային հեռախոս | 55426371 |
| Կոնտակտային էլ.  փոստ | g_buniatyan@mul.gov.am |
| Սեռ | արական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | 2019թ-ի հունվար- 2019թ-ի դեկտեմբեր |
| Լիազոր մարմին | ՀՀ վարչապետի աշխատակազմ |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | ՀՀ մարզերում կառավարման նորարարությունների և հասարակայնության հետ բաց աշխատանքի հիմքերը թույլ են, այդուհանդերձ անհրաժեշտ ենք համարում աշխատել այս ուղղությամբ: Մարզերի քաղաքացիական ծառայողներին՝ բաց կառավարման նորարար մոդելների հետ ծանոթացումը, դրանց իրավաչափության ներկայացումը կենսական նշանակություն ունի քաղծառայություն -հասարակություն երկխոսության, արդյունավետ համագործակցության և լավագույն կադրեր ներգրավելու գործում: Քաղծառայողները կաշկանդված են սեփական փորձից ելնելով՝ նոր |

| | |
|---|---|
| | գաղափարներ առաջարկելու մեջ, որպեսզի բարձրացնեն տրամադրվող ծառայությունների որակը: |
| Հիմնական նպատակը | Հիմնական նպատակն է ներմուծել բաց կառավարման նորարարական մոդելների հասկացությունը ամենօրյա պրակտիկա, վերապատրաստել քաղծառայողներին՝ հասարակության հետ արդյունավետ աշխատանքի մեջ և ունենալ միջազգային ստանդարտներին համապատասխան և միասնական քաղծառայություն՝ թե՛ կենտրոնական և թե՛ մարզային մակարդակներում: Ինչպես նաև, ծրագրի նպատակն է բաց կառավարման տեղական նախաձեռնությունների վերհանումը, զրագացումը և կիրառումը: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Ծրագիրը նախատեսում է անցկացնել սեմինարների շարք մարզերում՝ "Քաղաքացիական ծառայության համակարգում բաց կառավարման մոդելներ" թեմայով: Թեման կներառի մի քանի ենթախորագրեր, որոնց շուրջ կանցկացվեն սեմինար-քննարկումներ: Յուրաքանչյուր մարզպետարանից նախատեսվում է հրավիրել 3-ական հոգի անցկացնել ընդհանուր 24 ժամ (3 օր) տևողությամբ սեմինար-քննարկումներ:<br>Սեմինարներն արդյունավետ դարձնելու նպատակով, մասնակիցները կբաժանվեն 2 խմբի: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Դասընթացավարներ՝ 20.000 ՀՀԴ մեկ ժամի հաշվարկով 24 ժամ տևողությամբ = 480.000 ՀՀԴ՝ մեկ խմբի համար* 2 դասընթացավար=960.000 ՀՀԴ:<br>Երկու սուրճի ընդմիջում և մեկ ճաշ՝ 6500 ՀՀԴ մեկ հոգու հաշվարկով * 30 հոգի * 3 օր = 585.000 ՀՀԴ:<br>Ծրագրի ազդեցության գնահատման նպատակով համապատասխան փոփոխականների հիման վրա հարցաթերթիկների մշակում, արդյունքների ամփոփում (5 օր* 2 փորձագետ *25.000 ՀՀԴ մեկ օրվա համար հաշվարկով = 250.000 ՀՀԴ )☐<br>Ծրագրի ավարտից վեց ամիս անց անցկացված նույն հարցախույզերի ամփոփում, վերլուծում և առաջարկությունների ներկայացում: (5 օր* 2 փորձագետ *25.000 ՀՀԴ մեկ օրվա համար հաշվարկով = 250.000 ՀՀԴ )☐<br>Հարցախույզն իրականացնող վարձու աշխատողներ. 20 օր*10.000 ՀՀԴ *4 |

| | |
|---|---|
| | աշխատող= 800.000 ՀՀԴ<br>Ընդհանուր բյուջեն կկազմի՝ 2.845.000 ՀՀԴ։ |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Թափանցիկություն |
| Ակնկալվող ազդեցություն | Կարճաժամկետ առումով՝ կունենանք վերապատրաստված քաղծառայողներ, որոնք տեղյակ կլինեն բաց կառավարման մոդելների և կկիրառեն դրանք ամենօրյա աշխատանքի մեջ։ Իսկ երկարաժամկետ առումով, կունենանք քաղծառայություն- հասարակություն արդյունավետ համագործակցության մոդել, որը օգուտ կբերի թե՛ քաղծառայությանը՝ լավագույն կադրերի գրավման առումով, և թե՛ հասարակությանը՝ սեփական խնդիրներին և հարցումների ավելի արագ արձագանքելու հնարավորությամբ, լավագույն և սպառիչ ծառայություններ ստանալով քաղծառայողներից ամենամոտ կառավարչական մարմնից։ |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Պարտավորության ազդեցությունը գնահատելու նպատակով, ծրագրի մեկնարկից առաջ 10 օրվա ընթացքում կմշակվեն հարցաթերթիկներ՝ շահառուների հետ հարցախույզեր անցկացնելու նպատակով։ Ծրագրի ավարտից վեց ամիս անց, նույն հարցազրույցը 10 օրվա ընթացքում կանցկացվի և կիրականացվի համեմատական վերլուծություն։ |

| **43** | |
|---|---|
| Գաղափարի հեղինակ (Անուն ազգանուն) | Գարուշ Դավթյան |
| Կազմակերպություն | Քաղաքացիական ծառայության գրասենյակ |
| Կոնտակտային հեռախոս | 55426371 |
| Կոնտակտային էլ. փոստ | g_buniatyan@mul.gov.am |
| Սեռ | արական |
| Տարիք | 25-40 |
| Մարզ | Երևան |
| Ձեր առաջարկած պարտավորության մեկնարկի և ավարտի ժամկետը | Հունվար 2020-դեկտեմբեր 2020 |

| | |
|---|---|
| Լիազոր մարմին | ՀՀ վարչապետի աշխատակազմ |
| Շահագրգիռ մարմիններ | Կառավարություն |
| Կարգավորման ենթակա խնդիրը | Քաղաքացիական ծառայության էլեկտրոնային հարթակը մինչ օրս գործել է զուտ տեղեկտավություն տրամադրելու նպատակով: Քաղաքացիական ծառայության գրասենյակի նոր քաղաքականության մեջ է մտնում նաև այնպիսի էլեկտրոնային հարթակի ստեղծումը, որը կծառայի որպես ինտերակտիվ գործիք ՝ թե՛ թեստավորման, թե՛ վերապատրաստումների, թե՛ առցանց քննարկումների և գաղափարների վարկանիշի ձևավորման առումով: |
| Հիմնական նպատակը | "Զարգացող քաղաքացիական ծառայության" հիմնական նպատակն է քայլել 21րդ դարի պահանջներին ընդհառաջ, անել ամեն ինչ, որպեսզի քաղ. ծառայությունը լինի մրցունակ, զարգացած, մատչելի և արդյունավետ: |
| Պարտավորության համառոտ նկարագիր | Նախնառաջ կիրականացվի վերապատրաստումների ազատ էլեկտրոնային հարթակի գործարկում: Քաղծառայողները հնարավորություն կունենան առցանց անցնել սահմանված վերապատրաստումների ծրագրեր, որոնք և՛ ժամանակ կխնայեն և՛ ծախսեր:<br>Էլեկտրոնային հարթակում կտեղադրվեն քաղաքացիական ծառայության զարգացմանը միտված նոր թեմաներ և կանցկացվեն առցանց քննարկումներ, գաղափարների և առաջարկությունների ընդունում:<br>Կլինեն մեթոդական օրեր՝ "Քաղծառայության գրասենյակը օնլայն է" հայտարարությամբ, որոնց ընթացքում թե՛ քաղծառայողները և թե՛ քաղաքացիները հնարավորություն կունեն առցանց հարցում կատարել և զրուցել քաղծառայության գրասենյակի պատասխանատուների հետ:<br>Առաջարկված գաղափարները կդրվեն քվեարկության տվյալ հարթակում և ստանալով համապատասխան վարկանիշ՝ ընթացք կստանան կամ ընդհակառակն՝ կհանվեն շրջանառությունից:<br>Մոտավոր բյուջեն կկազմի 4800 եվրո: |
| Պարտավորության իրականացման համար անհրաժեշտ գումար (Խնդրում ենք նշել մոտավոր հաշվարկ): | Հարթակի գործարկում՝ 20 օր* 40 եվրո* 2 SS փորձագետ= 1600 եվրո<br>Նոր թեմաների տեղադրում, առցանց քննարկումներ, մեթոդական օրեր, գաղափարների վարկանիշավորում. 40 օր*2 փորձագետ*40 եվրո=3200 եվրո<br>Հեռավարա ուսուցման հարթակի ծրագրային սպասարկում՝ մեկ տարվա համար՝ 2000 եվրո: |

| | |
|---|---|
| | Ընդհանուր բյուջեն՝ 6800 եվրո։ |
| Բաց Կառավարման Գործընկերության (ԲԿԳ) ո՞ր մարտահրավերներից է բխում պարտավորությունը: | Հանրային մասնակցություն |
| Ակնկալվող ազդեցություն | Կարճաժամկետ առումով՝ քաղծառայության համակարգի արագ զարգացման հնարավորություն՝ հանրային մասնակցության շնորհիվ։ Քաղծառայության թափանցիկության ապահովում՝ առցանց քննարկումների և մեթոդական օրերի միջոցով։ Իսկ երկարաժամկետ առումով՝ նախաձեռնությունը կնպաստի քաղծառայության առաջադեմ, ճկուն, միջազգային ստանդարտներին համապատասխան համակարգի ստեղծմանը,ինչպես նաև քաղծառայության քաղաքականության հետադարձ կապի ապահովմանը։ |
| Ինչպե՞ս հնարավոր կլինի չափել առաջարկած պարտավորության ազդեցությունը: | Վերապատրաստումներից օգտվողների քանակը կգրանցվի և կվերլուծվի՝ քաղծառայողների թվի և վերապատրաստման ենթակա քաղծառայողների թվի համեմատ։<br>Առցանց քննարկումների և գաղափարների քննարկումների ամփոփ տեղեկատվությունը կհրապարակվի կայքում։<br>Կհրապարակվեն նաև "քաղծառայության գրասենյակը օնլայն է" նախաձեռնության արդյունքները. ակտիվությունը, հարցումների քանակը։ Այս նախաձեռնությունը կունենա նաև գնահատման հնարավորություն հարցուպատասխանի վերջում, որի արդյունքները նույնպես կամփոփվեն ու կհրապարակվեն։ |